


891.99.09

0-8

ՀՈԿՍԵՓ ՕՐԲԵԼԻ



Գ Ի Տ Ա Կ Ա Ն  
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

891.59.04

0-84

28 DEC 2008

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՅՑՈՒԹՅԱՆ ԻՆՏԵՆՍԻՎՈՒՄ

ՀՈՎԱՍԵՓ ՕՐԲԵԼԻ

**ԳԻՏԱԿԱՆ  
ՈՒՍՈՒՄՆԱԿՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

ԵՐԵՎԱՆ

«ՆՈՐ - ԳԱՐ» հրատարակչություն

2008

ՀՏԴ 891. 981 Գ. Օրբելի  
ԳՍԴ 83. 37  
Օ 842

Հրատարակվել է պետական պատվերով  
Կազմեց ԱՐԳՍՐ ԱՓԻՆՅԱՆԸ

Օ 842 Օրբելի Հովսեփ  
Գիտական ուսումնասիրություններ եր.,  
Նոր-Ղար, 2008, 160 էջ:

Հայ նշանավոր արևելագետ, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս, Հայաստանի Գիտությունների ակադեմիայի առաջին պրեզիդենտ (1943-47) Հովսեփ Արզա-րի Օրբելիին (1887-1961) րացառիկ դեր ունի հայրենական գիտության զարգացման գործում:

Հովսեփ Օրբելյու ուսումնասիրությունները վերաբերում են հայագիտու-յան առանցքային խնդիրներին: Նա հայ վիճագրության հիմնադիրն է: Զբաղվել է բանահավաքությամբ, քարրատագիտությամբ, խմբագրել է հայկական հերոսական էպոսի համահավաք բնագիրը, ուսումնասիրել Աղ-թամարի տաճարի, Աճիի և շրջակայքի ճարտարապետական արժեքները: Հովսեփ Օրբելյու թարգմանությամբ ուսներեն հրատարակվել են հայ միջնա-դարյան առակները, Եղիշեի «Վարդանի և հայոց պատերազմի մասին» և այլ գրական հուշարձաններ:

Ներկա հատորում նպատակահարմար ենք համարել զետեղել ականա-վոր գիտնականի «Հայկական հերոսական էպոսը», «Հայկական վիճագիր արձանագրությունների գիտական նշանակությունը» և «Աճիի ավերակնե-րը» ուսումնասիրությունները:

Հատորը նվիրվում է Օրբելի եղբայրների անմահ հիշատակին:

ԳՍԴ 83. 37

ISBN 978-99941-35-68-2



«ՆՈՐ- ՂԱՐ» հրատ. 2008 թ.

4646-2008

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԵՐՈՄԱԿԱՆ ԷՊՈՍԸ

---

## ՀԱՅԿԱԿԱՆ ՀԵՐՈՄԱԿԱՆ ԷՊՈՍԸ



## Նախաբան

**Ճ**այ ժողովուրդը դարերի ընթացքում ստեղծել է **Իբազմաթիվ դյուցազներգություններ**, որոնց մեջ ամենաբնորոշը, առավել նշանակալիցը, ամենից ավելի արտահայտիչն ու հերոսականը, մեծն ու համայնապարփակը «Սասունցի Դավիթ» էպոսն է:

«Սասունցի Դավիթ» էպոսը հայ ժողովրդական ավանդության մեջ, բանասացների բերանում կրում է մի քանի անուն, որոնք և ընդգծում են նրա միասնությունն ու ամբողջականությունը:

Էպոսը կոչվում է «Սասնա ծռեր»: «Օտու» քառը հայերենում ունի մի քանի նշանակություն՝ դիվահար, խենթավուն, խելահեղ քաջ, և իմաստային այս տարբերակներից յուրաքանչյուրը էպոսի հերոսների համար բնորոշ է նրանց կյանքի այս կամ այն պարագայում:

Էպոսն անվանում են նաև «Ջոջանց տուն», այսինքն «Մեծերի տուն» (տարիքով և դիրքով ավագների), «Հսկաների տուն»:

Կա ևս մի անուն՝ «Քաջանց տուն», որ նշանակում է «քաջերի տուն», կամ դրսևորում է էպոսի առնչությունը քաջքերին, ոգիներին վերաբերող մի շարք ավանդությունների հետ: Այդ քաջանց տոհմին պատկանող կանանցից է ծնվում հերոսների երեք կրտսեր սերունդ:

Ինչպես Մուրոմցի Իլյան ոչ թե Մուրոմի, այլ ամբողջ Ռուսաստանի հերոսն է, այնպես էլ Սասունցի Դավիթը ոչ միայն

Սասնա, այև ամբողջ Հայաստանի հերոսն է:

Միշտ չէ, որ բանասացներն էպոսը լրիվ են հաղորդում. նրանք հաճախ պատմում են միայն մեկ կամ երկու հատված, էպոսի միասնությունն ընդգծելով այն ողորմիսներով, որոնք փառաբանում են մնացած բոլոր հերոսներին: Պատմվող հատվածը կոչվում է այն հերոսի անունով, որի մասին հյուսված է էպոսի տվյալ ճյուղը:

Էպոսի հիմնական մասը երրորդ ճյուղն է, որն անմիջակա՝ նորեն կապված է ամբողջ դյուցազնաշրջանի չորս սերնդի հերոսներից գլխավորի, ըստ ավանդության երրորդ դյուցազնի Ռավթի եետ, որն առավել մոտ ու հարազատ է ժողովրդի սրտին, նրա հիշողության մեջ առավել փայփայված, առավել երկրային, ամենից ավելի ժողովրդական:

Էպոս ասացողները, տղամարդ թե կին, գերազանցապես եղել են ավագ սերնդի ներկայացուցիչներ, հաճախ այեզարդ ծերունիներ: Էպոսը նրանք պատմել են հայկական տարրեր բարբառներով, մեծ մասամբ Սոկաց, Մշո, Սասնա, ինչպես և արարատյան բարբառներով:

«Սասունցի Ռավիթը» պատմվում է երգածայն, ռիթմիկ առոգանությամբ, իսկ նրա առանձին դրվագներ երգվում են և հանգավոր բանաստեղծության ձև ունեն: Միմյանցից երբեմն շատ հեռու բարբառներից յուրաքանչյուրի բնորոշ առանձնահատկությունը ավելի ցայտուն է դրսևորվում էպոսի չերգվող մասերում, քանի որ մեղեդու, հանգի և չափի հետ կապված երգի մեջ միշտ էլ ավելի լավ է պահպանվում հնագույն տեքստը:

Սոս երեք քառորդ դար է հավաքվում և գրի են առնվում «Սասունցի Ռավթի» տարբեր վարիանտները: Այդ գործի առաջին նախածեռնողը եղել է հայ ժողովրդի բանահյուսության հայտնի հետազոտող Գարեգին Սրվանձտյանը. Այնուհետև նույն գործը շարունակել են մի շարք մարդիկ, և առաջին հերթին հայ անվանի գիտնական, Հայկական ՍՍՌ

Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ հանգուցյալ պրոֆեսոր Մանուկ Աբեղյանը, որն էպոսի վարիանտներից մեկը գրի է առել 1886 թվականին, Վաղարշապատում, և այնուհետև մի ամբողջ հիսնամյակի ընթացքում բազմիցս անդրադարձել է էպոսին, նրա մասին գրել երկու ծավալուն ուսումնասիրություն:

Բանահավաքներից ոմանք գրի են առել էպոսի բոլոր չորս ճյուղերը, ոմանք էլ միայն նրա առանձին մասերը:

Ի մի հավաքված նյութերը կազմում են շուրջ երկու և կես հազար տպագիր էջ և ունեն ավելի քան հիսուն վարիանտ:

Տարբեր ժամանակ հրատարակված բազմաթիվ վարիանտներից բացի, «Սասունցի Դավիթ» էպոսն ունի երկու հիմնական հրատարակություն: Դրանցից առաջինը, որ լույս է տեսել Մ.Աբեղյանի ընդհանուր խմբագրությամբ և Կ.Սելիք-Օհանջանյանի աշխատակցությամբ, բաղկացած է երկու ստվար հատորից, որտեղ զետեղված են էպոսի բոլոր տպագիր և անտիպ վարիանտները (1936, 1944, և 1951 թթ.): Երկրորդը ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի Հայկական ֆիլիալի Գրականության և լեզվի ինստիտուտի կողմից պատրաստված և 1939 թվականին տպագրված «Սասունցի Դավիթ» համահավաք տեքստն է, որ պարունակում է ավելի քան տաս հազար տող (կազմողներ՝ Մ. Աբեղյան, Գ. Ա. Արով և Ս. Տ. Ղանալանյան, խմբագրություն և առաջաբան ակադեմիկոս Հ. Ա. Օրբելու):

«Սասունցի Դավիթ» էպոսում չորս սերնդի պատկանող հերոսներ, միմյանց լրացնելով, ավելի ճիշտ միասին մի ամբողջություն կազմելով, արտացոլել են իրենց կերպարներն ստեղծող ժողովրդի պատկերացումները, նրա լավագույն երազանքներն ու ակնկալությունները:

Այդ կերպարների մեջ ժողովուրդը մարմնավորել է նաև այն մարդկանց ընդհանուր հայացքները, ովքեր պատերազմ չեն հրահրում, բայց ստիպված են կռվել, ովքեր չեն ուզում

հեղել ոչ իրենց, ոչ էլ այլոց արյունը ի հաճույս իշխելու տենդով բռնված զավթիչների: Այդ հայացքները խարսխված են այն դարավոր փորձի վրա, որ ժողովուրդը ձեռք է բերել կործանարար պատերազմների, ասպատակությունների, արյունահեղ կոտորածների, օտար նվաճողների և սեփական թագավորների լծի ներքո կրած տառապանքների բովում:

Մեզ առանձնապես մոտ և հասկանալի է ժողովրդի գիտակցության մեջ անհիշելի ժամանակներում ստեղծված Սասունցի Դավթի կերպարը, հերոս, որը ջերմ ու անաղարտ սիրտ ունի, արձագանքում է օգնության անեն մի կանչի և սխրագործություններ է կատարում ի բարօրություն իր ժողովրդի, իր հայրենիքի:

## ԷՊՈՍԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԿԵՐՊԱՐՆԵՐԸ

Էպոսի հիմնական սյուժեի զարգացումը բնության ուժերի իսկական մարդու վերամարմնավորվելու ընթացքն է, որոնք մարդկային հասարակության պատմության արշալույսին սկսեցին ընդունել կենդանական կամ մարդկայնացված ձևեր: Հերոսների յուրաքանչյուր հաջորդ սերունդը ավելի ու ավելի է մոտենում երկրին, ավելի ու ավելի է մոտենում երկրավոր մարդու կերպարանքին:

Էպոսի հերոսներն ինչքան էլ իրենց ծագմամբ, գերբնական հատկություններով ու արարքներով կապված լինեն բնության և նրա ուժերի հետ, այն ուժերի, որ հնագույն մարդն անհամեմատ ավելի սուր էր զգում, քան այն մարդը, որն արդեն վարժվել էր իրեն ենթարկել այդ ուժերի թեկուզ մի մասը - խորապես մարդկային են: Նրանք կենդանի մարդիկ են օժտված արհիությամբ ու քարձր հատկություններով, սակայն իրենց մեջ կրում են նաև մարդկային թուլություններ: Նրանց երկրային կյանքը պատկերող գրույցներում վառ արտացոլում են գտել ոչ միայն նրանց սխրագործությունները, այլև մարդկային զգացմունքները: Էպոսի հերոսները սխրանքներ են կատարում, որովհետև այդպես է պահանջում ժողովրդի բարօրությունը, և որովհետև նրանք իրենց մեջ այդ կատարելու ուժ են զգում. այդ սխրանքների նրանց ոչ մի առավելություն չեն տալիս. հերոսները չեն խզում իրենց կապը ժողովրդի հետ: Հասակ առնելուց հետո էլ նրանք չեն կորցնում իրենց հոգու մանկական անադարտությունը, պարզասրտությունը, օգնության ամեն մի կանչի անհապաղ արձագանքելու հատկությունը:

Չնայած էպոսի լեզվի սեղմությանը, բառերի անսովոր ժլատությանը, ոճի մոնոլեմնտալությանը, մանրամասնություններ նկարագրելուց խուսափելու ձգտումին, «Սասունցի Դավթի» էջերից իբրև կենդանի մարդիկ հեռանում են հերոսների կերպարները տղամարդ թե կին, որոնք այնքան տարբեր լինելով իրարից իրենց բնավորությամբ, միևնույն ժամանակ ունեն ինչ որ ընդհանուր բան:

Էպոսն սկսվում է այն պատմությամբ, թե ինչպես Բաղդադի խալիֆի ուղարկած հարկահանները Հայաստան գալով մի վառ լուսավորված աշտարակում հանկարծ տեսնում են հայոց Գագիկ թագավորի դստերը՝ Ծովինարին (ծովածին, ծովագն): Խելքահան լինելով նրա հիասքանչ ու հնայիչ կերպարանքից, նրանք թողնում են իրենց գործը, շտապում Բաղդադ և խալիֆին հայտնում, որ անհրաժեշտ է ինչ գնով էլ լինի ձեռք բերել այդ գեղեցկուհուն:

Խալիֆը ղեսպաններ է առաքում Հայաստան, որոնք նրա անունից պահանջում են գեղեցկուհի Ծովինարին և սպառնում են չտալու դեպքում պատերազմի դուրս գալ:

Հայաստանում տարբեր կարծիքներ են ծայր առնում: Ոմանք պնդում են, թե պետք է տալ Ծովինարին, ոմանք էլ առաջարկում են պատերազմել և չտալ արքայադստերը, քանի որ խալիֆը կռապաշտ է, իսկ աղջիկը՝ խաչապաշտ (այստեղ և էպոսի մնացած բոլոր մասերում մահմեդականները ներկայացված են իբրև կռապաշտներ): Սակայն Ծովինարն ինքը միանում է այն մարդկանց կարծիքին, ովքեր գտնում են, ավելի լավ է տալ աղջկան և խնայել հազարավոր մարդկանց կյանքը:

*Ծովինար խանում ասաց.*

*- Որ ես էն կռապաշտ թագավոր չառնեն,*

*Չամեն տի սպանի իմ պատճառով,*

*Աղեկն էն է, ես էրթամ,*

*Ուրիշ մարդու թող բան չըլնի:  
 Ես մենակ մեռնիմ իմ հոր թերեմ.  
 Ես մեկ ջան եմ, էրթամ, կորսվիմ,  
 Քանց մեր Հայաստան երկիր ավերի,  
 Էն հազար հոգիք կորուսանին:  
 Դարձավ ասաց. - Հայրի՛կ, ինձ տուր էնոր:*

Ծովինարը պայման է դնում, որ խալիֆը մի ամբողջ տարի չմոտենա իրեն: Խալիֆը համաձայնվում է և արքայադստեր համար հատուկ դրյակ է կառուցել տալիս:

Մի օր Ծովինարը դուրս է գալիս ծովափ զբոսանքի: Համբարձման տոնն է լինում (հայ կանայք այդ օրը դուրս են գալիս դաշտ և բախտագուշակ կատակերգերով վիճակ հանում): Ջբոսանքից հոգնելով, Օովինարն առանձնանում է հանկարծ նա ծարավ է զգում: Երկնքին ուղղած նրա աղերսով ժայռի միջից վճիտ աղբյուր է բխում, և աղջիկն իր խնած ջրից հղիանում է:

Այնուհետև Ծովինարին տանում են Բաղդադ: Պարզվում է, որ նա երեխա է ունենալու: Խալիֆը մահվան դատավճիռ է կայացնում: Արքայադուստրը խնդրում է մահապատիժը հետաձգել մինչև ծննդաբերության օրը, քանի որ այլապես իր հետ կմեռնի մի անմեղ եակ: Ժամանակ են տալիս: Օովինարը երկու տղա է ծնում, մեկի անունը՝ Սանասար, մյուսինը՝ Բաղդասար: Կրկին հայտնվում են դահիճները: Բայց Օովինարը դարձյալ ժամանակ է խնդրում երեխաներին կերակրելու և մեծացնելու համար: Պատիժը մի քանի անգամ հետաձգվում է: Այդ ժամանակամիջոցում խալիֆը մտերմանում է Օովինարի հետ, և արքայադուստրը բարեհաջող կերպով խուսափում է մահապատից: Տղաները ոչ թե օրով, այլ ժամով են մեծանում և տակավին հինգ տարեկան չդարձած ահ և սարսափի մեջ են գցում Բաղդադի ավագանու երեխաներին, որոնց հետ նրանք խաղում են: Այս հողի վրա վիճա-

բանություն է տեղի ունենում վեզիրի և խալիֆի միջև: Վճռում են արտակարգ ուժի տեր երեխաներին հեռացնել տանից, քանի որ խաղի մեջ նրանց ամեն մի հարվածից մեկի վիզն է ծռվում, մյուսի ոտքն է ջարդվում: Եղբայրների ճանապարհ են ընկնում իրենց պապի մոտ: Կարճ ժամանակամիջոցում պատանի դյուցազուններ դառնալով, Սանասարն ու Բաղդասարը գնում են նույն ծովի ափը, որտեղ ժայռից բխող աղբյուրը նրանց կյանքի էր կոչել: Ուզում են լողանալ: Բաղդասարը սիրտ չի անում նետվել ծովի ալիքների մեջ, իսկ Սանասարը համարձակորեն ծով է մտնում, և այստեղ հրաշք է կատարվում: Սանասարի առաջ ծովը հետ է քաշվում, տղան իջնում է նրա հատակը, ընկնում ստորերկրյա թագավորություն և այստեղ Մարութա Բարձրիկ Աստվածածինը նրան շնորհում է հռչակավոր Թուր-Կայծակին և քուռկիկ Ջալալին: Սա բացառիկ հատկություններ և արտակարգ ուժ ունի, օժտված է մարդկային լեզվով խոսելու ձիրքով, կարող է երկար ճանապարհ անցնել, թռչել մինչև արևը և իսկույն իջնել երկիր: Քուռկիկ Ջալալին ամենից առաջ փորձում է Սանասարի ուժը, հսկային մինչև արևն է բարձրացնում, որ այրի, բայց Սանասարն իրեն գցում է ձիու փորատակը: Քուռկիկ Ջալալին նետվում է ժայռերի վրա, որպեսզի ցախջախի Սանասարին, բայց դյուցազնը ճարակորեն թռչում է ձիու մեջքին: Ի վերջո նժույզը հնազանդվում է:

Սանասարը ծովի հատակում ձեռք է բերում գեներ ու գրահ: Նրա բազկի վրա դրոշմվում է հրաշագործ մի խաչ: Խմելով ծովի ջուրը, նա այնպիսի հսկա է դառնում, որ եղբայրը նրան չի ճանաչում և սարսափահար փախչում է: Սանասարին դժվարությամբ է հաջողվում Բաղդասարին համոզել, որ ինքն իրոք նրա եղբայրն է:

Շարունակում են իրենց ճանապարհը: Եղբայրներին զարմացնում է այն, որ կապույտ ցրի մի բարակ շերտ կտրումանցնում է մի մեծ գետի ամբողջ հոսանքը: Գայթակղված այդ

փոքր ջրի մեծ ուժից Սանասարն ու Բաղդասարը գտնուում են կապույտ ջրի ակունքն ու այնտեղ վիթխարի ապառաժներից ամրոց կառուցում:

*Ու գնացին, գտան գաղբուր:  
 Էդ աղբրի ջուրը լուլա մի ջուր է,  
 Կերթա, կը կտրե գիր տակի մեծ գետ:  
 Տեսան, անուշ ջուր էր, ու տեղն էլ էր անուշ:  
 Սանասար ասաց - Էստեղ խորոտ է,  
 Աղեկ է, որ մենք էստեղ մնանք,  
 Աեգ համար տուն մի ու քոչք շինենք:*

Իրենց ամրոցի շուրջը բնակություն հաստատելու համար եղբայրները 40 ընտանիք են բերում, ամրոց շինելուց առաջ նրանց համար 40 տուն են պատրաստում: Երբ նրանք ավարտում են ամրոցի կառուցումը, վճռում են նրան անուն տալ, քանի որ վերջինս թե՛ գեղեցիկ է, թե՛ մեծ, քայց անուն չունի:

Եվ ահա հանդես է գալիս մի կերպար, որ հանդիպում է նաև ռուսաց քիլիմաներում ու իրանական էպոսում ծերունի սերմնացանը: Պատանի եղբայրները նրան բերում են իբրև պատվավոր հյուրի, Քուռկիկ Ջալալու մեջքին նստեցրած ման են ածում ամրոցի շուրջը, և ծերունին քարաժայռերի մեծությունից ապշած կնքում է ամրոցի անունը, ավելի ճիշտ ասում է, որ անուն փնտրելու հարկ չկա, քանի որ ամրոցը տեղով-տեղ Սասուն է (ժողովրդական մեկնաբանությամբ՝ սարսափելի, ահռելի, ահարկու):

*Չալվոր նայեց դարգահի վերա,  
 Էդոր վերին հարկեր տեսավ,  
 Քարեր հանած էդա բարձր հարկեր,  
 Տեսավ քարափներ պատ շարած:  
 Ջարմացած մնաց, հարցուց, ասաց:*

- Էդո ՚ր անուն դնեն:  
 Աստված ձեր տուն շինի,  
 Ես ի՞նչ անուն դնեմ էս տան:  
 Աստված քարի տա ձեզ,  
 Դուք ինչքա՞ն ուժ ունիք,  
 Որ վեր հաներ եք էս մե՛ծ մեծ քարեր:  
 Վա՛, էս ի՞նչ սասուն քարեր են.  
 Դուք են սասուն քարեր  
 Ի՞նչպես հաներ եք էն վերին տեղ.  
 Ու քարե սան սուն եք զարկե.  
 Էս տուն չեք շինե դուք,  
 Ապա սասուն մ՛ եք շինե:  
 Վա՛, քանի սասուն բերդ մի.  
 Էս տուն չէ, էս սասուն է:  
 Սանասար ասաց. Բա՛վ է, պապիկ,  
 Էլ ձեն մի հանի, էլ անուն մի դնի.  
 Այ պապի, անուն դրվա՛վ.  
 Անուն էղա՛վ Սասուն:  
 Քանց էղա ավել ի՞նչ անուն:  
 Որ դու ասիր սասուն քարեր,  
 Քարե սան սուն եք զարկե,  
 Մեր բերդի անուն էղա՛վ Սասուն. Սասուն,  
 Մեր տան անուն Սասնա տուն:

Այսպես է մեկնաբանվում ամբողջի անունը: Այստեղից էլ հենց ծագում է ամբողջ մարզի՝ անունը, որը և հասել է մինչև մեր օրերը\*:

Ահա այեզարդ այս ծերունին է այն իմաստունը, որ կնքել է Սասնա ամբողջի անունը:

\* Այս պատմությունը հիշեցնում է այսպես կոչված «կիկոպյան» շինությունները, որ մեզ են հասել Հայաստանի հնագույն բնակիչներից և տարածված են Հայաստանի, Ադրբեջանի ու Վրաստանի տերիտորիայում: Հավանաբար նման շինություններ եղել են նաև Սասունում:

Սանասարն ամուսնանում է Քաջանց արքայադուստր Ղեղծունի հետ: Երեք որդի են ունենում, դրանք են Սիերը, Ձեռով Զովանը և Վերգոն:

Սանասարը էպոսի առաջին ճյուղի գլխավոր հերոսն է:

Ոչ միայն իր հրեղեն ծագմամբ, այլև իրարարքներով նա բազմաթիվ թելերով դեռևս կապված է հնագույն առասպելների հետ, մարմնավորում է կոսմիկական էակի մի շարք գծեր, էակ, որ մարդկային արտաքին ունի, բայց իր մեջ բնության ուժեր է բովանդակում, կապված է բնության կենարար ու բարեբեր տարերքի ջրի հետ: Ջրից ծնված այս հսկան ջրից է ստանում իր անխոցելի զենք ու զրահը, ամենակործան սուրը, ջրից է ստանում իր հասակը, անսահման ուժն ու զորությունը: Ջրից է ստանում իր հրաշալի Քուռկիկ Ջալալին, որն օժտված է մարգարեական ձիրքով, կարող է մարդու պես խոսել, սլանալ հողմից արագ, ծովի խորքերից սուրալ մինչև արևը:

Առաջին ճյուղի հիմնական կերպարներից է գեղեցկուհի Ղեղծունը:

Նա իր մեջ խտացնում է մայրիշխանության ժամանակների տան տիրուհու (և ո՛չ թագուհու) մի շարք գծեր, որոնցով նա տարբերվում է իր շրջապատի կանանցից և շատ շատերից բարձր է կանգնած:

Չափազանց մոռումեմտալ է այն դրվագը, երբ Ղեղծունը Սանասարի մահից հետո բազմամյա կամավոր ինքնաբանտարկումից հետո մոտենում է պատուհանին՝ նայելու իր թռռանը, որը կարողանում է կրել իր հսկա հոր ասպագենը, բարձրացնել ծանր թուրը: Ղեղծունի խոսքերը ուղղված սքանչելի Քուռկիկ Ջալալուն հնչում են ազնիվ մետաղի պես.

*Էլավ, իրան տեղեն կայնեց, ասաց.*

*- Իմ մուրագ կատարվեց, տ'ելնեմ դուրս.*

*Գնաց գլուխ փանջարեն վեր կախեց,*

Աչքեց տեսավ նորամանուկ Դավիթ  
 Միերի ձին հեծե, կայնե կանչեց.  
 - Քուռկի կ Ջալալի, մեռնե մ քե, մուրա՛գ:  
 Դավիթ շատ զարմացավ, կայնեց:  
 Դեղծուն շարունակեց.- Քուռկի կ Ջալալին,  
 Իմ Դավիթ հեր չունի անես հերություն,  
 Իմ Դավիթ մեր չունի անես մերություն,  
 Իմ Դավիթ դու տանես իր հոր կաթնով Աղբուր,  
 Դավիթ ձիուց իջնի, իջնի քուր խմի.  
 Իմ Դավիթ դու տանես փորձաքար,  
 Դավիթ իր թուր զարկի, զարկի սան, փորձի:  
 Քուռկի կ, քե ամանաթ իմ նորամանուկ Դավիթ:

Դժվար է հավտալ, թե դա հենց այն Դեղծունն է, որ իր նա-  
 մակով մի օր կախարդեց երկվորյակ եղբայրներին և նրանց  
 սրտում բորբոքեց նոր, նրանց տակավին անծանոթ մի կրակ,  
 հմայեց այնպես, ինչպես չէր կարողանա հմայել ոչ մի կա-  
 խարդուհի, եթե չունենար այն հրապույրը, որ հատուկ է Դեղ-  
 ծունին՝ և Սախտակ ամրոցի դեռափթիթ միանձնուհուն, և  
 Տան մորը Սասնա տիրուհուն, և կովի գնացող թռռանը բա-  
 րի ճանապարհ մղթող զառամյալ տատիկին:

«Սասունցի Դավիթ» էպոսի երկրորդ ճյուղի հերոսը Սա-  
 նասարից և Դեղծունից ծնված Մեծ Միերն է, որը հայտնի է  
 Առյուծածև Միեր (առյուծ պատառոտող) մականունով: Նա  
 հորից ժառանգում է ոչ միայն հրաշագործ ասպազենը և  
 իմաստուն նժույգը, այլև անմահական Կաթնաղբյուրից  
 գերբնական ուժ ստանալու հատկությունը:

Օժտված լինելով անպարտելի ուժով, նա մարդկային մի-  
 ջավայրում, երկրային կյանքի րովում ձեռք է բերում մարդ-  
 կային թուլություններ: Մեծ Միերը տոգորված է այն կրակով,  
 որի համար Պրոմեթեոսը մարդու հանդեպ տածած սիրուց  
 գանց առավ աստվածների կամքը, կրակ, որը մեծ Հերակլե-

սին կիսաստծուց դարձրեց մարդկային ցեղի հավատարիմ ծառա, ոչ թե անձնական փառքի, այլ մարդկային բարօրության եամար սխրագործություններ կատարող հերոս:

Ունենալով գերբնական ծագում, անարատ աղբյուրի թոր Սհերը, իր կյանքի առաջին իսկ օրից ոչ թե տարիներով է մեծանում, այլ ժամերով:

Երիտասարդ հսկան, որը կարող է արմատահան անել ծառերը և տանել դրանք թեթև մահակի պես ուսին դրած, մտքովն էլ չի անցկացնում ձի նստելու հնարավորությունը, իսկ երբ առիթ է լինում նժույգ ընտրելու, ապա նրա ձեռքի ծանրության տակ ճկվում են մարտական լավագույն ձիերը:

Մանկական հոգու տեր միամիտ հսկան պատրաստ է իր բոլոր ուժերը նվիրաբերելու հանուն մարդկային բարօրության: Լսելով, որ երկիրը սույի է մատնված (հացի ճանապարհին մի հրեշվոր առյուծ է պառկած լինում), նա նետվում է թշնամու դեմ, մի կողմ է քաշում ամեհի գազանի հետ կռվելու եկած զորքը և մեն-մենակ, իր զորավոր ձեռքերով, երկու կտոր է անում առյուծին:

*Մի ձեռ թալեց էդ առյուծի վերին ծնոտ,  
Մյուս ձեռ թալեց ներքի ծնոտ,  
Եղեց էդ առյուծ մեջտեղեն,  
Արեց էնոր երկու կտոր:  
Մեկ դրեց ճամփու էս դին, մեկել էն դին:*

Այնուհետև Սհերը կռվի է դուրս գալիս հարևան երկրի վրա իշխող ճերմակ Դևի դեմ, որը փակել է աղբյուրի ճանապարհը, սպանում է դևին և ամուսնանում նրա անրոցում գերության մեջ տառապող չնաշխարհիկ արքայադստեր Արմադանի հետ:

Սհերը կռվի է դուրս գալիս նաև Մրսրա Մելիքի Մոսուլի թագավորության դեմ:

Ժամանակ անց, երբ մեռնում է Մրսրա Մելիքը, նրա կինը

Իսմիլ խանունը, Միերին խնդրում է գալ և օգնել իրեն իբրև անօգնական մնացած այրու:

Միերը չի լսում Արմաղանին և վստահ իր հավատարմության ուժին մեկնում է Մրսըր\*: Այստեղ նրան հարբեցնում են, տանում Իսմիլ խանունի պալատը և նա հակառակ իր ցանկության դառնում է կրտսեր Սելիքի հայրը:

Մրսրա Սելիքի երակներում եռում է հսկա հոր արյունը, նա ժառանգել է նաև նրա ուժը, իսկ սրտում զգում է մարդկանց և բոլոր ժողովուրդների վրա իշխելու բուռն ծարավ, որը նրան ներշնչել է իր մայրը:

Լույս աշխարհ բերելով իր այդ որդուն Միերը, դրանով իսկ Իսմիլ խանունի հոգում ծնում է այն հույսը, թե «հիմա կշողշողա Մրսրա աստղը, իսկ Սասնա աստղը կխավարի»: Իսմիլի կողմից Սելիքին տրվող այդ խրատները, իբրև հրաշագործ հակաթույն, սքափեցնում են Միերին, և նա իր հոր հրեղեն ծիծուկ Մրսրից (Մոսուլից) սլանում է հայրենի Սասուն:

Միերը վերադառնում է իր սիրեցյալ կնոջ մոտ, որը երդվել է քառասուն օր հրաժարվել ամուսնական կյանքից: Բայց Միերը խախտել է տալիս նրան այդ երդումը, ցանկանալով վառել Սասնա ճրագը, որպեսզի վերջինիս լույսից խավարի Մրսրա աստղը, և իր ուստրերն ու դուստրերը պաշտպան ունենան այն աղետների դեպքում, որ կարող է նրանց գլխին բերել Մրսրա Սելիքը:

Իրականանում է Միերի ու Արմաղանի երազանքը- ծնվում

\* Ժողովրդի հասկացողությամբ և ուսումնասիրողների կարծիքով, այստեղ նկատի է ս ռված եզրպտուր, որն արաբները Մրսըր են անվանում՝ ՆՆՆՆ մեկնաբանությունը առիթ է տալիս մի շարք թյուրիմացությունների, ինչպես և անախրմերգմների քանի որ հայերի և եզրպտուսի տիրակալների ընդհարումները վերաբերում են միայն Սամեուլցների ժամանակաշրջանին:

Իրականում Մրսըր անվան տակ այստեղ պետք է հասկանալ Մոսուլը: Եվ այն ժամանակ հասկանալի էն դառնում եպոսի մի շարք մոմենտներ, մասնափորապես այն՝ որ երբ Ղափիքը Սասնա մոտակայքում սպանում է բազմաթիվ ռազմիկների, գետը մեռում վերջիններիս դիակները, Մրսըրում ապրող նրանց հարազատների տեսնում են օրի հետ եկած մարմինները: Իենց այդ գետն այն գետն է, որը Սասունը կապում է Մոսուլի եետ և պատկանում է եփրաա ձետի վերջինին:



է Դավիթը, շիրիմ է իջնում Մեերը, շիրիմ է իջնում Արմաղանը:

Սկսվում է էպոսի երրորդ, գլխավոր ճյուղը:

Մեերի և Արմաղանի մահից հետո հարց է ծագում, ինչպե՞ս կերակրել մանուկ Դավթին: Աասունցի բոլոր ստնտուների կաթից երեխան հրաժարվում է: Վճռում են նրան տանել Իսմիլ խանումի մոտ: Գուցե Դավթը չհրաժարվի այդ կնոջ կաթից, որը իր հոր հետ նույն մահիճն է կիսել: Բայց ինչպե՞ս ուղարկել: Ճանապարհը հեռու է և դժվար: Տղային կապում են Քուռկիկ Ջալալու մեջքին, և սա մանկանը հասցնում է Իսմիլ խանումի մոտ: Դավիթը սնվում է նրա կաթով, ինչպես և Աասունից բերած յուղով ու մեղրով, հասակ առնում իբրև մի դյուցազուն:

Եւ ա վելի արագ է աճում, քան Սըսրա Մելիքը. ոչ թե օրով, այլ ժամով, ոչ թե ժամով, այլ րոպեներով: Երեք-չորս տարում այնպիսի փահլեւան է դառնում, որ խաղի ժամանակ բռնում ու դեն է շարտում Սըսրա Մելիքի նետած մկունդը: Դավիթը սարսափ է ազդում Մելիքին:

Սըսրա Մելիքը, տեսնելով փոքրիկ Դավթի ուժն ու դյուցազնութունը, նրան փակում է մթին զնդանում, ուր չի թափանցում արևի և ոչ մի շող:

Որպեսզի մանուկ հսկան զրկված լինի որևէ գենքից, նրա բաժին ճաշի միսն անգամ ոսկրահան են անում: Հանում են նույնիսկ մրգերի վիջի կորիզները:

Բայց այնպես է լինում, որ ճաշ բերողին վիրավորում են Սըսրա Մելիքի պալատականները, և սա բարկությունից Դավթին ոսկրոտ միս է տալիս: Դավիթը ճաշն ուտում է և ոսկորը շարտում պատի կողմն այնպիսի ուժով, որ զնդանի պատը քանդվում է, և ճեղքից ներս է ընկնում արևի շողը: Դավիթը չգիտե, թե ինչ բան է դա, կարծում է կենդանի եակ է, և կատաղի գոտեմարտի է բռնվում հետը:

Դաստիարակից Դավիթը իմանում է, թե ինչ բան է արևը: Երկար աղերսանքից հետո նրան դուրս են հանում զբոսանքի:

Դավթի ամեհի ուժը նորից տեսնելով, Մըսրա Մելիքը վճռում է ազատվել նրանից: Երկու հոգու ուղեկցությամբ նրան հետ են ուղարկում Սասուն, պատվիրելով, որ ճանապարհին սպանեն տղային: Ուղեկցողներից մեկը Դավթի հոր՝ Միերի հավատարիմ ծառան է, մյուսը՝ ավագ Մըսրա Մելիքի մերձավորը: Բաթմանա կամրջին հասնելով սրանք ուզում են սպանել Դավթին, բայց շրջահայաց տղան գլխի է ընկնում: Գուշակելով իր ուղեկիցների մտադրությունը, երկուսին էլ կամրջից վեր է բարձրացնում և պահում օդի մեջ՝ մեկին աջ ձեռքով, մյուսին՝ ձախ, մեկին՝ գետի հոսանքն ի վեր, մյուսին՝ հոսանքն ի վար և սպառնում, որ կխեղդի շան լակոտների պես:

Բանը նրանով է վերջանում, որ Դավթի հոր հավատարիմ ծառան տղայի կողմն է անցնում, վճռում ծառայել նրան, իսկ մյուսը ետ է դառնում Մըսր, որ Մելիքին պատմի, թե այնքան էլ հեշտ չէ Դավթի «գլուխն ուտելը»:

Դավիթը Չար Բահար Քամու հետ գալիս է Սասուն:

Սկսվում է Դավթի կյանքը Սասունում: Երբ նա տղաների հետ կատակ է անում, ծովում են սրանց վզերը, դուրս են ընկնում ձեռքերը:

Գլուխներն ազատելու համար Դավթին գառնարած են կարգում. Դողպատե տրեխներ են հագցնում, պողպատե գավազան են ձեռքը տալիս: Դավիթը, գառների և ուլերի հոտն առաջն արած սարերն է բարձրանում: Քնով է անցնում, գառներն ու ուլերը ցրվում են, իսկ երբ մանուկ հովիվն ուզում է նրանց հավաքել, չի ջոկում, թե ո՞րն է գառը, ո՞րն է ուլը, աղվեսն ու նապաստակը. բոլորին քշում-բերում է, լցնում քարանձավը: Երբ հորեղբայրը հաց է բերում, տեսնում է, որ փարախը լեփ-լեցուն է գազաններով:

Դավիթը գազաններին քշում-բերում է քաղաք: Սասունցիները մոռթում են նապաստակները, միսն ուտում, մոռթում են աղվեսները և ծմռան համար մուշտակներ կարում:

Հետագայում Դավթին նախրապան են կարգում: Սա էլ

քշում, քաղաք է բերում արջեր, գայլեր, առյուծներ, վագրեր. ոչ ոք սիրտ չի անում գլուխը տնից դուրս հանել:

Դավիթը նետ ու աղեղ է պատրաստում և երապուրվում է թռչունների որսով: Ստքովն էլ չի անցնում, թե տրորում է այն պառավի արտը, որին մի ժամանակ (Դավիթն այդ ժամանակ չգիտեր) սիրել է Միերը: Տեսնելով, որ արտը ոտնատակ է լինում, պառավը պատմում է Միերի որսասարի մասին: Դավիթը գնում է այնտեղ և տեսնում այդ վիթխարի որսասար-գազանանոցի անվթար մնացած շրջապարիսպը:

Դավթին շրջապատող մարդիկ առաջարկում են նրան կրակել որսի վրա, բայց Դավիթը վճռականորեն առարկում է: Նա ասում է, որ պարսպի մեջ փակված կենդանիներին սպանելն անթույլատրելի է և մեղք է:

Չենով Գովան ասաց.

*- Հրողբեր մեռնի քեզ, Դավիթ,  
Ձարկ, հատ մի սպանի, բռնենք գեները:  
Դավիթ ասաց.- Հրողբեր, ջանքն,  
Կապուկ տեղ պապս էլ կգարկի.  
Տղամարդն էն է, որ արձակի ու նոր գարկի.  
Չէ՞ որ էնոնք գերի են, հրողբեր,  
Մարդ էլ գերին գարկի՞:*

Նա ցանկանում է, որ ուժի և ճարպկության մրցումը տեղի ունենա հավասար պայմաններում: Քանդում է պարիսպը, բաց է թողնում կենդանիներին, ապա ասում. «Որս անողը թող հիմա անի», - և ինքն է սկսում որս անել:

Որսից հետո եոզնած Դավիթը քնում է ծառի տակ: Երբ հանկարծ արթնանում է, լեռան բարձրունքին մի գարմանալի լույս է տեսնում: Գնում է դեպի լույսը, և նրա դիմաց կանգնում է լուսաճաճանչ մի շինություն, որտեղից բոց է հառնում: Դավիթն այստեղ մի հրաշալի ծայն է լսում: Այդ ծայնն ասում

է, որ երիտասարդ, հսկան պետք է վերաշինի Սարութա վանքը: Դավիթը Ձեռով Զովանին հարցնում է Միերի մասին, իմանում է, որ այստեղ է Միերի դամբարանը, այստեղ է եղել նրա կառուցած և արաքների ձեռքով ավերված Սարութա վանքը:

Դավիթը շրջահայաց է. լույսը տեսնելուն պես գետնի վրա իսկույն գծում է շենքի հատակագիծը, վճռում է վերակառուցել վանքը: Տեսիլը ջրանում է, իսկ գծագիրը մնում է գետնին: Դավիթը մեծ թվով վարպետներ է կանչում և մի գիշեր, մի ցերեկ չանցած շինում է վանքը: Բայց հենց որ լույսը բացվում է, վանքը քանդված են տեսնում. քարերը դես ու դեն են ընկած, կիրը մի տեղ է կիտված, ավազը՝ մի տեղ: Վանքի հետքն անգամ չի մնացել: Նրան մի այլ տեսիլք է հայտնվում, և նա իմանում է, որ շենքի հիմքում պետք է դրված լինի իր թուրը: Թուրը դնում է շենքի հիմքում, տաճարը կրկին կառուցվում է, և այնտեղ են տեղափոխվում վանականները:

Այդ օրվանից Դավիթը փոխվում է, հասուն մարդ է դառնում, թեև նրա մեջ տակավին շատ է մանկական չարաճծիությունը:

Դավիթն իր հոր որսասարում շարունակ որս է անում: Մի անգամ էլ, երբ նա այստեղ որս է անում, Մըսրա Մեփիքի հարկահանները Սասուն են գալիս յոթ տարվա հարկը տանելու: Տուն վերադարձած պատանին տեսնում է, որ հորեղբայրը, Սասունն ավերելու սպառնալիքից ահաբեկված, արաքների համար ոսկի է չափում:

Դավիթը միջամտում է: Զարկահաններին ոչ մի ոսկի չի տալիս: Ավեփն, ջարդում է գլխավոր հարկահանի Կոզբադնի գլուխը: Այս դրվագը միակն է ամբողջ էպոսում, որտեղ խախտված է գեղարվեստական չափը, քանի որ ահավոր կեդպով վառ ու կոպիտ ձևերով տրված է հարկահանին այլաճանդակելու տեսարանը: Դավիթը նրա ատամները հանում, ճակատին է շարում, կտրում շրթունքները...

Որոտաձայն մարտակոչով և սեփական արյունով գրած հրովարտակով Մըսրա Մելիքը իր հպատակ բոլոր երկրներից գորք է հավաքում և գնում Սասնա դեմ պատերազմելու: Նրա հետ են Մըսրա գորքը, յոթ հպատակ թագավորների գորքերը: Բանակն այնքան մեծաթիվ է, որ զինվորները միմի կում ջուր խմելով ցամաքեցնում են գետը: Թշնամու դեմ ելնում է Ղափիթը քեռի Թորոսի և նրա 39 որդիների հետ:

Արտատեր պառապի խորհրդով Ղափիթը ձեռք է բերում հոր զենքն ու զրահը: Նրանք Ղափթի համար չափազանց մեծ են, Քուռկիկ Ջալալուն էլ դժվար է հնազանդեցնել: Բայց հրաշագործ աղբյուրի ջուրը խմելով նա հսկա է դառնում և հոր զենքն ու զրահը հագած արշավում է դեպի արաբական բանակը: Հարձակվելուց առաջ նա երեք անգամ որոտաձայն գոչում է.

*- էհե՛յ,  
Ով քնած է, արթուն կացեք  
Ով արթուն է ձիեր թամբեք,  
Ով թամբեր է զենքեր կապեք,  
Ով կապեր է ելեք, հեծեք.  
Չասեք Ղափիթ գող-գող եկավ,  
Գող-գող գնաց:*

Եվ ահա սկսվում է զարհուրելի մի ջարդ: Ղափիթը աջ ու ձախ կոտորում է, մինչև որ նրան մի արաբ ծերունի է մոտենում և ասում հիանալի խոսքեր, այն մասին, որ պատերազմողները թագավորներն են, իսկ ժողովուրդները կռվելու, իրար կոտորելու ոչ մի ցանկություն չունեն, քանի որ միմյանցից որևէ բան չեն ուզում խլել:

*Մըսրա Մելիքի գորքի մեջ են մարդ մի ելավ,-  
Մեկ ալևոր - յոթ տղու հեր:*

Մեչիք էնոր յոթ տղեկներ գոռովեն էր բերեր կռիվ:  
 Էդ ալևոր ասաց.- Զե՛յ վախ, հե՛յ վախ...  
 Դուրս էկավ էն առանց զենքի ու գլխաբաց  
 Ջորքի մեջեն վազեց,  
 Ասաց.- ճամբա տվեք, էրթամ Դավթի առաջ:  
 Մի խոսք ասեմ, էսա գորք ազատեմ կովից:  
 Էկավ, կանգնեց Դավթի առաջ,  
 Ասաց.- Դավիթ, մեռնեմ քեզի,  
 Ականջ արա, ձիդ դադրեցրու,  
 Գամ քեզի խոսք տ'ասեմ:  
 - Ի՞նչ տ'ասես ինձ, հալվոր,- հարցուց Դավիթ:  
 - Դավիթ,- ասաց.- մեռնեմ քո արևուն:  
 Չէ՞ որ էնոնք էլ մարդ են, իսան են.  
 Ինչի՞ կկոտորես, ինչի՞ կը սպանես.  
 Չէ՞ որ էդոնք էլ երեխաներ ունեն,  
 Տուն ու կնիկ ունեն:  
 Էնոնց սպանես ճժերու մեղք կընկնի քո վիզ:  
 Աղքատ ու խեղճ մարդ են էդոնք.  
 Որը իր մոր մեկուճարն է,  
 Որը նոր պսակված տղա,  
 Որը իր օջախի սունն է,  
 Որը հանգած մի տան ծրագ:  
 - Ապա ինչի՞ էկած են, հետ ինձ կովեն:  
 Պատասխանեց.- Մեզ ի՞նչ մեղք կա.  
 Մըսրա Մեչիքն է գոռովեն բռնե, բերե.  
 Մըսրա Մեչիքն է քո դուշման,  
 Գնա իր հետ կռիվ արա:  
 - Ապա Մեչիքն ո՞ւր է հիմա:  
 - Մ՛յ, էն կանաչ վրանի տակ քնած է, տես,  
 Ոսկի խնձոր էնոր չադրի գլխին դրուկ.  
 Յոթն ազապ աղջիկ էնոր ճանճ կը քշեն,  
 Յոթն ազապ աղջիկ էնոր ոտք կը մածեն:

Էն վրանից մուխ որ կ'ելնի  
 Էն մուխ էլ հո մուխ չի,  
 Էն շոգելքն է էնոր բերնի:  
 Դու որ էրթաս Մելիք սպանես  
 Էդ զորք քեզի աղոթք տ'անի,  
 Տի խնդանա ու ամեն մեկն իր տուն տ'երթա:  
 Էդտեղ Դավիթ խղճավորվավ,  
 Զորք ջարդել վերջացուց,  
 Դարձավ, ասաց,  
 - Հավվո՛ր,  
 Աղեկ խոսք ասացիր,  
 Ես քո խոսք տ'անեմ:

Դավիթը սլանում է Մըսրա Մելիքի վրանը: Հանդես բերելով մեծագույն ազնվություն, ուղղամտություն և մեծահոգություն, գոտեմարտում սպանում է Մըսրա Մելիքին, ոչնչացնում նրան, ում պատերազմ էր պետք, խաղաղությանը ազատ է արձակում Մելիքի զորքը, նախազգուշացնելով, որ այլևս երբեք չհարձակվեն Սասնա վրա:

Դավիթ ծիու գլուխ շրջեց,  
 Էլավ, գնաց մեջ զորքերին,  
 Ինչ զորք, զորական մնացե  
 Կանչեց, հրամայեց, ասաց:  
 - Ամենիդ իրավունք կտամ:  
 Ուրտեղեն եկել եք էլեք, գնացեք ձեր տեղ:  
 Էլեք, գնացեք ու ձեր տներ նստեք,  
 Դուք ինձ համար աղոթք արեք,  
 Իմ եորն ու մորն էլ օղորմի տվեք:  
 Հանդարտ կացեք,  
 Մեկ էլ չեկնեք ու գաք վեր Սասնա:  
 Մեկ էլ որ գենք առնեք մեր դեմ,

*Թե որ դուք կռվի գաք վեր մեզ  
Քառասուն գազ խոր հորում ըլնեք,  
Թե ջաղացի ջոջ քարի տակ,  
Տ'ելնի ձեր դեմ Սասնա Դավիթ,  
Տ'ելնի ձեր դեմ Թուր Կեծակին:*

Հաղթական պատերազմից հետո վճռում են ամուսնացնել Դավթին: Պարզվում է, որ հարսնացու արդեն գտնվել է: Դա գեղեցկուհի՝ Խանդութ խանումն է: Նա Դավթի մոտ գուսաններ է ուղարկում, որոնք և դուրսագնի ներկայությամբ գովում են աղջկա գեղեցկությունը:

*«Տասեն, տի գովեն Խանդութ խանում Դավթին,  
Էնոր քոյ գյուլու եղեզ նման է:  
Տասեն, տի գովեն Խանդութ խանում Դավթին,  
Էնոր սրտիկ Բուռլիկ Ջալալու մեյդանն է:  
Տասեն, տի գովեն Խանդութ խանում Դավթին,  
Էնոր քերան մեղրով բացած է:  
Տասեն, տի գովեն Խանդութ խանում Դավթին,  
Էնոր ատամներ մարգարիտ շարած է:  
Տասեն, տի գովեն Խանդութ խանում Դավթին,  
Էնոր աչքեր գինու կխթա է:  
Տասեն, տի գովեն Խանդութ խանում Դավթին»:*

Լսելով գուսանների գովքը, Դավիթը հիացած գնում է Խանդութի մոտ:

Խանդութի ամրոցում նա հանդիպում է 39 կտրիճների, որոնք տարբեր երկրներից եկել էին նրա ձեռքը խնդրելու, բայց նրանցից և ոչ մեկը չէր կարողացել նվաճել աղջկա սիրտը: Դավիթն առաջին իսկ հայացքից տիրանում է Խանդութի սրտին և որպես ընծա ստանում է սիրո խնձորը:

Վերոհիշյալ կտրիճները որոշում են Դավթին մեջտեղից դուրս բերել: Խնճույքի ժամանակ նրանք իրենց թերը թաքցնում են սեղանի սփռոցի տակ, որպեսզի Դավթին հարբեցնելով սպանեն: Տեսնելով այդ, Խանդուլը պատվիրում է Դավթի առաջ արձաթյա մեծ սկուտեղ դնել, իսկ ինքը մի պարկ կաղին առած քարձրանում է վերնասրահը: Ամեն անգամ, երբ բունը Դավթին հաղթահարում է, Խանդուլը վերևից կաղիներ է գցում սկուտեղի վրա և չի թողնում, որ նա քնի: Երբ խնճույքը Դավթին ձանձրացնում է, նա պատվիրում է վերցնել սփռոցը: Տեսնելով թաքցրած թերը Դավթի ձեռքով դրանք կտոր-կտոր է անում, տալիս ախոռապանին, որ Քուրկիկ Ջալալու պայտերի համար մեխեր պատրաստեն:

Դավթի լավ է հիշում մերձավորների և հարազատների հանդեպ ունեցած իր պարտականությունը: Երբ տակավին փոքրիկ տղա է լինում, նրան փորձում է գայթակղեցնել հորեղբոր Չենով Յովանի կինը: Ֆեդրայի և Իպպոլիտի այս պատմությունը էպոսում դրսևորված է արտակարգ ցայտունությամբ: Դավթը փակում է աչքերը, երբ հորեղբոր կինը լողանալիս նրան պատվիրում է ջուր լցնել իր գլխին, որպեսզի տղան տեսնի իր մերկ մարմինը: Ամուսնուն գայրացած ասում է, թե Դավթն իբր կամենում է իրեն խայտառակել: Յորեղբայրը հավատում է և Դավթին վտարում է տնից: Յորեղբոր կինը երկրորդ անգամ է տղային փորձում, քայց սա երկրորդ գայթակղությանն էլ տեղի չի տալիս: Դիմանում է նաև երրորդ փորձությանը, մնում է մաքուր ու անարատ:

Մի հանգամանք Դավթի կյանքում ճակատագրական է լինում: Նա անակնկալ սիրահարվում է Չմշկիկ-սուլթանին և խոստանում է նրա մոտ վերադառնալ յոթ օր հետո, քայց այդ մասին հիշում է միայն յոթ տարի անց, երբ Չմշկիկից արդեն ծնված է լինում իր դուստրը:

Սասունի ճանապարհին հոր և որդու (որին Դավթը դեռ չէր տեսել) միջև մենամարտ է սկսվում: Երկուսի համար էլ այդ

մենամարտը շատ ծանր է լինում, որովհետև երկուսն էլ գորավոր ուժի տեր են: Թեև Սիերն ավելի ուժեղ է, բայց չի կարողանում հաղթել արդեն ուժասպառ եղած, բայց անխոցելի Դավթին: Կռվին վերջ է տրվում Դավթի կնոջ և Սիերի մոր խանդութ խանումի միջամտությամբ: Դավթն անիծում է որդուն դատապարտելով նրան անլուծյան և անմահության:

Վերադառնալով Չմշկիկ-սուլթանի մոտ, Դավթը սպանվում է իր հարազատ աղջկա արձակած նետից:

Էպոսի կենտրոնական հերոսի Դավթի կերպարը տրված է առանձին լիակատարությամբ:

Մեծահոգություն - ահա այն գիծը, որ հատուկ է Դավթին: Ի՞նչ փույթ, որ թշնամին, ոխերիմ թշնամին, արդեն երեք անգամ հարվածել է մկունդով: Եթե նրան իր կաթով սնած կինը խնդրում է, ապա նա բաշխում է առաջին զարկը և իջեցնում վեր բարձրացրած սուրը: Երկրորդ զարկն էլ է բշխում, քանի որ այս անգամ էլ խնդրում է թշնամու քույրը, որը Դավթին մի ժամանակ խաղացրել է իր ծնկներից: Նա իջեցնում է երրորդ կործանարար հարվածը, թեև գիտե, որ նենգավոր թշնամին մենամարտը համարձակորեն շարունակելու փոխարեն հորի խորքն է մտել, վրան քաշել քառասուն գոմշի կաշի և քառասուն ջրադացքար:

Դավթի մեծահոգությունն անխորտակելի ժայռի պես ամուր հիմք ունի հաղթանակի հավատ, իսկ այդ հավատը բխում է հայրենիքն ու հարազատ ժողովրդին պաշտպանելու արդար գործի անսասան գիտակցությունից:

Դավթի համար բնորոշ է մի այլ գիծ ևս: Նույնիսկ ոխերիմ թշնամու դեմ կռվելիս, երբ մտադիր է նրան անխնա ոչնչացնել, աշխատում է իր համար չստեղծել առավել շահավետ պայմաններ. հանկարծակի չի հարձակվում չնախապատրաստված հակառակորդի վրա:

Դավթը երկու անգամ է գրոհում թշնամու բանակի վրա: Առաջին անգամ նա պետք է բախվի Սրսրա Մելիքի անթիվ

անհամար զորքի հետ, երկրորդ անգամ Պապ-Ֆրենկի վիթխարի բանակի: Երկու անգամն էլ, չնայած իր հուզմունքին, որն այնքան վառ են նկարագրում բանասացները, Ռավիթը չի մոռանում կանգնեցնել, սանձահարել իր ձին և բանակի մի ծայրից մյուս ծայրը հնչող որոտանման ձայնով ազդարարել, որ թշնամին արթնանա, զենք վերցնի, ձի հեծնի, պատրաստվի կռվելու:

Սա նման չէ այն մարտակոչերին, որոնցով Իլիոնի պատերի տակ և քարձր պարիսպների վրա աշխատում են իրար բորբոքել հելլեններն ու տրոյացիները: Սա նման չէ այն լեզվակովին, որով մխիթարվում է Սանասարը կտրիճների հետ զոտեմարտելիս: Ոչ էլ թշնամուն գրգռող խոսքերին է: Նման, որոնք հաճախ զոտեմարտի նախաբանն էին համարվում, ինչպես դա հայտնի է տարբեր ժողովուրդների, այդ թվում նաև հայ ժողովրդին պատկանող չափածո և արձակ բազմաթիվ նկարագրություններից: Ռավթի մարտակոչը սեղմ, հատու և չգրգռող մարտակոչ է:

Այդ կոչն արդյոք այն պատճառով չէ՞ այդքան սեղմ, հատու, հանդարտ ու անմիջական, որ էպոսում նկարագրված է ոչ թե ասպետների համար սովորական դարձած տասնյակ ճակատամարտերից մեկը, այլ մարտական հանգամանքներին անսովոր մարդու ոչ թե սուր, այլ հովվական մահակ ու գութանի մաճ բռնող ասպետի մուտքը ռազմաբեմ: Ռավիթը կարիք չի զգում թշնամուն ծաղրելու, քանի որ նրան ոչ թե կռվի պրոցեսն է հրապուրում, նա ոչ թե փառքի համար է ուզում հաղթել, այլ հայրենիքի քարոթության: Հարկ չկա, որ նա բորբոքվի: Ձավթիչների նկատմամբ Ռավիթը լցված է այրող ատելությանը և ուզում է նրանց հաղթել, կոտորել, արտաքսել և ոչ թե փառաբանվել:

Ռավիթը, ինչ գործ էլ որ անի, կրակոտ է, կռվի մեջ անզուսպ, ամբողջովին կիրք ու կորով, սակայն կատաղության ամեննախելահեղ նուպայում էլ կարող է հանկարծ մեղմանալ,

դառնալ հեզ ու հնազանդ, եթե մոլեգնությանը հակադրվում է քնքշանքը, թեկուզ գորովալից մի խոսք: Ինչպես է փոխվում Դավիթը, երբ հրաժեշտ է տալիս իր հորեղբորը Ձեռնով Գովանին:

Դավիթը միշտ էլ աչքի է ընկնում ուղղամտությամբ, անկեղծությամբ և պարզությամբ: Սքանչելի է նրա հիացմունքի պոռթկումը, երբ գմայլվում է խանդութի գեղեցկությամբ և ամբողջ կերպով, սքանչելի են մանկական անաղարտ անմիջականությամբ համակված երեք համբույրը, որոնցով նա ողջունում է խանդութին, և որոնցից մեկը երրորդը, գեղեցկուհու զայրույթն է շարժում: Դավիթը հեռանում է դառնորեն վիրավորված ոչ թե այն պատճառով, որ խանդութը բռունցքով հարվածում է նրան և քիթն արյունվա անում, այլ այն պատճառով, որ իրեն չհասկացան: Միայն սիրահարված զույգի հոգու մաքրությամբ կարելի է բացատրել այն անսովոր հմայքը, որով լի է երեք համբույրի, դրանց համար տրված պատժի և հպարտ խանդութի ներումն հայցելու դրվագը: Խանդութ խաթունը, իր կյանքում առաջին անգամ, բոբիկ ոտքերը քարերին տալով, արյունվա անելով, վազում է վիրավորված, դյուրաբորորոք դյուցազնի ետևից:

Դավիթը, որ ընդունակ է կատաղելու, ձեռք բարձրացնելու զառամյալ հորեղբոր վրա, հանգիստ և առանց վրդովմունքի է ընդունում իր անձին սպառնացող դավաճանությունը:

Էպոսի երրորդ ճյուղի երկիրդ կարևոր անձը խանդութ խաթունն է: Սա կամքի տեր կնոջ կերպար է, կին, որ իր մոտ է կանչում հիանալի ընտրյալին, իր ձեռքին է պահում ընտրություն կատարելու իրավունքը: Ինչպես Դեղձունի պալատի պատերի տակ են տոչորվում նրանով կախարդված քառասուն կտրիչները, որոնց քնահաճ գեղեցկուհին զառամյալ ծերունիներ է դարձնում, այնպես էլ խանդութի պալատի ներքնահարկի խնձույքասրահում, յոթ տարի տառապում են քառասուն հիասքանչ կտրիչ: Եթե խանդութը ժողովրդի գի-

տակցության մեջ ապրեր այն ժամանակ, երբ ստեղծվել է կերպարը, ապա նա էլ, չնաշխարհիկ կնոջ հմայքին առընթեր, օժտված կլիներ նաև կախարդուհու ծիրքով:

Դեղծունին խանդութը հարազատ է դառնում նաև նրանով, որ նա որոշ առնչություն ունի գրքացության հետ: Խանդութը «գրքերից» իմանում է, որ կռվի դաշտում Դավթի դեմ մարտնչողը նրա ազգականն է՝ պարոն Աստղիկը:

Դավթի մոտ գուսաններ ուղարկելիս խանդութի մտքով չի անցնում, թե առաջին իսկ հանդիպումը իրեն մեկընդմիջտ սիրո գերի կդարձնի, ոչ պակաս քան Դավթին: Բայց նույնիսկ այն սերը, որն աղջկան ստիպեց վազել մժույգով հեռու սլացող վիրավորված սքանչելի պատանու ետևից, աղերսել, որ նա ետ դառնա, այն սերը, որ սովորեցրեց կադիմներ նետել արծաթյա սկուտեղի մեջ՝ իր սիրեցյալի քունը վտանգի պահին վանելու համար, ստիպեց գիշերային խավարում, ռազմադաշտում ընկած դիակների մեջ որոնել իր սիրեցյալի դին, այն սերը, որ նրա հոտոտելիքը սրել էր Դավթի թաշկինակը հոտառությամբ ճանաչելու աստիճան, նույնիսկ այդ մեծ սերը ի վիճակի չէ խախտելու այն երդումը, որ տվել էր խանդութը՝ ամուսնանալ միայն այն տղամարդու հետ, ով կկարողանա իրեն գետնել:

Խանդութը թշնամու արյամբ ողողված դաշտում կռվի է բռնվում իր սիրեցյալի հետ: Աղջիկը նրան չի ճանաչում, բայց Դավթի գիտե, թե ով է իր դեմ մարտնչողը: Խանդութի այս գոտեմարտը առավել ցայտուն է դրսևորում նրա դյուցազնական ներքնաշխարհը:

Որքան իր ուժի և հակասական ամբողջության մեջ գեղեցիկ է խանդութը, նույնքան գեղեցիկ է և նրա մահը: Իր մահվամբ խանդութը կյանք է տալիս երկու աղբյուրի, որոնք բխում են այն ժայռից, որի վրա փշրվում է իր «ամենման Դավթի» դին, տեսնելով աշտարակից իրեն ցած նետած հավատարիմ կնոջ կուրծքը:

Համա խանդութ էլած տանիք,-  
 Բարձր էր իրենց տանիք,  
 Քարերու վրա էր շինած,-  
 Ամեն կողմ կիրիշկեր, տեսներ,  
 Դավիթ ո՞ղջ կգա, թե՞ մեռած:  
 Խանդութ իրիշկեց, տեսավ, որ  
 Ջրինդ խաղալով կը գան էղոնք,  
 Դավիթ հեծեր է մեկ ուրիշ ձի,  
 Իսկի չի խլվյա տեղեն:  
 Էն հասկացավ, որ Դավիթ մեռած է:  
 Ասաց.  
 «Որ ածեց, էկավ,  
 Որ չածեց, էկավ,  
 Ին՝ կանաչ կտրիչ Դավիթ չէկավ»:

Էն քոփակ Ցռան Վերգոն  
 Էնտեղ տանիքի վերան կայնած էր.  
 Առաջ էկավ, վերցուց, ասաց.  
 - Դավիթ մեռած առանց կռիվ.  
 Էն մեռավ, ես քեզի անուշ.  
 Կը պակսի քե կտրիճ Դավիթ,  
 Չի պակսի պարոն էրիկ:  
 Խանդութ դարձավ ասաց.  
 - Ըստուց էտև արև-լուս ինձի հարամ ըլնի,  
 Էտև Դավթին ես աշխարք չեմ մնա:

Էս անգամ խանդութ էլավ բերդի գլուխ  
 Ու էնտեղեն իրեն թալեց.  
 Գլուխն առավ վեր քարին, քար ծակեց, էղավ փոս:  
 Էն փոսի մեջ՝ Սասունա կես շնիկ կորեկ  
 Կը լցնեն ու կը ծեծեն սանդի տեղ:  
 Էնոր ծծերի տեղ հիմի էլ էրկու աղբուր կթալի:

*Յոթ ծուղ ծամի տեղ էլ հիմի կերևա,  
Քանց յոթ սուն կը սեվկտի:  
Ու հիմի էլ սանդ ենտեղ է, բերդի առաջ:*

Դավիթն ու Խանդութը, թե կյանքում, թե շիրիմում՝ օձերի ու կարիճների բների տակ, որտեղից վշտով ու խնաստությամբ լի պատասխան են տալիս իրենց շիրիմին խորհրդի համար այցի եկած Սիերին, մեծ վարպետի կերտած փոխադարձ վսեմ սիրո հուշարձան են:

Շատ չէ նման սիրահարների թիվը, որ պահպանել է մարդկային հիշողությունն իր ստեղծած գեղարվեստական կերպարների մեջ: Արևմուտքում Տրիստանի և Իզոլդայի, Պաուլոյի և Ֆրանչեսկայի, Իրանում՝ Վիսի և Ռամինի, քրդերի մոտ՝ Սամեի և Ջինեի մեջ մարմնավորված փոխադարձ հարատև սիրո գաղափարը հայկական էպոսում իր դրսևորումն է գտել հանձին Դավթի և Խանդութի:

Խանդութ խաթունի կատարյալ հակադրությունն է հանդիսանում Չենով Գովանի կինը՝ Սարիեն:

Նա չի հրապուրում, այլ վանում է իր անսանձ անառակությամբ, կեղծավորությամբ և կամակորությամբ: Սարիեն հանդես է գալիս հելլենական Ֆեդրայի դերում, այն տարբերությամբ, որ Դավթին զրպարտելուց և տնից վտարելուց հետո էլ նա չի հրաժարվում տղայի հանդեպ տածած կրքից: Էպոսում սա միակ կինն է, որն իր մարմնական սերը խառնում է համեղ ուտելիքի և գինու հետ, միակ կինը, ընդունակ որոշելու, թե որքան է թունդ այն գինին, որ մատուցվելու է նրան դուր գալու դժբախտությունն ունեցող պատանուն, գինի, որից Դավիթը պետք է թմրի և ոչ թե քնի:

Իսմիլ խանումն էլ թմրեցնում, հարբեցնում է Սիերին և յոթ տարի նրան պահում գինովության մեջ, Սակայն Իսմիլին ոչ թե կիրք հագեցնող սիրեկան է պետք, այլ արիասիրտ կտրիճ, որ կամա թե ակամա, զգաստ, թե հարբած վիճակում,

Նրան որդի պարգևի: Տակավին չծնված, թեկուզ գահն ամրակնդելու համար անհրաժեշտ, որդու հանդեպ ունեցած սերը արդարացնում է Իսմիլ խանումի գործադրած խորամանկությունը, երբ նա համոզվում է, որ ոչ իր գեղեցկությունը, ոչ էլ ընտրյալ կտրիճին ուղարկած գոտին - ոչինչ չի կարող Սիերին նետել իր գիրկը:

Նա էլ Դեղձունի, Խանդութի նման ինքն էիր համար ընտրություն կատարում, թե ուն հանձնվի, թե ով պետք է նրան որդի պարգևի:

Ո՞վ իմանա, գուցե սա հուշ է այն հեռավոր անցյալից, երբ մայր-կինը, իր տոհմի տնօրենը լինելով, ինքն էր վճռում, թե ով է արժանի իրեն պտղավորելու: Մայրիշխանության կարգերը մոռացության տված ժողովրդական գիտակցությունը իշխող կնոջ, իր համար ամուսին ընտրող կնոջ մասին եղած պատկերացումը պետք է իմաստավորեր նրան թագուհի դարձնելով: Գուցե սրա մեջ է թաքնված այն պատճառը, որ թե Սանասարը, թե Սիերը, թե Դավիթը, թե Փոքր Սիերը ամուսնանում են թագուհիների հետ, որոնց արքունական պալատն իսկույն անհետ չքանում է, հենց որ այդ թագուհիներն ամուսնանում են:

Սակայն իր մյուս բոլոր հատկանիշներով Իսմիլ խանումը մի կին է, որը գերծ չէ և կենդանի մարդու թուլություններից, և թագուհու փառասիրություններից, և իր որդու նկատմամբ ունեցած ջերմ սիրուց ու հոգատարությունից, ինչպես նաև այն էակի նկատմամբ ունեցած սիրուց ու հոգատարությունից, որը նրա կաթով սնվելով, դառնում է նրա որդին: Հոգեորդու եետ ունեցած կապն ապրում է Իսմիլ խանումի սրտում, և, նույնիսկ Դավթի համար ծուղակ պատրաստելու նենգության ֆոնի վրա, տրագիզմով է լի այն տեսարանը, երբ կուրծքը մերկացնելով նա Դավթին աղերսում է հանուն այդ կրծքից ծծած կաթի առաջին հարվածը բաշխել և Թուր-Կայծակով չսպանել Մրսրա Սելիբին:

Հեծավ Ղավիթ Քուռկիկ Չալալին,  
 Գնաց հասավ չուր Ծովասար.  
 Քաշեց իր թուր-Կեծակին,  
 Քըշեց իր Քուռկիկ Չալալին,  
 Եկավ, որ տի զարկեր՝  
 Խսնիլ խաթուն իրեն ծծեր հանեց,  
 Ղավթի առաջ վազեց ասաց.  
 - Ղավիթ, քաղցր ծիծ եմ տվեր քեզի,  
 Ղու իմ կաթի խաթեր եղ զարկ ինձի բաշխի:  
 Ղավիթ ասաց, - Մարե, ինչի՞ դուն զուր հիմնիկ,  
 Մելիքի զարկ կգար մեջ իմ գլխուն,  
 Մեկ մ'էլ չասիր՝ Մելիք, զարկ մի ինձի բաշխի:  
 Ղավիթ իր թուր իջեցուց, տարավ բերեց,  
 Բարձրացուց եղ թուր, համբուրեց,  
 Ղրեց ճակտին, ասաց.- Մարե,  
 Էս մեկ զարկ քո խաթեր:

Այս դրվագը մի այլ միջադեպ է հիշեցնում, երբ Ղավթի մանկության տարիներին նույն Խսնիլ խանունը կուրծքը մերկացնելով նույնպիսի աղերսով բույլ չի տալիս, որ Մըսրա Մելիքը խեղդամահ անի Ղավթին:

Էպոսում Խսնիլ խանունի կերպարն այնպես է կերտված, որ չնայած նրա բոլոր խորամանկություններին ու փառասիրությանը, արդարացվում է այն կաթը, որով նա սնել է «աննման Ղավթին»:

Միակ կինը, որ կարծես խորթ է թվում և էպոսում տրված է աղոտ նկարագրությամբ, կարծես այլատարր է, այլ արյուն է հոսում նրա երակներում, դա Չմշկիկ-սուլթանն է: Նա հանդես է գալիս միայն իբրև էպոսում առկա կանացի հինգ հրապուրիչ կերպարների հակադրություն և միայն այն նպատակով, որ իր փոքրիկ դստերը հաղորդած նենգությամբ կտրի Ղավթի կյանքի թելը:

Չմշկիկ-սուլթանի դյուցազնական խառնվածքը, Ռավթի հետ մտերմանալու ցանկությունը վիպերգության մեջ կյանքի են կոչված ոչ թե սիրածին փորձելու նպատակով, ստուգելու, թե արդյո՞ք տղան արժանի է աղջկան տիրելու, ինչպես այդ անում են Խանդուբ-խաթունը և Գոհար-խաթունը, այլ հետևանք են վիրավորված հպարտության, անսահման խանդի, փրած երիտասարդին վերադարձնելու կամ նրա կյանքը խլելով, նրան մրցակցուհուց խլելու անզուսպ ցանկության:

Սա միակ կինն է ամբողջ էպոսում (եթե չհաշվենք խլաթցի պառավ ջադուհի միջանկյալ, իր տրագիգմով հանդերձ անեկդոտային կերպարը), որն իր կյանքն ավարտում է ոչ թե սիրո հանգամանքներում և հանուն փրո, այլ ատելության հանգամանքներում, հանուն վրեժի ընկնում է Քուռկիկ Ջալալու սմբակների տակ և ջախջախվում:

Որպես էպոսի չորրորդ ճյուղի հերոս հանդես է գալիս Ռավթի որդին՝ Փոքր Սիերը:

Գերեզման է իջնում կապուտաչյա աղջկա ծեռքով սպանված Ռավիթը, նույն գերեզմանն է իջնում Ռավթի մահվան վշտին չդիմացած Խանդուբը, և մեն-մենակ է մնում Սիերը, որ երկրից-երկիր է դեգերում, ջանալով վերականգնել արդարությունը, հաղթում է թշնամու գորքին, լեռներից վիթխարի ժայռեր գլորելով քաղաքին սպառնացող գետի մեջ, հեղեղից փրկում մի ամբողջ քաղաք: Սակայն նա շուտով ուժասպառ է լինում, այլևս չի կարողանում պայքարել անարդարության դեմ: Այցի է գնում հոր և մոր շիրիմին: Աղեքսում է հորր ուղի ցույց տալ իրեն, քանի որ այլևս ի վիճակի չէ ապրելու, իսկ հողը չի տանում նրա ծանրությունը: Ռավիթը խորհուրդ է տալիս մտնել ժայռի մեջ և սպասել մինչև հին աշխարհը կործանվի, ստեղծվի նորը, երբ ցորենի հատիկը ընկույզի չափ կլինի, իսկ գարին՝ մասուրի չափ: Ռա կլինի Սիերի ազատության օրը, և նա դուրս կգա քարանձավից: Սիերը ճանապարհ է ընկնում հիշյալ ժայռը գտնելու: Նրա երկրային կյանքի վեր-

ջին քայլերը կապված են հետևյալ միջադեպի հետ: Ոստանա կապանի իշխանը, ճանապարհին ցանց նետելով Միերի ու նրա նժույգի վրա, աշխատում է նրանց գերի վերցնել: Այդ ցանցի մեջ թփրտալով և ջանալով դուրս գալ որոգայթից, Միերը տեսնում է, որ իր ոտքերն արդեն խրվում են ոչ թե ձյան, այլ հողի մեջ: Գետինը չի տանում նրա և ձիու ծանրությունը:

*Ձիու ոտ չէր դադրի վեր հողին,  
Որ գուտքեր կթալեր՝ կէրթար մեջ հողին,  
Հող առջև թուլացեր էր,  
Չէր դադրի առջև Միերին:  
Միեր ասաց. «Հայ-հո՛յ, գուր է,  
Գետինն էլ հալեվորցեր է,  
Ինձ ձիու ոտաց տակը չի դիմանա»:  
Օր կեսօր էր, քանի քշեց,  
Չին թաղվավ չուր հրիկուն:*

Միերը մարտահրավեր է նետում Աստծուն, նա ուզում է վերջ տալ անարդարությանը: Նրա դեմ հրեշտակների շքախմբով կռվի են ելնում երկրային ուժերը: Միերն սպառնում է, սակայն անկարող է խոցել: Այդ ժամանակ, որպեսզի իմանա՝ ի՞նքն է իրավացի, թե՞ Աստված, նա ինքն իր հետ պայման է կապում. եթե թրի հարվածին ժայռը չդիմանա, ուրեմն՝ ինքն է իրավացի, իսկ եթե դիմանա, ուրեմն՝ իրավացի չէ: Ժայռը չի դիմանում թրի հարվածին, ծեղքվում է, և ոտից գլուխ գինված Միերը ձիով ներս է մտնում:

Ըստ ավանդության և էպոսի, ամեն տարի, Համբարձման և Վարդավառի գիշերը, Վանա միջնաբերդից ոչ հեռու գտնվող Ագռավու Քարը բացվում է, Միերը դուրս է գալիս քարանձավից, փորձում է հողի ուժը և համոզվելով, որ եողը չի կարող դիմանալ իր ծանրությանը, վերադառնում է հետ:

ժայռը հազվադեպ է բացվում: Մի անգամ ինչ-որ հովիվ տեսնում է, որ ժայռը բացվել է, բայց Միերը դուրս չի գալիս: Հովիվը հարց է տալիս, թե ե՞րբ պետք է դուրս գա: Միերը պատասխանում է, որ դուրս կգա այն ժամանակ, երբ ցորենի հատիկն ավելի խոշոր լինի, քան ընկույզը, և երբ գարին ավելի խոշոր կլինի, քան մասուրը\*:

Փոքր Միերը՝ հոր մահվան դաժան վրիժառուն է, բնութագրված է մի քանի դաժան գծերով: Սակայն նրա մոտ ցայտուն են ընդգծված սասունցի բոլոր հերոսներին հատուկ կողմերը: Սա էլ իր պապի, Միերի մնան գետնի համար չափից դուրս ծանր է: Երբ քայլում է, ոտքերը խրվում են հողի մեջ: Մեծ Միերն այս իմաստով մնան է Սվյատագորին: Փոքր Միերի ոտքերն էլ հողի մեջ են թաղվում, բայց ոչ թե այն պատճառով, որ շատ է վիթխարի, որ շատ է ծանր այլ այն պատճառով, որ հողը չի կարող և չի ուզում տանել նրա ծանրությունը, աշխարհը հոգնեցրել է դյուցազնին իր անարդարությամբ:

Այս ճյուղի հերոսուհին Գոհար-խաթունն է:

Ինչ որ մանություն կա Արմաղանի՝ Մեծ Միերի կնոջ և Գոհար-խաթունի Փոքր Միերի կնոջ միջև: Դա ամուսնուն հնազանդվելն է, որի համար երկուսն էլ զոհվում են՝ Արմաղանը հանուն չույս աշխարհ եկող մի նոր կյանքի, իսկ Գոհարը այն բանի, որ պարզապես հայրենի Սասունը պաշտպանելու համար Միերը նրան բոլորովին միայնակ է թողնում և բռնում պանդխտության ճանապարհը: Գոհար-խաթունին մահից չի փրկում Միերի թողած մկունդը:

\* Հետաքրքրական է, որ Հայաստանի շատ վայրերում ցույց են տալիս Դավթի և Միերի հետքերը: Սուկս գավառում ինձ ցույց են տվել Բաբմամա կամուրջը, ուր Դավթը ընդհարվում է Արսրա Մելիքի երկու փախկնաճների հետ: Իսկ վան քաղաքի մոտ, միջնաբերդից չորս կիլոմետր հեռավորության վրա տեսել են Միերի եռյակավոր դուրը: Դա իրոք զուտ հիշեցնող մի քանդակ է վիթխարի ժայռի վրա՝ սեպատառ մակագրությամբ: Քարանձավի մուտքի առաջ, ժայռի մեջ մի փոքր փոս կա՝ դա այն տեղն է, ուր դուրը բացվելուց առաջ, ամհամբերությունից սմբակով իպիլ է Քուտկիկ Տալս լին:

Ինչ-որ անսովոր նազանջով է լի Գոհար-խաթունի կերպարը և այն օրերին, երբ նա մրցում է Միերի հետ, և այն ժամանակ, երբ սրտաշարժ հոգատարությամբ պահպանում է Միերի անդորրն ու առողջությունը, որն այնքան էլ ապահով չէր դյուցազնի համար նեղ վրանի տակ, և այն պահերին, երբ ճակատագիրը նրա շուրթերով նախագգուշացնում է Միերին.

«Արևից վախեցիր, Միեր»

## ԷՊՈՍԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՋՈՒԿՆ ՈՒ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

**Ա** ներկա է արաբական գորքի դեմ Դավթի մղած ճակատամարտի, օտարերկրյա հրոսակները հայրենի երկրից դուրս շարտելու մասին ստեղծված գրույցի պատմական աստառը: Այդ գրույցը բաղդատելի է դեպքի ժամանակակից թուվճա Արծրունու (10-րդ դար) այն վկայության հետ, թե ինչպես խութեցիները, իրենց անառիկ լեռներից իջնելով ջարդեցին արաբական գորախումբը և դուրս շարտեցին արաբներին:

Պատմական Հայաստանի գործիչների անուններին հանընկնոդ մի շարք անունների առկայությունը էպոսի տարբեր վարիանտներում հետազոտողներից ոմանց հանգեցրել է այն մտքին, թե հնարավոր է էպոսի բովանդակությունը և առանձին մանրամասնությունները մեկնաբանել իբրև Հայաստանի քաղաքական պատմության գեղարվեստական, փոքր-ինչ գունազարդված շարադրանք:

Պատմական հավաստի, այսինքն՝ Հայաստանի գրավոր պատմության մեջ հայտնի անուններից մեկը, որը համընկնում է էպոսում նկարագրված իրադարձություններին, արաբական գերիշխանության դեմ հայերի մղած եզրափակիչ պայքարին, դա Գագիկ Արծրունու անունն է: 10-րդ դարում նա Վանա լճի հարավային ափին կառուցել է Ոստան քաղաքը, վերաշինել Աղթամար կղզու բերդերն ու ամրությունները և այնտեղ կերտել հայ ճարտարապետության ամենասքանչելի հուշարձաններից մեկը՝ շքեղ բարձրաքանդակներով զարդարված Ա. Խաչ եկեղեցին, որի ավարտման հազարամյակը լրացավ մոտ քսան տարի առաջ:

եռանդուն փորձեր են արվել էպոսի գործող անձանց փոխարեն տեղադրել հայոց այլ թագավորների և իշխանների անունները, որոնք առկա են վիպերգության մեջ կամ հիշեցնում են այս կամ այն հերոսի անունը: Սակայն մոռացության է տրվել այն հանգամանքը, որ յուրաքանչյուր նման փորձ կապված է անխուսափելի անախրոնիզմների հետ, քանի որ Գագիկ թագավորն ապրել է 10-րդ դարում, քաջարի իշխան Թեոդորոս Ռչտունին՝ 7-րդ դարում, փառապանձ գորավար իշխան Մամիկոնյանը հայտնի է 5-7-րդ դարերում (արաբական արշավանքից առաջ), իսկ Սանասարը (իր սխրագործությունները 9-10-րդ դարերում կատարած դյուցազն Ռափի պապը) էպոսում հանդես է գալիս իբրև 10-րդ դարում ապրած Գագիկ թագավորի թոռը, որին երբ համեմատում ենք Ասորեստանի Սենեբերիմ թագավորի Սանասար որդու հետ, պարզվում է, որ նա ապրել է իր պապից տասնութ դար առաջ:

«Պատմական» մեկնաբանության այս բոլոր փորձերը անտեսում էին էպոսի բուն պատմական արժեքը, այն չէին դիտում որպես կուլտուրայի պատմության (ոչ քաղաքացիական, ոչ քաղաքական պատմություն) փաստաթուղթ, ուր արտացոլված է հայոց նախահայրերի աշխարհայացքի մշակման պրոցեսը հեռավոր, անուրշելի դարերում, երբ մարդը իր գոյության համար պայքարելով առաջին անգամ սկսեց փորձեր անել ընթրնելու իրեն շրջապատող բնությունը, սխրգունակ ձևով հաստատել բնական երևույթների փոխառնչությունը: Հաշվի չէին առնում այն, թե էպոսում որքան ցայտուն է դրսևորված Հայաստանի բնակչության բազմադարյան սպայքարը (այդ հազարամյակների ընթացքում ինչ անուն էլ կրած լինեն հայերը և նրանց նախնիները), պայքար, որը մղվել է կյանքի, ապրուստի հնարավորություն ապահովելու, կենսական տարրական պայմաններ առեղծելու համար՝ հողից բերք ստանալու, թե վայրի կենդանիներ ընտելացնելու ճանապարհով:

Սոռացության էին տրվում նաև էպոսի արժեքավոր տվյալները Հայաստանի լեռնային շրջաններում գոյություն ունեցող կենսաձևի վերաբերյալ, շրջաններ, որոնք էպոսի ստեղծման ու ձևավորման դարաշրջանում դեռևս չէին մտել ֆեոդալական կյանքի հունը և պահպանում էին տոհմական կարգերի (կլանի) տարրերը:

Սոռացության էր տրվում նաև ֆեոդալների և ֆեոդալական արտոնությունների դեմ ժողովրդի մղած պայքարը, որն իր արտահայտությունն է գտել էպոսում, հենց թեկուզ այն սքանչելի տեսարանում, երբ Դավիթը քանդում է գագանանոցի պատերը, դրանով իսկ (իբրև թե կենդանիների և որսորդական արվեստի նկատմամբ ունեցած հարգանքից) ժխտելով որսի տեր համարվելու ամեն մի իրավունք և մուլնիսկ հաշվի չառնելով հարազատ հոր, իր համար սրբազան, հիշատակը: Չէ՞ որ դա արգելանոցի ոչնչացում էր, ողի համար պայքարում էին (ոչ միայն Հայաստանում) աշխատավորական խավերը, որոնք չունեին ոչ հող, ոչ ջուր, ոչ էլ որսի հնարավորություն: Դավթի ու Ռոբին Հուդի մտքերի գուգադիպությունը պակաս ուշագրավ չէ, քան արդարև քաջերի և հայոց պատմության մեջ փառաբանված իշխան Թեոդորոս Ռշտունու անվան հիշատակումը արդեն ոչ թե առասպելական, այլ ֆանտաստիկ մի զրույցում:

Սոռացության էր տրվում նաև հին Հայաստանի իրական կյանքի մի շարք կողմերի արտացոլումը, ինչպես օրինակ, էպոսում չավազանց ընդգծված կրոնական հանդուրժողականությունը: Թեև «խաչապաշտ» (այդպես են անվանվում սովորաբար հեքիաթներում քրիստոնյաները) գեղեցկուհի Օովինարին «կռապաշտ» խալիֆին կնության տալու անհրաժեշտությունը վրդովմունք է առաջացնում, սակայն ոչ ոք չի տարակուսում, թե աղջիկը կարող է տուժել հավատի հարցում. կարծես նախապես վստահ են, որ խալիֆը «խաչապաշտ» կնոջ հետ կընդունի նաև հայ հոգևորականին: Եվ հիրավի, խա-

լիֆին բնավ չի գայրացնում այն, որ իր պալատներից մեկում ապրելու է քրիստոնյա քահանան: Էպոսում հետագայում էլ քրիստոնեությունը չի հակադրվում որևէ այլ դավանանքի: Պայքարը մղվում է բռնակալների, զավթիչների, Սասնա թշնամիների դեմ, անկախ նրանց դավանանքից, քրիստոնեական եկեղեցին ունեցություններից պաշտպանելու ձգտումից:

Չէ՞ որ Մարութա Բարձրիկ Ասպարածին վանքի կործանումը դիտվում է իբրև բռնության ակտ և ոչ թե սրբության դեմ կատարված ունեցություն, որն արտացոլեր բռնակալների և հարձակման ենթարկված սասունցիների դավանանքների տարբերությունը: Եկեղեցում կատարված ջարդից փրկված հոգևորականին Դավիթը վերաբերվում է հեզնանքով, իմանալով, որ եթե նա իր մոտ է եկել, ապա կամ աղմ է պակաս, կամ մաղը, կամ մոմ է ուզելու, կամ խուճկ:

*Դավիթը կանչեց սարկավազին, ասաց.*

*- Տեսնեմ, արի էստեղ ի՞նչ կասես.*

*Էն ի՞նչ է պակաս իմ վանքին.*

*Խո՞ւնկն է պակաս, թե՞ ձեթն է պակաս, ինչո՞ւ էկար.*

*Շուտ առ, գնա, քո ժամուն հասիր:*

Հոգևորականների հանդեպ ցուցաբերվող վերաբերմունքի տեսակետից բնորոշ է այն դրվագը, երբ Արմաղանը հրաժարվում է Մըսրիից Սասուն վերադարձած իր անուսնուն ընդունել, չուզենալով խախտել Միեդից քառասուն տարի բաժան ապրելու մասին իր արած ուխտը, իբրև պատիժ անուսնու կատարած դավաճանության:

Սիա թե ինչ են ասում այդ կապակցությամբ հայտնվող եպիսկոպոսներն ու վարդապետները.

*Օրինած, օրենքն ի ձեռ վարդապետաց.*

*Քառասուն տարին բերենք, անենք քառասուն ամիս,*

*Քառասուն ամիսն բերենք, անենք քառասուն շաբաթ,  
 Քառասուն շաբաթ բերենք անենք քառասուն օր,  
 Քառասուն օր բերենք անենք քառասուն սիաթ:  
 Օուռ տերտեր մ'էլ կար՝ ասաց.  
 - Քառասուն սիաթ բերեք, անենք մըրկա:  
 Վարդապետ մ'էլ պահպանիչ ասաց.  
 Ասաց.- Աստված ձեզ թողություն շնորհե,  
 էլեք, գացեք, էղեք, էրիկ-կընիկ:*

Օանր երդման այս սրամիտ լուծումը, հատկապես «Օուռ տերտերի» ավելացրած խոսքերը իրենց հումորական հագեցվածությամբ մի կողմից կարծես արձագանքում են 5-րդ դարի պատմիչ Փավստոս Բուզանդի մեջ բերած գրույցին՝ Գովհան Եպիսկոպոսի մասին, որն օգտագործելով իր հոգևորական աստիճանը ավագակից խլում է նրա ձին, մյուս կողմից, հիշեցնում են հումորով լի միջնադարյան հայ առակները, որտեղ վառ կեդարով ներկայացված է հոգևորականության ուխտադրժությունը, կաշառակերությունն ու նենգությունը:

Արդյոք կարելի է ասել, թե ո՞ր թվականին է լույս աշխարհ եկել ժողովրդական էպոսը՝ տասնյակ սերունդների կոլեկտիվ ստեղծագործության պտուղը, եթե նրա հիմնական առանցքը պատմական որոշակի իրադարձությունն է, որի ժամանակաշրջանն ու վայրը նշված չեն եին տեսնելու, շոշափելու, կարդալու կամ վերծանելու ենթակա որևէ հուշարձանով:

Ժողովրդական դյուցազնավեպի ճշգրիտ թվականը որոշելու փորձն արդյոք նույնքան անհրազոր չէ, որքան այն, որ գետի հոսանքը, ջրի համն ու գույնն ուսումնասիրելով փորձես որոշել, թե ե՞րբ է ծնվել այն առաջին առվակը, որը հզոր գետի վերածվելով՝ իր ալիքներն է տանում դեպի մեծ ծովի աղի ջրերը:

Բացի երկրաբանից, որը գիտե գանազանել շերտավորված նստվածքները, հաշվել հնէաբանական արժեքավոր մնացորդներ պարունակող հարյուրավոր ու հազարավոր նուրբ, խստորեն չափավորված պարբերական շերտեր, նրանից բացի ո՞վ կհանդգնի լուծել այս խնդիրը:

Սակայն ի՞նչը կարող է ավելի դյուրին լինել, քան որոշել ե՞րբ է գետն իր հունը փոխել, եթե ջուրը քանդել տարել է իր նոր ճանապարհին ընկած, պատմական կյանքով ապրող մի քաղաք, որի ավերակները արևոտ օրերին պարզ երևում են վերևում ծփացող հստակ ջրի հատակին: Այստեղ երկրաբանն իր տեղը զիջում է պատմաբանին: Պատմական գիտությունը, որը տիրապետում է մարդկային ձեռքերի սխրագործություններն հետազոտելու բազմազան եղանակներին, կարող է մեծագույն ճշգրտությամբ որոշել, թե այդ քաղաքի գոյության ժամանակը, թե այն թվականը որով նշված են նրա վերջին օրերը, վրա հասած աղետից առաջ:

Նույն դժվարություններն է հարուցում նաև ժողովրդական էպոսը, այն էլ մի այնպիսի էպոս, որն ընդգրկում է մի քանի սերնդի պատկանող հերոսների կյանքը, առասպելական գործերն ու սխրանքը: Այդ հերոսներն իրենց վրա և իրենց մեջ կրում են հարյուրավոր շերտավորումներ, որոնք գոյացել են մարդկային հասարակության աճին ու զարգացմանը համընթաց, երբ մարդն սկսում էր պատկերացում կազմել ընթացքի, նրա ուժերի և այդ բնության մեջ տեղի ունեցող պայքարի մասին:

Էպոսի առասպելական մասերի թերագնահատումը, գրեթե արհամարհական վերաբերմունքը «հեքիաթային» տարրերի նկատմամբ (դրանք իբր թե եղծում են հայ հերոսների փառահեղ սխրագործությունների պատմությունը) հետազոտողներից ոմանց բերին այն եզրակացության, թե մենք էպոսի ծագումը պետք է վերագրենք մեզանից մեկ հազարամյակ առաջ ընկած ժամանակաշրջանին:

Իրականում գործը բոլորովին այլ բնույթ ունի: Հնարավորություն կա հաստատելու, որ էպոսում ընդգրկված հիմնական դրվագները իրենց ձևավորումն ստացել են մոտ մեկ հազարամյակ առաջ, առասպելական հերոսների սխրագործությունները հարմարեցվել են արաբ նվաճողների դեմ հայ ժողովրդի մղած համառ պայքարի իրադրությանը:

«Աստունցի Դավթի» ձևավորման ժամանակաշրջանը բնորոշելու համար մեծ նշանակություն ունի այն հանգամանքը, որ էպոսի բաժիններից մեկում մենք գտնում ենք 7-րդ դարում Հայաստանի դեմ կատարված արաբական արշավանքի արտացոլումը, արաբ հարկահանների առկայությունը:

Էպոսի ստեղծումն ու ձևավորումը պետք է վերագրել այն ժամանակաշրջանին, երբ Հայաստանում հաստատվեց (ոչ անմիջապես) արաբական տիրապետությունը:

Այս կապակցությամբ չափազանց մեծ արժեք է ներկայացնում աննշան թվացող մի մանրամասնություն: Այնտեղ ուր խոսվում է խալիֆի մասին, նա շարունակ «կռապաշտ» է հորջորջվում: Այդ հորջորջումը երկար ժամանակ պահպանվում էր Թուրքիայում ապրող հայերի շրջանում: Սա անշուշտ ոչ թե մահմեդականների «միաստվածությունը» ժխտելու ցանկությունից էր բխում, այլ մահմեդականների շրջապատում տեղի ունեցող խոսք ու գրույցի մեջ «մուսուլման», «մահմեդական», «խալամ» բառերից խուսափելու անհրաժեշտությունից:

Սակայն էպոսում տրվում է «կռապաշտ» բառի հետագա մեկնաբանությունը, երբ այն գործ է ածվում խալիֆի հասցեին, «կռապաշտ» բառից կարծես հեռանում է մի ամբողջ միջադեպ, մի ամբողջ պատմություն այն մասին, թե ինչպես խալիֆն աղոթում է իր կուռքերին, թե ինչպես խալիֆի մեհյանում դրված կուռքերից «Կրտսեր կուռքը» խալիֆին չի օգնում, և օգնության է հասնում «Երեց կուռքը», թե ինչպես

կուռքերը խալիֆից մարդկային զոհաբերություն են պահանջում, թե ինչպես կարող է պահպանվել կամ չպահպանվել մարդկային զոհաբարության ծեսը: Մինչդեռ բոլոր բանասացները, առանց բացառության, տասնյակ տարիներ հարևանություն են արել մահմեդականների՝ թուրքերի կամ քրդերի հետ և հիանալի գիտեն, որ իսլամի մեջ ոչ մի կուռք էլ չկա:

Մովսես Խորենացու և Թովմա Արծրունու երկասիրություններում հիշատակված հայկական հինավուրց ավանդության համաձայն, Սանասարի (ոչ էպոսի հերոսի) հայրը Սենեքերիմ թագավորն է, որին ըստ աստվածաշնչի և ասորական աղբյուրների, սպանել է իր որդին: Այսպիսով, սույն մանրամասնության մեջ (բնավ ոչ պատահական) պահպանվել է էպոսի զարգացման նախնական էտապի արձագանքը, մի էտապ, որը նախորդում է հայերի ծանոթացմանը իսլամին, նախորդում է արաբական նվաճմանը և կապ ունի առավել հին շրջանի պատմական փստերի հետ: Նշանակալից է այն, որ վարիանտներից մի քանիսում խալիֆի փոխարեն հանդես է գալիս Սենեքերիմ թագավորը:

Մյուս կողմից երկրորդական թվացող մի մանրամասնություն ևս վկայում է, որ «Սասունցի Դավթի» մեջ արտացոլված են էպոսի ձևավորման ընդունված ժամանակաշրջանից ավելի ուշ կատարված պատմական մոմենտներ: Այն գորքերը, որոնց հետ Դավիթը կռվի է բռնվում Խանդութ-խաթունի մոտ գնալիս, ուղարկված էին օտարազգի բռնակալ Պապ-Ֆերենկի կողմից, որի անվան մեջ դժվար չէ կռահել «Ֆրանկների պապին» - Զոռմի պապին: Զայեը ֆրանկների և պապի մասին գիտեն միայն խաչակրաց արշավանքների շրջանից: Սակայն Զոռմի պապի «պատմությունը» և «ֆրանկությունը» ոչ մի այլ կերպ չի արտացոլված, բացի նրա անվան հիշատակումից (հայերը ֆրանկ են անվանում առհասարակ բոլոր եվրոպացիներին, խաչակրաց արշավանքների մասնակիցներին, իսկ ժամանակակից խոսակ-

ցության մեջ՝ կաթոլիկներին, անկախ նրանց ազգությունից):

Չափազանց հետաքրքրական է այն հանգամանքը, որ էպոստոմ հիշատակված պատմական գլխավոր անուններից ոչ մեկը չի վերաբերում 10-րդ դարի առաջին կեսից ուշ ընկած ժամանակաշրջանին: Եթե շարունակվեին էպոսի մեջ թափանցել հետագա շրջանի պատմական խոշոր անձանց հետ առնչվող փաստերը, ապա այդ անուններն իրենց արտացոլումը կգտնեին պոեմի այս կամ այն բաժնում: Ժողովրդական էպոսի առանձնահատկությունը, եթե այն որևէ ձևով շոշափում է պատմական իրադարձությունները, այն է, որ այնտեղ նույնիսկ երկրորդական գործող անձինք ունեն իրենց անունները, քանի որ վիպերգության մեջ ոչ մի հերոս առանց անվան չի կարող գործել:

Էպոսի ձևավորման ժամանակաշրջանը որոշելու փորձեր կատարելիս պետք է հաշվի առնել նաև էպոսի առանձին մասերը, հատկապես Դավթին վերաբերող մասերը՝ փոքրասիական հույների և արաբ նվաճողների պայքարն ու սահմանագծային ընդհարումներն արտացոլող բյուզանդական «Ասք Դիգենիս Ալրիտասի մասին» էպիկական պոեմի հետ զուգորդելու ենարավորությունը: Այդ պոեմի մի շարք մոմենտներ, որոնք ռուս գրականության մեջ մուտք են գործել ոչ ուշ քան 12-րդ դարը, «Սասունցի Դավթին» վերաբերող ասքի մերձավոր զուգահեռներ են:

Հետազոտողները հայկական հին տարեգրություններում և հայ հին հեղինակների մոտ համառորեն տեղեկություններ էին որոնում հայկական մեծ էպոսի մասին, սակայն ապարդյուն:

Ինչպես Փոքր Սիերի համար տեղ չկար հին աշխարհում, այնպես էլ գրքերում տեղ չկար հայ ժողովրդի հույսերն ու ձգտումները հիշատակելու համար, ժողովուրդ, որ հող էր հերկում, իր անասուններն արածացնում, հանապազօրյա ծանր աշխատանքով վեր խոյացնում վիթխարի տաճարների և հզոր անրոցների պատերը:

Չէ՞ որ այդ գրքերը տասննհինգ դար շարունակ գրել են այն դասակարգի մարդիկ, որոնք օգտագործելով նյութական ու հոգևոր բարիքներ ստեղծողների աշխատանքը, փակվում էին ամրոցներում, ոչ այնքան հայրենիքի պաշտպանության, որքան այդ ամրոցները կերտողների վրա իրենց իշխանությունն ամրապնդելու համար: Ու՞մ հայտնի չէ, որ ամրոցներ էին կառուցվում ոչ միայն այնտեղ, ուր կարող էին ներխուժել օտարազգի զորքերը, այլև այնտեղ, ուր բխում էր Հայաստանի կենարար ուժը՝ ջուրը: Ու՞մ հայտնի չէ, որ այդ ամրոցներում բազմում էին հողի ու ջրի տերերը՝ ինչպես Ասնասարի սպանած վիշապը կամ մեծ Սիեթի ձեռքով դիտապաստ ընկած դևը: Բազմում էին հողի ու ջրի տերերը:

Հին պատմիչների մոտ հիշատակություն չկա էպոսի, հատկապես նրա առավել իրական, սակավ ֆանտաստիկ բնույթ կրող մասերի վերաբերյալ, որտեղ գլխավոր հերոսների դերում հանդես են գալիս ներքնախավի ընդերքից ելած մարդիկ, որոնք սովոր են հովվական մահակ կամ գութանի մած բռնելու, սակայն չեն զանազանում հին, ժանգոտված գեներ իսկական, կռվի համար պիտանի գեներից, մարդիկ, որոնք պատրաստ են մարտի նետվելու զինված նույնիսկ խաչերկաթով:

Սակայն էպոսի այն մասերի վերաբերյալ, որոնք գուտ առասպելական բնույթ են կրում, հին հեղինակների մոտ կան որոշ ակնարկներ: Դրանց թվում պետք է հիշատակել Սովսես խորենացու անունը, որը խնամքով պահպանել է Հայաստանի հնագույն կոսմիկական էպոսի բազմաթիվ հատվածներ և սիրով հաղորդում է այն գրույցները, որոնք արտացոլում են հայոց թագավորների ու իշխանների փառահեղ գործերը, ասորական մեծ թագավորների հետ նրանց ունեցած ազգակցական կապերը, սակայն չի հիշատակում նրանց, ում այնքան սիրում և օգնում էր Դավիթը:

Հին հեղինակների ուշադրությունը չեն գրավել ոչ հովիվ-

ները, որոնց տոնական հյուրասիրության մասին հոգալով՝ Դավիթը հարուստներից ու քահանաներից խլում է նրանց համեղ ուտելիքը, ոչ էլ հողի մշակները, որոնց իր հզոր ձեռքերի և իր ամենի նժույգի գորությամբ օգնության է հասնում Դավիթը՝ մի ժամում գլուխ բերելով նրանց կատարելիք բազմօրյա աշխատանքը:

Սանասարի մասին Մովսես Խորենացու և Թովմա Արծրունու ասած խոսքերը վերաբերում են ոչ թե էպոսի հերոսներին այլ կիսաառասպելական հին իշխաններին՝ Արարատյան դաշտ տեղափոխված ասորական արքունի տան շառավիղներին: Նրանց մասին արված հիշատակությունները արտացոլում են ասորական թագավորների այն բուն պատմական արշավանքները, որոնք ուղղված էին մի երկրի դեմ, որը երկու-երեք դար հետո կոչվեց Հայաստան, իսկ այդ արշավանքների ժամանակ կրում էր Ուրարտու անունը:

«Սասունցի Դավիթ» էպոսին ամենամակերեսային ձևով անգամ ծանոթանալիս պարզ է դառնում, որ կենտրոնական տեղը գրավում են ոչ թե սկզբում նկարագրված հնագույն հերոսները, ոչ թե այն հերոսը, որով վիպերգությունն եզրափակվում է, այլ ըստ ժամանակագրության՝ միջանկյալ երկրորդ սերնդին պատկանող հերոսը: «Սասունցի Դավթի» մեջ վիպերգված է ընդամենը չորս սերունդ: Մինչդեռ էպոսի հիմնական դեմքը Դավիթն է, որի սխրագործություններն արտացոլող գրույցը տիրապետող է վեպի բոլոր վարիանտներում, և որն օժտված է թե իր նախնիներին՝ պապին ու հորը, թե իր որդուն հատուկ բնավորության գծերով:

Երբ խոսվում է ժողովրդական էպոսի մասին, բնականորեն պետք է որոնել այն միջուկը, որի շուրջը հյուսված է տվյալ էպոսը, և այն ձևն ու նշանակությունը, որ նա ստացել է իր զարգացման ընթացքում:

Բերենք մի օրինակ բուլորովին այլ միջավայրից: Վերցնենք Տրիստանի և Իզոլդայի սիրավեպը: Կարելի է վիճար-

կել (առանձնապես ինձ համար դա արդեն միանգամայն պարզ հարց է), թե ի՞նչն է տվյալ վեպում ավելի էականը՝ առասպելական կո՞ղմը, վեպը որպես կեյտերի կոսմիկական պատկերացումների, գաղղիական ասքերի, Բրիտանական կղզիներում, Իռլանդիայում և անգլո-սաքսոնական ապագա նրկրում տիրապետող ասքերի արտացոլումը դիտելու հնարավորությունը, թե՛ այն, որով վեպը մեզ հասած իր ծնով բնորոշվում է որպես 12-րդ դարի ասպետական վեպ: Ամերկա է, որ այդ վեպն ստեղծվել է այն ծնով, ինչպես մենք գիտենք. համենայն դեպս ոչ կոսմիկական կերպարների շուրջը, այլ սքանչելի ասպետի և հիասքանչ ասպետական կնոջ, տվյալ դարաշրջանի համար միանգամայն իրական կերպարների՝ Տրիստանի և Իզուդայի շուրջը, որոնք և կրում են իրենց վրա վեպը հորինող բանասացներին ու բանաստեղծներին հնագույն դարերից հասած անթիվ անհամար մտապատկերների շերտավորումները:

Նույնանման երևույթ է տեղի ունեցել նաև Սասունցի Դավիթի հետ: Կասկածից դուրս է, որ մեզ հասած էպոսի բաղադրիչ միջուկը Դավթի մասին հյուսված ասքն է: Հիշեցեք, թե խեցու մեջ ինչպես է մարգարիտ գոյանում: Քանի դեռ խեցու մեջ աննշան ավազահատիկի ծնով կողմնակի մարմին չի ներթափանցել, քանի դեռ այս առիթով կենդանին չի հիվանդացել, և նրա վրա չի գոյացել չնչին, աչքի համար անտեսանելի կրաշերտ, ոչ մի մարգարտի մասին խոսք լինել չի կարող: Այնուհետև այդ ելուստի շուրջը շերտավորվում են աղերի ազդեցության տակ գոյացած նստվածքները, և ի վերջո ստացվում է սքանչելի մարգարիտ, որը հետագայում կարող ենք դիտել ու հիանալ:

Նույնն է տեղի ունենում ժողովրդական յուրաքանչյուր ավանդության հետ. նրա հիմքում թերևս աննշան մի կորիզ է ընկած, սակայն այդ կորիզն իր վրա նորանոր շերտեր է ընդունում և հաճախ վերածվում մարգարտի, որը տասնյակ և

հարյուրավոր սերունդների ստեղծագործության արգասիքն է: Այսպես է ստեղծվել նաև «Սասունցի Դավիթ» էպոսը:

Սասունցի Դավթի՝ հայ ժողովրդի սիրած հերոսի մասին հյուսված ասքի հիմքում թերևս ընկած է մի փաստ, որի շուրջը և գոյացել են հերոսի չտեսնված սխրագործությունները փառաբանող մի շարք գրույցներ:

Եթե էպոսը բաժանենք բաղադրիչ մասերի, ապա կտեսնենք, որ ամենապատմական մասը արարներից Հայաստանից արտաքսելու դրվագն է: Երկրային ամենաիրական գծերով բնորոշվում է հատկապես այս բաժինը, այստեղ էլ միաժամանակ կարելի է նկատել մի շարք հանգամանքներ, որոնք հնարավորություն են տալիս էպոսի հիմնական կորիզի ստեղծումը վերագրելու նկարագրվող իրադարձություններից ավելի ուշ շրջանի: Իրադարձությունների ստեղծման միջև պետք է որ ընկած լինի համեմատաբար ավելի քիչ ժամանակամիջոց: Սրա օգտին է խոսում և այն շրջանի ճշգրիտ անվանումը, որտեղից գորքեր են եկել, և այն, որ հազարամյակի ընթացքում գոյացած անթիվ անհամար անախրոնիզմների առկայությամբ իսկ հիմնական կորիզում չկան իրականությանը բացահայտորեն հակասող անախրոնիզմներ: Ամեն ինչ մեզ տանում է դեպի 10-րդ դարը և ոչ ավելի ուշ ընկած շրջան:

Էպոսի առանցքը, անկասկած, կազմել է սասունցիների արաք նվաճողների դեմ դուրս գալու և նրանց քախջախելու իրադարձությունը: Այլ հարց է, որ Թովմա Արծրունու հիշատակած Սասնա ապստամբությունը փոքր տեղամաս է ընդգրկում, որ այդ ապստամբությանը միայն երկու հարյուր հոգի են մասնակցել, որ երկրից արտաքսվել է ոչ թե արաքական խալիֆը, այլ շարքային մի հարկահան: Ժողովրդի հիշողության մեջ պատմական կոնկրետ փաստերին ավելացել են զանազան հարակից գրույցներ, և դրանց մեջ գերմարդկային հատկություններ են վերագրվել շարքային, սովորական մի

մարդու, որը սակայն հերոս է. իր կյանքն է նվիրաբերել հայրենիքին, համախմբել իրոք թույլ, իրոք անօգնական, վատ զինված լեռնցիների ուժերը, նրանց հանել այն ժամանակվա իմաստով հիանալի զինված արաբական զորախմբեիի դեմ: Նույն հերոսին են վերագրել այն բոլոր հատկանիշները, բնավորության այն բոլոր գծերը, որ այդ ժամանակ ունեցել է երգեր հյուսող, եղելություններ վիպող ամբողջ ժողովուրդը: Ժողովրդին հատուկ այս գծերի հանրագումարից էլ հենց ստեղծվում է հերոսի կերպարը, հերոս, որ գերազանցում է արդեն մարդկային չափանիշները, դառնում է հսկա, ընդունակ յուրացնելու մարդկային առօրյա կյանքի սահմաններից բացահայտորեն դուրս եկող հատկանիշներ:

Ծիշտ նույն եղանակով են գոյացել նաև այն գրույցները, որ մեզ են հասել Արևմտյան Եվրոպայի առանձին ժողովուրդների էպոսներից և այլ կարգի ստեղծագործություններից: Դիրավի, հավաստի փաստ չի կարող համարվել այն, որ մի սապետ, ինչքան էլ նա խիզախ լինի, կամրջին կանգնած՝ կարողանա դիմագրավել մի ամբողջ բանակի, և ինքը մնա անխոցելի: Ոչ ոք չի տարակուսում, որ Ռոնսևալի դեմ փայլուն հաղթանակ տարած Ռոլանդի պատմությունն արտացոլում է ոչ թե Ռոլանդի անձնավորությունը, այլ այն ամբողջ դասակարգը, որի ներկայացուցիչն էր նա:

Իսպանացի հերոս Սիդի պատմությունն անշուշտ պարունակում է տասնյակ գծեր, որ ոչ մի կերպ չի կարելի վերագրել առանձին մարդու: Նա այնպիսի ահավոր ուժով է օժտված, որը հատուկ չէ մի մարդու:

Նման պատմությունների գոյացման ընթացքը միանգամայն նույնն է և խոր անցյալում, և մերձավոր ժամանակներում:

Հյուսելով իր գրույցը Յուսուֆի զորաբանակը կոտորող խուլթեցի պատանու վերաբերյալ, հայ ժողովուրդը պետք է որ մտածեր իր այդ հերոսի իմար արժանավոր հարազատ-

ներ գտնելու մասին, քանի որ ժողովրդի պատկերացմամբ անտոհմ մարդը չի կարող հերոս լինել, մինչդեռ հերոսը, այն էլ բազմաթիվ դարեր ապիաժ հերոսը, ժողովրդի պատկերացմամբ պետք է ունենա և հայր, և պապ, պետք է քաջ հայտնի լինի իր ծագմամբ: Այստեղ կատարվում է նույն հետաքրքիր երևույթը, ինչ տեղի է ունեցել մյուս ժողովուրդների տասնյակ հերոսների հետ: Ձուտ երկրային ծագում ունեցող, հոգեկան բարձր հատկանիշներով օժտված և սխրագործությունների ընդունակ մարդուն վերագրվում են դյուցազնական, առասպելական կերպարներին հատուկ գծեր: Ազգակցական կապ է հաստատվում տվյալ ժողովրդի մեջ ապրող առասպելական հնագույն կերպարների և այն հերոսների միջև, որոնք եղել են բանասացների պապերի ժամանակակիցներ:

Դավիթը պետք է նախնիներ ունենար, և նրա համար ժողովուրդը հայր է ընտրում կիսաստված մի հսկայի: Սիերը այնքանով է մարդկային, որ երկնքից երկիր է իջել: Ավելին պատմվում է նաև Սիերի հոր մասին, որը սաղմնավորվել է դեռևս այն ժամանակաշրջանում, երբ աղջիկը կարող էր հղիանալ ջրից: Այսպիսով, Սանասարը ծնվում է այն կույս աղջկանից, որի անունը գրույցներից մի քանիսում ակնբախ կերպով առնչվում է Առաջավոր Ասիայի աստվածուհիների հետ և, մյուս կողմից, ժողովրդական գրույցներում տարածված ձևով նշանակում է «ծվածին»: Օովինարը Սանասարին ծնում է ժայռի վիջից հանկարծ բխած աղբյուրի մի կում ջրից: Սանասարի և Քաջանց թագավորի հիասքանչ աղջկա-կիսահողածին կախարդների արքայի դստեր ամուսնությունից ծնվում է Սիերը, և այսպիսով հաստատվում է Դավթի վերընթաց ծննդաբանությունը:

Սակայն էպոսի կառուցվածքի պատճառով, այն պատճառով, որ Դավթի կերպարը մարմնավորում է հայ ժողովրդի բոլոր իդեալները, այն պատճառով, որ այդ հերոսը պետք է մնա,

ապրի, քանզի այլապես նրա հետ կմեռնի ամբողջ ժողովուրդը, հարուցվում է Դավթի որդու հարցը: Եվ ժողովուրդը նրան որդի է տալիս: Բայց քանի որ էպոսի զոյացման ժամանակ երբեք չեն ստեղծվում առանձին նշանակալից մանրամասնություններ, իբրև որևէ բանասացի նոդաստեղծություն, ուստի և, ըստ անհրաժեշտության, Դավթի որդու կերպարը միայն պապի բնավորության գծերի կրկնությունն է:

Կարող է հարց ծագել, ինչո՞ւ միանգամայն հողածին Դավթի որդին պետք է ծնվեր իբրև հսկա, որն ավելի է կապված բնության ուժերի, տիեզերական ուժերի հետ, քան Դավիթը: Ուղղակի այն պատճառով, որ այդ որդուն վիճակված էր ինչ-որ միանգամայն հեքիաթային վախճանի հասցնել ժողովրդի իդեալները: Եվ ահա այս պատճառով Սիերը պետք է մնար անմահ, կամ էլ էպոսը նրա համար պետք է ստեղծեր անհամար հետնորդներ, որոնք աստիճանաբար մանրամասնում հասնեին այն օրերի մարդու կերպարին, երբ ստեղծվել են «Սասունցի Դավթի» վարիանտները: Բայց ոչ մի բանասաց խնդրին այդպիսի լուծում չի տվել: Հերոսական էպոսը միշտ էլ խզվում է, եզրափակվում զորավոր կերպարով: Պուցազունները կամ առանց որևէ հետք թողնելու զոհվում են, կամ դառնում քար, պարփակվում այդ քարի խորքում, սակայն երբեք չեն թողնում բազմաթիվ և բազմադարյան կյանքի ընդունակ ժառանգներ:

«Սասունցի Դավիթ» էպոսում հին հայերի կոսմիկական հնազույն պատկերացումները, հնադարյան առասպելները, որոնք ստեղծվել են Հայաստանի նախապատմական կյանքի հազարամյակների ընթացքում, և ականատեսների ու նրանց հետնորդների հիշողության մեջ դրոշմված պատմական իրադարձությունները միաձուլվել, մի միասնական ամբողջություն են կազմել՝ երանգավորված պատմականության արտաքին երևույթով:

Այս իրադարձություններն իրենց լայնությամբ ու զորու-

թյամբ, ժողովրդի դրսևորած կուլեկտիվ հերոսության ուժով հարմար հիմք են ծառայել, որի վրա էլ հնագույն առասպելների կուսակվել են, ընդունել հստակ ու կուռ ձևեր: Դրանք վեր են ածվել հերոսներին փառաբանող կապակցված պատմությունների, հերոսներ, որոնք այդ դյուցազնաշրջանի չորս սերնդի գոյաշրջանում ընթացել են իրենց տիտանական ուժի կրճատման, իրենց գերմարդկային չափերի նվազման ուղիով, աշխարհի վերևում ծավալվող արեգնափայլ անսահմանությունից և գեղածիծաղ ծովի անչափելի խորությունից իրենց անմիջական կապը խզելու ճանապարհով:

Հերոսները կորցնում են իրենց երկնա-ծովային հրեղեն ծիով ծովի անդունդից դեպի կիզիչ արևի սկավառակը սյանալու ունակությունը, որպեսզի հիմնավոր բնակություն հաստատեն երկրի վրա, անգիտակցորեն կապ են պահպանում միայն մի տարերքի, հույժ կենարար տարերքի՝ ցրի հետ:

## ԷՊՈՍԻ ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆՈՒԹՅՈՒՆԸ

**Յ**ետագոտողներից ոմանք, նշմարելով էպոսի մեջ Իմտնող մի շարք գրույցների պատմական աստառը, ջանում էին այն բացահայտել, և այդ աշխատանքի ընթացքում ստեղծվեց էպոսի ծագման ֆեոդալական այն կոնցեպցիան, որն անհուսալիորեն փակուղու առաջ է կանգնում, հենց որ հաշվի է առնվում հերոսների աշխարհայացքը, նրանց խորշանքն ընչաքաղցության, իշխելու ծարավի նկատմամբ, բազմիցս դրսևորված անմիջական թշնամանքը թագավորների, կառավարողների, ազնվատոհմների հանդեպ: Այս փակուղին ֆեոդալական կոնցեպցիայի համար դառնում է անտանելի, քանի որ ժողովրդի ընդերքից ելած հերոսը գահ չի բարձրանում, ոչ էլ իշխանական ողյակի տիրակալ է դառնում. քանի Դավիթը ծագում է վանել ոչ միայն զավթիչներին՝ թագավորներին, այլև ազնվատոհմներին, որոնց փոխարեն նա նշանակում է «հասարակ մարդկանց». քանի որ Միերը դուրս է գալիս ոչ թե օտարերկրացիների, այլ Հայաստանում իշխող արյունակից բռնակալների դեմ՝ այն հաստատ հավատով, որ եթե նույնիսկ ընդունեն սասունցիները, միևնույն է՝ «նրանց գերեզմաններին էլ չեն կարողանա մոտենալ թագավորները»:

Չնայած այս բոլոր և բազմաթիվ այլ հանգամանքներին, որոնք կարծես անհնարին են դարձնում էպոսը ֆեոդալական Հայաստանում գերիշխող խավերի ստեղծագործություն համարելը, համենայն դեպս էպոսի ծագման ֆեոդալական կոնցեպցիան ստեղծվեց: Դրա պատճառը հետևյալն է: Հաշվի չառնվեց այն, որ էպոսում արտացոլված աշխարհայացքի,

դեռևս ֆեոդալական հասարակության աստիճանին չհասած հասարակության աշխարհայացքի զգալի մասը զարգացման նախորդ փուլերի մնացուկներն ու արձագանքներն են, լինեն դրանք կոսմիկական առասպելներ, մետեորային երկաթի օգտագործման ասք, մայրիշխանությունն արտացոլող հերոսուհիների կերպարներ (Դեղծուն, Խանդութ-խաթուն, Գոհար-խաթուն), Քեռի Թորոսի ու նրա որդիների՝ նահապետական կարգերն ու տոհմական ընտանիքն արտացոլող նկարագրություն, կամ տոտեմների մնացուկները պահպանած տոհմային կենսածնի գծեր, որոնք արտացոլված են Սասնա կյանքի ընդհանուր նկարագրության մեջ և որոնք իրենց գուլգահեռն են գտնում Թովմա Արծրունու տված Սասնա և Խութի նկարագրության մեջ:

Ֆեոդալական կոնցեպցիայի հիմքում, անկասկած, ընկած է ոչ միայն էպոսում հանդիպող հատուկ անունները բաղադատելու և անվերժանելի անախրոնիզմներն ու անատոպիզմները հաղթահարելու ճանապարհով էպոսը Հայաստանի գրավոր պատմության շրջանակների մեջ խցկելու ցանկությունը, այլ և արմատապես սնանկ, սակայն ֆեոդալական աշխարհայացքով սնուցված կանխավարկումը (պրեզումցիա), որով ֆեոդալական վերնախավի շրջանակներում խստորեն սահմանափակվում է արիության ու հերոսության, սխրագործություններ կատարելու հնարավորությունը:

Հիրավի, հին դպրոցն անցած մարդկանց մեծամասնության մեջ ( ինչ իմաստով էլ վերցնենք «դպրոց» բառը, լինի դա տարրական, միջնակարգ թե բարձրագույն) տասնյակ տարիներ շարունակ մի՞թե չի արմատավորվել այն գիտակցությունը, թե սխրագործություններ կատարողները եղել են ազնվական դասին պատկանող ասպետներ, որոնք կատարելապես տիրապետել են սուր և նիզակ գործածելու արվեստին և իրենց ձեռքերը երբեք չեն «պղծել» աշխատանքով, երբեք ձեռք չեն տվել աշխատանքի գործիքներին: Մի՞թե

տասնյակ և հարյուրավոր տարիների ընթացքում չի մշակվել այն պատկերացումը, թե հոգու վեհությունը, առատաձեռնությունը, արիությունը, տառապյալին օգնելու պատրաստակամությունը, ուրիշներին բաժին ընկած չարքաշությունն իր վրա վերցնելու, հայրենիքը սրով պաշտպանելու պատրաստակամությունը կոչվում է «ասպետություն» («ասպետ», «հեծյալ» բառից, սակայն այդ հեծյալը, ի տարբերություն մյուս մահկանացուների, պետք է իր ծագմամբ իրավունք ունենար ձի նստելու): Մի՞թե տասնյակ ու հարյուրավոր տարիներ շարունակ չի մաշվել այն հասկացողությունը, թե հոգու բարձր հատկանիշները պետք է որոշվեն «ազնվություն» բառով, որը մատնացույց է անում, թե իբր այդ առաքինությունները հատուկ են «ազնիվ» տոհմից սերած մարդկանց, և թե այդ առաքինությունները բնածին են:

Արդյոք գարմանալի՞ է, որ Սասնա տան հերոսների մեջ այս բոլոր բարձր ու վսեմ առաքինությունները տեսնելով, դրանք իրավացիորեն բնորոշելով իբրև ազնվության և ասպետության դրսևորում, ֆեոդալական կոնցեպցիայի ստեղծողներն սկսեցին Սասնա հերոսների նախատիպերը որոնել այն հայ իշխանների մեջ, որոնք ըստ ծագման պետք է օժտված լինեին ազնվատոհմ ասպետներին հատուկ բնավորության գծերով և առաքինություններով:

Սակայն մենք լավ գիտենք, որ պատմության մեջ բազմաթիվ սխրագործություններ կատարել են այնպիսի մարդիկ, որոնք չեն ծնվել պայատական հարկի տակ, իսկ այժմ էլ շատ լավ գիտենք, որ իսկական հերոսությունը հատուկ է նրանց, ում համար մատչելի է սրի, մուրճի և մանգաղի սխրագործությունը, գիտենք, որ սուրն ավելի ամուր է բռնում այն ձեռքը, որ սովոր է բռնելու մուրճը և գութանի մաճը, գիտենք, որ թշնամու գլխին սուրն ավելի ուժգին է իջեցնում այն ձեռքը, որը սովոր է սալի վրա երկաթ կռելու:

Սասնա դյուցազունները մնայով իբրև արիության ու հե-

րոսության օրինակներ, իրենց կապը չխզելով հովվի, հողագործի կամ որսորդի աշխատանքի հետ, եղել են «հասարակ ժողովրդի» զավակներ: Դավթի մահից հազար տարի հետո չարժե նրա գլուխը իշխանական խույրով զարդարել. դա նրան այնպես սազական չէ, ինչպես վայել է նրան ամենակործան թուր-Կայծակին:

Էպոսի ծագմանը վերաբերող ֆեոդալական կոնցեպցիայի գոյացման պատճառը կարելի է մեկնաբանել երկու բառով: Հայ ժողովուրդը մեծադանքի և հարզանքի հասկացությունը արտահայտելու համար ֆեոդալական դարաշրջանից ժառանգել է «պատիվ» բառը, որը տառացիորեն նշանակում է իշխանական խույր, ապորոշ: Եկեք Դավթին մատուցենք իրեն և մյուս դյուցազուններին վայել հարզանք ու պատիվ, առանց նրա գլխին հագցնելու իշխանական խույրը, որից հերոսը խորշում էր իր կենդանության օրով:

Վերջապես, եթե արարների տիրապետության դեմ ուղղված պայքարը, օտարերկրյա զավթիչների արտաքսումը պատկերող էպոսը չստեղծվեր ամրապնդված ֆեոդալիզմի դարաշրջանում, ֆեոդալական հասարակության ներքնախավերում, ֆեոդալական Հայաստանի ժողովրդական զանգվածներում, ապա հեթոսական գործեր դրսևորող գրույցները այս կամ այն կերպ կարտացոլվեին հայ պատմիչների գործերում, որոնց թիվը փոքր չէր ոչ 10-րդ դարում, ոչ էլ հետագայում: Ասկայն ֆեոդալական ազնվականությունից սերած հայ պատմիչներն անտեսել են էպոսն այնպես, ինչպես այն չէր ուզում ճանաչել նաև հայ բուրժուազիան, որը 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբում, հետաքրքրություն ցուցաբերելով իր երկրի անցյալի նկատմամբ, տան պատերը զարդարում էր առասպելական հերոսների և հին Հայաստանի տիրակալների՝ Վաղարշակի, Արտավազդի և մյուսների նկարներով, մինչդեռ արհամարհանքով էր վերաբերվում այն առաջավոր անձանց աշխատանքին, ովքեր բա-

նահյուսական նյութերի գրանցումով մոռացումից փրկեցին հայ ժողովրդի մեծ էպոսը:

Հայ բուրժուազիայի ծիծաղն էր շարժում այն իբր թե «պարծենկոտությունը», որ մի սասունցի կոտորում է թշնամու ամբողջ զորքը, թեև նույն բուրժուազիան հիանում էր ֆրանսիացի ասպետ Ռոլանդի և իսպանացի ասպետ Սիդի հերոսական արարքներով, առանց նկատելու, որ թե Ռոլանդի, թե Սիդի և թե Բոյարդի սխրագործությունների նկարագրության մեջ նույնքան չափազանցված է մարդկային ուժը, որքան Փոքր Միերի կամ Դավթի մասին հայ բանասացների պատմած գրույցներում:

«Սասունցի Դավիթ» էպոսը ժողովրդական է, ժողովրդական ոչ միայն այն պատճառով, որ ապրում է ժողովրդական զանգվածներում և պատմվում նրանց բերանով, ոչ միայն այն պատճառով, որ մինչև վերջին ժամանակներս, մինչև մեր օրերը ապրում է բանավոր պատմվելով, ոչ միայն այն պատճառով, որ բոլոր վարիանտներում լեզուն ժողովրդական է, իր կառուցվածքով հեռու հին կամ նոր գրական հայերենից, այլև, ամենից առաջ, այն պատճառով, որ հերոսների ողջ աշխարհայացքը անխզելիորեն կապված է ժողովրդական ներքնախավերի հետ, այն պատճառով, որ բոլոր հերոսները անխզելիորեն կապված են ժողովրդի հետ:

Միայն ճնշումից և հարկահանությունից հոգնած մարդիկ կարող էին ստեղծել Սասուն քաղաքի հիմնադրման հիասքանչ գրույցը, քաղաք, որտեղ Սանասարն ու Բաղդասարը ժողովրդից հարկեր չեն առնում, մարդկանց չեն շահագործում: Միայն իրենց՝ արյունակից հայ թագավորներից ու իշխաններից ծանծրացած մարդիկ կարող էին ստեղծել այն գրույցը, որտեղ Փոքր Միերն ընդհարվում է ժողովրդին կողոպտող քոյխվայի հետ, որտեղ Ոստանա իշխանը փորձում է գերի վերցնել Միերին և Քուռկիկ Ջալալուն, փորձ, որը չի հաջողվում հեծյալի ու ծիու դիմադրության շնորհիվ:

«Ազնվագարմների» ով և ինչ լինելը փորձելուց հետո միայն ժողովուրդը կարող էր գիտակցել «հասարակ» մարդկանցով նրանց փոխարինելու անհրաժեշտությունը:

Միայն ինն աշխարհն անմիջապես կործանելու անհնարիությունից հուսաբեկված ժողովուրդը կարող էր Սիերին ուղարկել քարանձավ, որպեսզի նա այնտեղ սպասի իր օրվան, իսկ ինքը՝ ժողովուրդը, մինչ այդ պետք է իրականացներ նախնական պայքարը, տեսներ և մագդեղական-բարսոմեական ժողովրդական շարժման, և Սյունյաց ապստամբության, և «ազնվագարմներին» հաղթելու մյուս փորձերի ձախողումը:

Չնայած իր արիությանը, ժողովրդի բարօրության համար կատարած իր սխրագործություններին, ավելի ճիշտ՝ հենց այդ առաքիչությունների պատճառով հերոսներից ոչ մեկը նվազագույն չափով անգամ, չի օգտվում իր ունեցած հնարավորություններից, չի ձգտում հատուկ իրավունքներ ձեռք բերել իր շրջապատում, չի ցուցաբերում փառասիրության նշույլ անգամ, չի ձգտում իր կամքով տնօրինել այն հողը որի համար նա պատրաստ է տալու իր արյունը, տնօրինել այն ջուրը, որը բոլոր դյուցազունների ուժի ակունքն է, ամբողջ ժողովրդի կյանքի հիմնական պայմանը, այն ջուրը, որ նրանք ազատում են դեերից՝ նրա կենարար շիթերը ժողովրդին տալու համար:

Սասնա հերոսներից յուրաքանչյուրի համար առիթ է ընձեռվում (այն էլ ոչ թե մի անգամ, այլ բազմիցս) հասնելու բարձրագույն իշխանության և բազմելու գահին: Սակայն նրանք շարունակ հրաժարվում են այդ հնարավորությունից: Խալիֆի դատաստանը տենելուց հետո, ողջ մնացած գորախմբերն ու մյուս հպատակներին իրենց թրի տակով անցկացնելուց հետո Սանասարն ու Բաղդասարը, հաղթողների իրավունքի համաձայն, փոխանակ գահ բարձրանալու, հեռանում են խալիֆի երկրից: Նրանք մերժում են նաև իրենց պապի՝ Գագիկ թագավորի խնդրանքը, երբ սա առաջարկում

է, ժառանգական իրավունքի համաձայն, բազմել իր գահին, և ճանապարհ են ընկնում դեպի իրենց կառուցած Սասունը:

Սանասարի որդի Սիերը մերժում է Իսմիլ-խանունին, երբ սա առաջարկում է ստանձնել Մըսրա գահը, ինչպես Դավիթը Մըսրա Մելիքին հաղթելուց հետո չի ցանկանում բազմել Մըսրա Մելիքի գահին և այն հանձնում է Մելիքի մորը՝ Իսմիլ-խանունին: Փոքր Սիերը նույնպես մերժում է իր պաշտպանության տակ առած հալեպցի քառասուն թագաժառանգներին, որոնք նրա հետ եղբայրանալով՝ խնդրում են ստանձնել Հալեպի գահը: Եվ գահից հրաժարվելու այս բոլոր դեպքերում էլ չորս դյուցազուններն իրենց հրաժարականը արտահայտում են պարզ ու անպաճույճ բառերով, մի տեսակ հուզիչ, սակայն անսասան՝ հավատով լցված դեպի իրենց վարմունքի ճշմարտացիությունը:

Գահի հանդեպ Սասնա հերոսների ունեցած այդ վերաբերմունքին էպոսը չափազանց սուր ձևով հակադրում է իշխանների ու եպիսկոպոսների՝ գաեղ ձեռք գցելու վարմունքը: Նշանակալից է իշխանների և եպիսկոպոսների պատասխանը Սեծ Սիերի այն հարցին, թե ինչպե՞ս վերաբերվի ինքը Իսմիլ-խանունի առաջարկին.

*Ուրիշ թագավորաց տեղ էլ կուզենք հալա գավթես:  
Իսմիլ խաթուն որ կը կանչեն՝ ինչի՞ չ'երթաս:  
Էտա հազրր տեղ է՝ շուտ գնա... Մըսրր տիրապետի:*

Սիերը՝ ամբողջ Սասնա հույսն ու ապավենը, չի եղել ոչ թագավոր, ոչ իշխան, թեև (գուցե իր հոր՝ Սանասարի հետ ունեցած կապի հետևանքով) իրեն թույլ է տալիս կառուցելու պարսպապատ գազանանոց: Սասունցի Դավիթը և այս բոլոր հերոսները աշխարհից հեռանում են իբրև ներքնախավին պատկանող այնպիսի մարդիկ, ինչպիսին նրանց շրջապատում էին: Այս չորս հերոսների անունները ժողովրդի

հիշողության մեջ չեն աղարտվել ու խճողվել ոչ մի տիտղոսով կամ պատվավոր կոչումով:

«Սասունցի Դավթի» հերոսներն ամուսնանում են թագուհիների հետ: Սակայն այդ թագուհիները, էպոսի հերոսների հետ կապելով իրենց ճակատագիրը, կորցնում են արքունիքի հետ ունեցած առնչության ամեն մի հետք. եթե նույնիսկ տառացիորեն հասկանանք էպոսում տրված նրանց տիտղոսները:

Նշանակալից է այն, որ Փոքր Միերի՝ աշխարհի անարդարության և շահագործման դեմ պայքարելու գաղափարը մարմնավորողի բերանով է էպոսը հայտնում հետևյալ խոսքերը.

*Բա մենք Սասնա տներն չե՞նք,  
Չէ, մենք Սասնա տներն ենք.  
Մենք մեռնենք, մեր գերեզմանի վերա  
Թագավորներ չեն կարնա գա:*

Ջարդելով Պապ-Ֆրենկի գործերը և, ըստ երևույթին, հաշվի առնելով նաև արաբ ծերունու այն իմաստուն խորհուրդը, թե պետք է կոտորել ոչ թե բռնությամբ Սասուն բերված գինվորներին, այլ Մսրրա Մելիքին, Դավիթը գնում է հենց իրեն՝ Պապ-Ֆրենկի կոչված թագավորի հետ անձամբ իր հաշիվը մաքրելու:

*Դավիթ ընկավ Պապը-Ֆրենկի հետև,  
Բռնեց. էնտեղ գլուխ կտրեց:  
Քաղթի մեջ ով մնացեր էր,  
Էնոնց համար թագավոր դրեց.  
Ջոջ մարդեր սպանեց,  
Պստիկներ տեղ դրեց, ասաց.  
- Քանի դուք ժիր եք, կռիվ միք էրթա:*

Էպոսում հիշատակված թագավորներն ու իշխանները հանդես են գալիս որպես դժգույն ուրվականներ: Միայն Սանասարի և Բաղդասարի մասին հյուսված ճյուղում ենք տեսնում կենդանի ու լիարյուն (սակայն հեքիաթային) խալիֆին, որին հակադրվում է իր կերպարով նույնպես հեքիաթային Գազիկ թագավորը: Ռա քնորոշ է մեր էպոսի համար, և մեր էպոսը խստորեն գանազանվում է ինչպես հայ, այնպես էլ Արևելքի մյուս ժողովուրդների մի շարք այլ էպիկական երկերից: «Սասունցի Դավիթը» հիրավի ժողովրդական ներքնախավերի ընդերքում ծնված վիպերգություն է:

Ջավթիչ խալիֆի, Մըսրա Մելիքի կամ նրա զորավարների հասկացողությամբ գոյություն ունեցող պատերազմին սուր կերպով հակադրվում է պատերազմի այն ըմբռնումը, որն առկա է Սասնա դյուցազունների մոտ:

Խալիֆին և նրա զորաբանակը կոտորելուց հետո Սանասարն ու Բաղդասարը ոչ մի ավար չեն առնում: Գոհար-խանումի հորից կարևոր հարկ վերցնող թագավորին ջախջախելուց հետո Փոքր Սիերը գոհանում է նրանով, որ իր աներոջն ազատում է ահավոր լծից, ոչինչ չպահանջելով պարտված թշնամուց:

Առանձնապես ընդգծվում է Դավթի խորշանքը ռազմական ավարի նկատմամբ: Մըսրա Մելիքի դեմ փայլուն հաղթանակ տանելուց հետո Դավիթը մեծահոգաբար ազատ է արձակում Սասնա դեմ ելած նրա զորքը, թույլ է տալիս, որ Իսմիլ-խանումը գնա Մըսրը, իսկ ինքը քեռի Թորոսի հետ վերադառնում են Սասուն ավարով, բայց ի՛նչ ավարով:

*Ինչ կրերեն հետներն էն կռվից.*

*Իսկի բան չեն բերի:*

*Էնոնց բերածն եղավ ջուխտ մի եզ,*

*Լծեցին սել. քցեցին հետևներ.*

*Մըսրա Մելիքի ականջ զարկեց Դավիթ նիզակի ծեր,*

*Դրավ վեր սելին, քաշեցին, բերին,  
Քաշեցին բերին՝ Սասնա քաղաք հասցնեն:*

Դա ոչ թե «ավար» է, այլ Մըսրա Սելիքի կործանման ապացույցը. այդ «ավարն» առանձին սայլով Սասուն բերելը ավելի է ընդգծում այն, ինչ այդ անհավասար ճակատամարտում բոցավառումն էր Սասունցի Դավթի, Քեռի Թորոսի և նրա երեսունութ ուստրերի սրտերը՝ հայրենիքի պաշտպանությունը, օտարերկրյա բռնակալների արտաքսումը, քայց ոչ երբեք զավթելու, ավար առնելու որևէ ցանկություն:

Եվ մի՞թե Դավիթը, արդարության ու մեծահոգության այդ մարմնացումը, կարող էր այլ կերպ վարվել: Երկրից հարուստ կողոպուտով հեռացած՝ խուլբաշու և Կոզբաղնի գորախմբի դեմ անհավասար ճակատամարտում հաղթանակ տանելուց հետո Դավիթը կանչում է սասունցիներին, հայտնում, թե ինչպես պետք է ավարը բաժանել, ամեն մարդ պետք է վերցնի միայն այն, ինչ նրանից խլել են, վերցնի միայն իր սեփականությունը:

*Ժողովուրդ, կընիկ, աղջիկ,  
Քաղքեն տարած ալան-թալան ետ դարձուց,  
Բերեց, հասուց Սասնա քաղաք,  
Կանչեց ժողովուրդ, ասագ.  
- Ամեն մարդ գա, իրեն ապրանք ճանչնա, վերցու:  
Ով որ ապրանք տվե,-  
Թող գա ապրանք վերցու:  
Ով որ ոսկի, փող տվե,  
Թող գա, իրեն ոսկին վերցու:  
Ով որ մեկ կորեկ ավել վերցու,  
Կր ցարկեն, գլուխ կը կտրեն:  
Ամեն իր տված թող վերցու:*

Իսկ երբ Դավիթը բնաջնջում է տարիներ շարունակ Սասունը կողոպտող և իրենց քարանձավում ոսկե լեռներ կուտակող դևերին, ոսկին բաժանում է բոլորին: Ով ինչքան կարողանում է, տանում է: Դավիթը չի մոռանում նաև Քեռի թորոսին ու նրա որդիներին, իսկ ինքը միայն մի ձի է վերցնում:

Սա նույնպես ավարառություն չէ, այլ սեփական բարիքի բաժանում, բարիք, որ արդեն դադարել է առանձին մարդկանց սեփականությունը լինելուց: Այն, որ էպոսի և էպոսն ստեղծող ժողովրդի գաղափարակիր Դավիթը հրաժարվում է ավարից, բխում է ուրիշի սեփականությունը զավթելու հանդեպ տածած խորշանքից, իր սեփականությունը պաշտպանելու, սեփական բարիքները ամեն գնով վերադարձնելու պատրաստակամությունից:

Թերևս պատահականություն չէ հեքիաթներում ու գրույցներում հանդես եկող դևերի ու վիշապների բնակավայրի համընկնումը ոռոգման ակունքների մոտ ֆեոդալների կողմից ընտրված ամրոցատեղի հետ: Դևերի քարանձավներն արդյոք ժողովրդի պատկերացումը չէ՞ն ֆեոդալների գանձարանների, ոսկով լեփ-լեցուն նկուղների մասին, որտեղ շեղջ-շեղջ դիզված է ոսկին, որտեղ ընկած են այնպիսի անօգտագործելի իրեր, ինչպիսին է ոսկե երկանքը:

Չարմանում են, թե որքա՞ն խորն է ժողովրդական իմաստությունը, ժողովրդի նրբագգացողությունը, որով նա ստեղծել է կերպարների մի ամբողջ շարք: Այդ կերպարները վկայում են, որ ժողովուրդը թեկուզ և ազոտ, պրիմիտիվ ձևով պատկերացնում էր իր գլխին այնքան հաճախակի եկած աղետների պատճառը: Ի՞նչ փուլթ, որ այդ բարդ հարցի ըմբռնումը տրված է պրիմիտիվ ձևով, ի՞նչ փուլթ, որ արաբ ծերունու խոսքը վերաբերում է միայն թագավորին, միայն Մըսրա Մելիքին: Մենք լավ գիտենք, որ պատերազմի պատճառը միայն թագավորը չէ, բայց արաբ ծերունու խրատից

հետո Ղափիթն ավելի շրջահայաց է դառնում, քան յոթ որդու հայր զառամյալ ծերունին: Պապ-Ֆրենկին սպանելուց հետո նա չի մոռանում, որ երկրի երեսից պետք է ջնջել բոլոր չար մարդկանց: Այստեղ ժողովուրդը արդեն բարձրանում է դեպի ազնվատոհմների մեղքով իր գլխին եկած դժբախտությունների պատճառը գիտակցելու հետևյալ էտապը, մյուս աստիճանը: Սակայն էպոսի վեհությունը ժողովրդի թշվառության իսկական պատճառների մեջ թափանցելն է: Ժողովուրդն իր հերոսներին ներշնչել է այն մեծ իմաստությունը, որ մարդը պետք է լինի ճշմարտացի և միշտ հավատարիմ մնա իր տված խոսքին: Միերը գիտեր, որ իրեն աղետ է սպառնում, սակայն գնաց, քանի որ հավատարիմ էր իր տված խոսքին:

Ճշմարտացիություն - ահա այն հիմնական գիծը, որով ժողովուրդն օժտում է իր հերոսներին:

Էպոսի հերոսներն օժտված են բոլոր մեծ մարդկանց, առավել ևս ժողովրդական զանգվածներին հատուկ արդարամտությամբ ու մեծահոգությամբ: Հիշենք, թե ինչպես Միերը չի ուզում զինված գոտեմարտել առյուծի հետ: Նա դեն է նետում սուրը, և մարդ ու գազան հավասար գոտեմարտի են մտնում իրար հետ: Հիշենք, թե ինչպես Ղափիթը նախ քնից արթնացնում է հակառակորդի բանակը և ապա նետվում մարտի: Ղափիթը նույնքան արդարադատ է նաև գազանների նկատմամբ. գազաներին չի կարելի սպանել գազանանոցում, որովհետև նրանք գերիներ են, իսկ գերիներին չի կարելի կոտորել: Էպոսի հերոսների մեջ խոսող այս մեծահոգությունն ու արդարամտությունը դրսևորված է նրանց մղած թեժ ծակատամարտերի պահերին անգամ:

Ժողովուրդն իր հերոսներին նկարագրելիս ճշմարտացիորեն երևան է հանում նաև նրանց թույլ կողմերը: Միերը լավ իմանալով, որ ինքը պարտավոր է տուն վերադառնալ անարատ վիճակում, այսուհանդերձ տեղի է տալիս նենգավոր Իսմիլ-խանունի գայթակղությանը և խմում է գինին:

Էպոսի հերոսներն իրենց առաքինություններով առանձնապես թանկ են մեզ՝ սովետական մարդկանց համար:

Հիշենք, թե ինչպես Սանասարն ու Բաղդասարը իրենք են տքնում (այդ հատկությունն ավանդում են նաև իրենց թոռ Դավթին), հսկայական ապառաժներ են կրում-բերում, որպեսզի նախ չքավորների համար տներ կառուցեն, ապա իրենց համար՝ ամրոց:

Եթե նրանք իրոք ֆեոդալներ լինեին, ապա հազիվ թե այդ ձևով վարվեին: Նախ տներ չէին շինի չքավորների համար, որ նրանց չայրեր ամռան արևը, ապա՝ իրենց համար դոյակ:

Էպոսում հիանալի ձևով զուգակցված են աշխատանքից հառնող հերոսությունը՝ ռազմի դաշտում ցուցաբերված հերոսության հետ, որը մեզ համար առանձնապես թանկ է. մենք գիտենք, որ միայն այս հերոսությամբ են զորավոր այն անունները, որ մենք հպարտությամբ ենք արտասանում, այն մարդկանց անունները, ովքեր այսօր մաճ են բռնում, վաղը սրախողխող կանեն ոսոխին, այսօր դարբնի սաչի հետ են կապված ոչ թե շղթայով, այլ աշխատանքի հանդեպ ունեցած սիրով, իսկ վաղը կսավառնեն եթերում, որպեսզի բնաջնջեն մայր երկրի սահմանները խախտողներին:

Սակայն մեզ համար Սասնա հերոսները թանկ են մի այլ պատճառով ևս: Նրանք թանկ են ժողովրդի հետ ունեցած իրենց միասնության գիտակցությամբ, այն ժողովրդի, որի զավակներն են իրենք:

Սասսաների հետ ունեցած կապը դրսևորված է էպոսի ամենահիասքանչ տեսարանում, երբ Դավիթը, Սըսրա Մելիքի դեմ կռվի գնալուց առաջ, հրաժեշտ է տալիս համաքաղաքացիներին ու համագյուղացիներին, անսահման սիրո ու խանդաղատանքի խոսքեր ասելով նրանց.

*Դավիթ էլավ, թռավ վեր իր ձիուն,  
Աստծու տնուն տվեց,*

Դարձավ, առավ խաթրը քաղքցոց,  
 Դարձավ, առավ խաթրը գեղացոց,  
 Առավ Դավիթ խաթրը մարդ ու կնկրտոց, ասաց.  
 - Աղբերներ, քուրեր, դուք մի վախենաք,  
 Աստծու կամքով կ'երթամ ես կոիվ.  
 Օ՛, քուրեր, դուք կացեք բարով,  
 Դուք ինձի քուրություն եք արե.  
 Օ՛, մերեր, դուք կացեք բարով,  
 Դուք ինձի մերություն եք արե:  
 Բարի դրկիցներ, դուք կացեք բարով,  
 Դուք կացեք բարով մե՞ծ ու պստիկով.  
 Իմ դուռ-դրկիցներ, ձեր երես շատ են բռեր,  
 Ինձ հալալ արեք.  
 Բարի տանտիկիներ, ինչ հաց կը թխեք,  
 Դավթի անուն հիշեցեք:  
 Ջահելներ, դուք էլ, ինչ որ քե՛ք կանեք,  
 Դավթի անուն եիշեցեք:  
 Իմ քուրեր, մերեր, իմ լավ դրկիցներ,  
 Մնացեք բարով:

## «ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹԸ» ԵՎ ՄՅՈՒՄ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԷՊԻԿԱԿԱՆ ՋՐՈՒՅՑՆԵՐԸ

Ճայկական էպոսի տեղը հազարամյակների ընթաց-  
քում ստեղծված մյուս վիպերգությունների շար-  
քում որոշելու համար ամենից առաջ անհրաժեշտ է  
քննության առնել այն նմանությունը, որ գոյություն ունի հին  
Հայաստանի կոսմիկական առասպելների և մյուս ժողո-  
վուրդների առասպելական հնագույն պատկերացումների  
միջև:

Ավելի ճիշտ կլինի, եթե այս հարցի քննարկումն սկսենք  
«Սասունցի Դավթի» նախահիմքը կազմող տարրերից, որոնք  
ստեղծվել են էպոսի պատմական մասի գոյացման ժամանա-  
կից շատ հեռու ընկած շրջանում: Այդ տարրերն ստեղծվել են  
այն դարաշրջանում, որը նախորդում է ոչ միայն հայ ժողովր-  
դի գոյացմանը, այլև հետագայում հայ ժողովրդի կազմի մեջ  
մտնող տոհմերի ձևավորմանը:

Խոսքն առասպելական այն կերպարների մասին է, նրանց  
միջև բորբոքված այն պայքարի, որը ծագել է մարդկային հա-  
սարակության զարգացման ընթացքում, արտահայտել այդ  
հասարակության պատկերացումները շրջապատող բնու-  
թյան երևույթների մասին. Անհրաժեշտ է պարզել, թե ինչպե՞ս  
են ծագել այդ կերպարները, ինչով բացատրել տարբեր ժո-  
ղովուրդների ստեղծած առասպելների ու առասպելական  
պատկերացումների նմանությունը, ինչ չափով կարելի է խո-  
սել այդ գրույցների ու պատկերացումների փոխառյալ լինե-



կան կուլտուրայի ասպարեզում որևէ նվաճում էին ծեռք բերում Սիջերկրական ծովի ավազանում և էլի ինչ-որ տեղ բնակվող ժողովուրդները, ապա դրա սկզբնաղբյուրը, այդ «ինչ-որ տեղը» մշտապես համարվում էին Սիջերկրական ծովի ժողովուրդներն ու կուլտուրան:

Մյուս ժողովուրդներին հնարավորություն էր տրվում սեփական պատմության հարցերը, սեփական կուլտուրայի հարցերը, սեփական կուլտուրայի դերը լրիվ կապիտուլյացնելու գնով հաղորդություն առնել միջերկրական կուլտուրայի աղայական սեղանից, իրենց պատմական արժեքը չափելով այդ կուլտուրայից ունեցած իրենց կախման չափով:

Սիայն դեպի հին տրադիցիաներն ունեցած հակումը կարող է հանգեցնել յուրատեսակ ռևանշի պահանջներին, որոնց ականատեսներն ենք մենք դառնում երբեմն: Ռևանշիստական պահանջի օրինակ կարող է ծառայել այն սնանկ փորձը, որով ջանում են հաստատել, թե հելլենական աշխարհայացքի հիմքում ընկած տիտանի մարդկության բարօրության համար անձնվիրաբար պայքարող մարտիկի կերպարը փոխ է առնված Կովկասից դեպի Սև ծովի արևելյան ափը հելլենների կատարած ճանապարհորդության ժամանակ, հին Վրաստանում տարածված Ամիրանի առասպելներին ծանոթանալու ընթացքում:

Այս պնդումը վկայում է, որ տվյալ հարցում հին կուլտուրայի ջահակիր և մարդկային ամբողջ կուլտուրայի ակունքը համարվող ժովուրդներից մեկի անունը ձգտում են նենգափոխել մի այլ ժողովրդի անունով, որը նույնպես բարձր կուլտուրայի ջահակիր ու ստեղծող է, և ինչպես հելլեն ժողովուրդը, ի դեմս իր ոչ նացիոնալիստական խավերի, չի ձգտել իրեն համարել համամարդկային կուլտուրայի միակ ակունքը:

Մարդկային բարօրությամբ ծառայող, այդ նպատակի հա-

մար իր կյանքը նվիրաբերող հերոս հսկայի գաղափարը աշխարհի բոլոր ժողովուրդների մոտ էլ այս կամ այն ձևով ընդհանուր է. և սա մեզ իրավունք չի տալիս ամերիկյան հնդիկների հերոս Յայավաթի մարդկության ծառայի մասին հյուսված ավանդավեպի արմատները որոնելու. Բալկանյան թերակղզում կամ Կովկասում, չնայած հելլենների երկրպագել են Պրոմեթևսին, վրացիները Ամիրանին, արխազները Արոսկիլին, հայերը Միերոն: Նման հերոսի կերպարը, հերոս, որն իր մեջ հայելու կիզակետի նման կենտրոնացնում է բարոյության և մասամբ կրակի համար մարդկության մղած դարավոր պայքարը, անկախ կերպով ծնվել է տարբեր ժողովուրդների միջավայրում, սակայն ծնվելուց հետո հող է ստեղծել իր վրա տեղափոխելու այլ ժողովրդի միջավայրում հանդես եկած համապատասխան հերոսի բնավորության գծերը: Եվ կասկած չկա, որ Պրոմեթևսի առասպելի որոշ տարրեր կարող էին ներմուծված և փոխառնված լինել, հարակցվել հիմնական գծերով արդեն ստեղծված կերպարներին:

Քարին, կրակին, մետաղին նման պայմաններում և տարբեր ժամանակներում տիրապետելը զարգացման նույն ուղին է անցել երկրագնդի զանազան մասերում: Մարդու մտածողությունը, որը պայմանավորվում է նրա տնտեսական կյանքի զարգացմամբ և որն իր զարգացման ընթացքում նույն ուղիով է ընթանում, աշխարհի տարբեր ծայրերում դրսևորվել է համանման ձևերով, համանման կերպարներով, համանման առասպելներով, այդ կերպարների պայքարն արտացոլող ավանդավեպերով: Եվ հազարավոր սերունդների կողմից բերնե-բերան պատմվելով, այդ առասպելները ավանդությունները, բնության գեղանի և մարդու դեմ մարդու մղած պայքարի փորձի այս բոլոր կուտակումները հաճախ մեզ են հասնում զարմանալիորեն նման ձևերով: Կոսմիկական հնագույն կերպարներում չկա ոչ միայն ժողովրդական, այլև ցեղային տնօրեն, քանի որ դրանք ծագել

են այն ժամանակ, երբ տակավին չէին ձևավորվել ոչ ժողովուրդները և ոչ էլ ցեղերը:

Ինչպես առում իր հունով հոսելիս իր մեջ է բնդունում այլ առվակներ, շրջանցում կամ իր հոսանքի տակ է առնում ճանապարհին հանդիպած խոչընդոտները, այդպես էլ կոսմիկական կերպարների մասին հյուսված գրույցներն ու առասպելները, հազարավոր մարդկանց, հադյուրավոր սերունդների կողմից պատմվելով, իրենց մեջ են ընդունում նորանոր գծեր, նորանոր մանրամասնություններ, որոնք հաճախ գալիս են հեռվից, այլ հոսանքներից: Այս առասպելները հազարամյակներ ապրած իրենց ձևով պատմական կյանքի երևույթներն ու իրադարձությունները ծածկում են, միահյուսվում դրանց հետ, առասպելական բնույթ տալիս պատմական դեպքերին, և պատմական երանգավորում մտցնում իրենց, ըստ էության առասպելական բովանդակության մեջ:

Ժողովրդի պատկերացմամբ, հերոսն իր ուժը ստանում է կենարար տարերքի հետ շփվելուց: Չափազանց արժեքավոր է Անթեյի ու Սանասարի գուգադրումը: Ջրով հարուստ, սակայն ցանքատարածություններով աղքատ Հելլադայում Անթեյն իր ուժը ստանում է հողից, իսկ Հայաստանի կյանքի պայմաններում, որտեղ ժողովրդի բարրօրությունն ամբողջապես կախված է ոռոգումից, Սանասարի գորության աղբյուրը ջուրն է:

Հանձինս Սանասարի ու Բաղդասարի, տեսնում ենք այն երկվորյակ հերոսներին, որոնք մի շարք ժողովուրդների մոտ ծնվում են հրաշագործ աղբյուրից. Դրանք են հունական Դիոսկուրները, Կասադոր ու Պուլիդևիկ փրկարար եղբայրները, որոնց օգնությանն են դիմում աղետյալները, և որոնք, ինչպես ենթադրվում է, հանդիսանում են լուսաստղի և իրիկնային աստղի մարմնավորումը: Դրանց համապատասխանում են Հնդկաստանի Ավշինները և Իրանի Ասփինները:

Կենարար ջուրը կնոջ կերպարով, որը նույնպես կյանք է:

շնորհուն, իր արտացոլումն է գտել գեղեցկուհի Արմաղանի կերպարում, որին վիշապից փրկում է Միերը, դրանով իսկ փրկելով նաև աղբյուրի ակը: Սա այն կերպարն է, որ Հունաստանում տեղ է գտել Արգուսի կողմից պահպանվող և Պերսեուսի կողմից փրկված Անդրոմեդի առասպելում:

Ինչպես մեզ հասած և ամենօրյա գործածության մեջ գտնվող այս կամ այն բառի մեջ հաճախ արտացոլվում են խոր հնությունից եկած երևույթներ, վաղուց վերափոխված հասկացություններ, այնպես էլ ժողովրդական բանահյուսության պատարիկներում պահպանվում են մարդու այն աշխարհընկալման արտահայտությունները, որ հատուկ են եղել նրան զարգացման վաղ էտապներում: Ի թիվս նման մնացուկների և ժողովրդի հիշողությամբ մեր օրերը հասած բեկորների մենք հանդիպում ենք նաև առասպելական հնագույն ըմբռնումների, որոնք անչափելիորեն ավելի հին են, քան մեկ ու կես հազարամյակ գոյություն ունեցող հայ գրականության հնագույն հեղինակների հաղորդումները:

«Սասունցի Դավիթ» էպոսում, ինչպես ժողովրդական ներքնախավերից եկող հնադարյան յուրաքանչյուր այլ վիպերգության մեջ, արտացոլված են թե դիցաբանության ու կոսմոգոնիայի առավել լիակատար, ծավալուն պատկերը, թե առասպելաստեղծության զարգացման փուլերը, թե կոսմոգոնիական մտապատկերների այն տարրերը, որոնք իրենց արտացոլումը չեն գտել հայ պատմիչների թանկարժեք աշխատությունների էջերում: Այդ կերպարներն ու մտապատկերները առանձնապես գնահատելի են այն պատճառով, որ սկիզբ առնելով մարդկային զարգացման այն էտապներում, որոնք նախորդում են հետագայում, հայ ժողովրդի կազմի մեջ մտած ժողովուրդների կազմավորման շրջանին, դրանք իրենց մեջ պարունակում են այլ ցեղերից, այլ ժողովուրդներից ավանդաբար մեզ հասած կերպարներին հարազատ գծեր:

Նման կերպարների ու պատկերացումների թիվը մեծ է և ոչ մի կերպ չի կարող սահմանափակվել մարդկանց բարօրության համար պայքարող հերոսին վերաբերող պատկերացումների վերոհիշյալ շրջանակով, քանի որ գերագույն ուժերի դեմ պայքարող մարտիկի այդ կերպարը կարող էր հանդես գալ միայն այն բանից հետո, երբ արդեն ստեղծվել են նույն այդ գերագույն ուժերի մասին եղած պատկերացումները:

Բնության հիմնական երևույթները և մարդու համար շոշափելի առավել գործոն ուժերը պետք է որ ամենից առաջ մարմնավորվեին այս կամ այն մարդակերպ, իսկ ավելի վաղ կենդանակերպ ձևերի մեջ: Եղել են միջանկյալ տապաներ, երբ կենդանակերպ էակները վերափոխվել են մարդակերպների, կիսամարդ-կիսակենդանի հիբրիտային էակների, ինչպես նաև այնպիսի էակների, որոնք թռչունի, շան, այծի կամ ձկան հատկանիշներ են պարունակում, նայած թե առասպելների զարգացման որ էտապին են վերաբերում: Այդ էակներն են հիշեցնում օսեթական առասպելի Պասկոնձին, հայկական առասպելի Պասկուջը, սլավոնական առասպելի Պասկուդը, որի անունն է միայն հասել: Պրիմիտիվ մարդու մտածողության սահմանափակությունը, որտեղ էլ ապրելիս լինեի այդ մարդը և այն պատկերացումների սահմանափակությունը, որոնցից նա կարող էր օգտվել բնության ու նրա երևույթներն արտահայտելու համար, հանգեցրել են նրա գիտակցության համար անմատչելի, ահարկու բնության երևույթների նույնանման դրսևորմանը, նույնիսկ այն դեպքում, եթե այդ պատկերացումներն ստեղծվել են աշխարհագրորեն անանցանելի տարածություններով, ժամանակի տեսակետից բազմաթիվ դարերով, երբեմն նույնիսկ հազարամյակներով իրարից հեռու մարդկանց մտածողության մեջ:

Դեպի այս խոր արմատներն են տանում տարբեր ժողովուրդների ստեղծած, մեծ մասամբ իրար այնքան նման

առասպելներն ու վիպերգությունները կոսմիկական հերոսների մասին: Սակայն այս առասպելների ու վիպերգությունների զարգացման և զանազան ցեղերի ու ժողովուրդների միջև սկսված հաղորդակցության ընթացքում այս կամ այն կողմին հատուկ կերպարներն ու մտապատկերները կարող էին փոխադարձաբար ազդել միմյանց վրա, միմյանց վրա շերտավորվելով քարդանալ:

Նման շերտավորման ու քարդացման օրինակ կարող է ծառայել և այն պատժի տեսակը, որին դատապարտվում է Պրոմեթևսը, պատիժ, որ աշխարհագրորեն կապված է Կովկասի հետ և կրում է վրացական Ամիրանի, օսեթական Ամրանի, աբխազական Աբրսկիլի և այլ տիտանների մասին հյուսված առասպելների հետքերը: Սակայն այս շերտավորումները ոչ մի հիմք չեն տալիս Պրոմեթևսի կերպարը հիմնական գծերով կախման մեջ դնել կովկասյան վիպերգություններից: Մահվան հանգամանքը կամ մահապատժի ձևը չի կարող հիմք հանդիսանալ այս կամ այն հերոսի կամ հսկայի կերպարի և տիպի համար, ճիշտ այնպես ինչպես ասենք փառապանծ կազակ Երմակ Տիմոֆեևիչի առասպելներով պարուրված այդ հերոսի հիմնական գիծը չի կարելի համարել նրա վախճանը Իրտիշի փրփրահույզ ալիքներում:

Փոփոխված և կարծես թե լիովին մարդկայնացված, կոսմիկական հնագույն կերպարների կողքին հայկական ժողովրդական էպոսում հանդիպում ենք Միերի, Չենով Յովանի և Ցռան Վերգոյի եռյակին: Միերը, որը, ինչպես տրված է էպոսում, բոլոր հերոսներից կատարյալն է, իր իսկ անվան մեջ պարունակում է կոսմիկական էության բացահայտումը: Միերի արևի աստծո անունը համանման ձևերով հանդիպում է բազմաթիվ ժողովուրդների մոտ, թե հին Հնդկաստանում, թե հին Իրանում, թե հայերի մոտ Mher, Meher ձևով (որ պահպանվել է հայերեն mehra, mehyan բառի մեջ), Միիր անսանվան մեջ Mehekan ձևով, որը համապատասխանում է

իրանական mitrakan'y, mihrakan'y-ին և Mehr, Mehrlik անվան ծնով: Այն հանդիպում է նաև անտիկ աշխարհի ժողովուրդների մոտ, որոնք փոխ են առել հիշյալ անունը և վերջինիս հետ կապված առասպելական գրույցների մի մասը, գուգորդելով դրանք իրենց Helios-ի և sol invictus-ի (անպարտելի արևի) հետ:

Իզուր չէ, որ Սիերի անխոնջ որսորդի, իր ճառագայթներով աշխարհը լուսավորողի և ջերմացնողի, տկարների ու ճնշվածների հովանավոր լուսաճաճանչ մարտիկի կերպարը դարձել է Հեռավոր Արևելք քշված հռոմեական լեգիոնների «ռազմիկների աստվածը» ծուլվելով Helios, Sol invictus-ի կերպարին, ճիշտ այնպես, ինչպես նա հովանավոր ու ապավեն էր դարձել ազատության ծարավի և ապստամբության սուր բարձրացրած մարդկանց համար:

Հիասքանչ է ակադեմիկոս Մանանդյանի այն միտքը, թե տարբեր ժամանակներում, տարբեր ժողովուրդների մոտ, ինչ հետևողականությամբ են ապստամբներն իրենց անվանել «արևի որդիներ» և «արևաշող քաղաքի որդիներ» Պերգամի heliopolit-ներից և Հայաստանի arevordi-ներից մինչև Վերածնության դարաշրջանի ուտոպիստ իտալացի Կամպանելլայի սոլյարիները:

«Աստունցի Ղավիթ» էպոսում Սիերի կերպարը բաժանված է երկու մասի. առաջինը պապի կերպարն է, որն արտացոլում է ծագող արևի ճաճանչափայլ և կենսալից արևի հատկանիշները: Այդ հանգչող արևը սահմանված օրը պետք է ճառագի նոր ուժով ի բերկրություն այն arevordi-ների, որոնք նրա հետ են կապել իրենց բոլոր երազանքներն ու հույսերը, ինչպես Լենինն է նշել ռուսական քիլինաների մասին խոսելիս:

Էպոսի վարիանտներից մի քանիսում Սեծ Սիերին դժվար է գանազանել Փոքր Սիերից՝ պապին թողից, քանի որ նրանք կարծես իրար մեջ են կիսել իրենց կոսմիկական հատկանիշ-

ները: Պապը որսորդ է, սև ցուլ է սպանել խավարի ու սանդարամետի սիմվոլը, Սիերի նման ոչ թե Յլասպանի մականուն է ստացել, այլ Առյուծածև, քանի որ նրա կերպարի մեջ են ներհյուսվել Արևելքում նենեական առյուծին հաղթող Միթրայի, Զերակլի, թերևս նաև հին արևելյան Գիլգամեշի կերպարի հատկանիշները:

Իսկ թողոր դեգերում է աշխարհով մեկ, հեռանում ժայռի խորքը: Չէ՛ որ անձավում հնուց ի վեր կարող էին գտնվել միայն Միհրի սրբավայրերը, Միհրի, որն ամեն օր դեմքը թաքցնում է իր հողածին երկրպագուներից, նախապես օձվելով իր լուսաճաճանչ դեմքի մշտնջենական փայլը պահպանող, մաքրող ջրում: Ծովի մեջ խորագուզվելը նույնքան է պայծառացնում Միհրի փայլը, որքան Սիերի ու նրա տոհմի ուժն է ամրապնդվում ջրի հետ շփվելիս:

Սակայն թե մեկը, թե մյուսը, թե պապի, թե թոռան կերպարում Սիերի երկատված տիպարն օժտված է թույլերի պաշտպանի ու հովանավորի, ժողովրդի բարօրության համար պայքարող մարտիկի գծերով, մարտիկ, որը կռվում է քաղաքը ջրից զրկողների դեմ, քաղցած ժողովրդին հաց հասցնելուն խոչընդոտ ուժերի դեմ: Սիերը հանդես է գալիս որպես գահին բազմած մարդակերներին պատժող, ժողովրդի բարեկեցությունը տարերային աղետներից պաշտպանող, անարդարության և միաժամանակ երկնքի դեմ մարտնչող հերոս, որը խոստանում է ժայռի խորքից դուրս գալ միայն այն բանից հետո, երբ հիմնակործան կլիմի հին աշխարհը, կատեղծվի նորը: Պապի որսորդության և թոռան քարանձավ մտնելու, երկու Սիերների երկրային բոլոր սխրագործությունների միջից հառնում է Միհրի լուսաճաճանչ կերպարը, որի անունը պարսկերենում նշանակում է թե արևի լույս, թե սեր:

Միհրի եղբայրը Չենով Զովանը, որը լիովին մարդկայնացված է, պահպանում է սասանող ձայնով երկինքը դղողացնող իր կոսմիկական կրկնորդի գծերը:

Ասկայն Ձենով Գովանը երկնային այս շանթածիգին հիշեցնում է ոչ միայն սարերից ու ձորերից դեն, յոթ քաղաքներում յսվող ահարկու իր ծայնով, միայն այն ծայնով ու թոքերով, որոնց ուժի դիմադրությունը հաղթահարելու համար նա իր մեջքին յոթ գոմեշի կաշի է փաթաթում, դրանց վրայից էլ երկաթե շղթաներ: Նա ոչ միայն բարձրագոչ է, այլև դարբին, որը մետեորային երկաթից սուր է կռում, ձիեր բուժելու արվեստին տիրապետելով ապաքինում է Քուռկիկ Ջալալու վիրավոր ոտքը: Ինչքան էլ Ձենով Գովանի կերպարը մարդկայնացված լինի, միևնույն է, նա հիշեցնում է երկնաքնակ դարբնին, որը մուրճի հարվածներով խլացնում է երկնային որոտը, իսկ իր ծայնով մարդկանց, ինչպես հին գերմանացիների թորը կամ Դոնարը:

Հելլենների մոտ ամպրոպաբեր Ջևսի կերպարը չէր տարբերվում շանթածիգից, երկնային նետածիգից, որը երկիր էր ուղղում իր խոցող նետերը:

Գերմանացիների մոտ նետածիգ ռագնիկի և որոտածայն դարբնի կերպարներն արմատավորվել են առանձին-առանձին. դրանցից մեկը Օդինն է, որը երբեք վայր չի դնում իր սուր նիզակը, իսկ մյուսը նրա եղբայրն է, մուրճով որոտ բարձրացնող թորը: Այդպես է նաև հայկական էպոսում. մեկը որսորդ, նետածիգ և նիզակակիր Մեծ Սիերն է, իսկ մյուսը՝ նրա եղբայրն է, խլացուցիչ ծայնով օժտված Ձենով Գովանը կամ Քեռի թորոսը:

Հելլենական Ջևսի կերպարի մեջ միավորվել են երկնքի տիրակալը, ամպրոպածիգը և անձրև շնորհողը, իսկ հայերի մոտ այս երեք կերպարը հանդես են գալիս դեռևս առանձին-առանձին: Այս փաստը գալիս է ասելու, որ առասպելական ավանդությունները Հայաստանում ծագել են զարգացման ավելի վաղ շրջանում, քան դա եղել է Հունաստանում:

Այս պատկերացումների հետագա զարգացումը Հայաստանում ընթացել է այլ ուղիով և կասեցվել է ժողովրդի աշ-

խարհայացքի վրա հասարակական գարգացման պայմանների թողած ազդեցության հետևանքով, բնորոշում այդ պայմանները միանգամայն տարբերվում էին հին Հելադայում գոյություն ունեցող պայմաններից: Այստեղ կարող էր նշանակություն ունենալ նաև Իրանի ժողովրդա-գրադաշտական միջավայրի հետ սկսված հաղորդակցությանը և գրահաղաշտությանը փոխարինած քրիստոնեության ազդեցությունը:

Սակայն կոսմիկական այս կերպարները, որոնցից յուրաքանչյուրն անձնավորում է բնության այս կամ այն երևույթը, հայկական միջավայրում ևս ընթացել են միաձույլ կերպարների մեջ միավորվելու ուղիով: Կոսմոգոնիական իմաստով սրա արտահայտությունը կարող է հանդիսանալ երկնային նետածիգ որսորդի և ամպրոպածայն Ձենով Հովանի հատկանիշների միաձուլումը Դավթի կերպարի մեջ, որն իր ծնունդով դառնում է իր հոր մահվան պատճառը:

Հելլենական առասպելաբանության մեջ և հելլենական պանթեոնում դիֆերենցված երկնաբնակ Ապոլոնի կերպարն ունի առանց շանթի հարվածող իր կրկնորդը: Դա նրանից անջատվող Թեր-Հելիոսն է, որի կառքը դղրդոցով է լցնում երկինքը: Ռուս ժողովրդի պատկերացումների մեջ ուժի այդ աղբյուրը երկնքով սուրացող Եղիա մարգարեն է, որի անունը համահնչուն է Թեր-Հելիոսի անվանը:

Շանթարձակ նետածիգի, երկինքը մուրճի հարվածներով դղրդացնող դարբնի կերպարից անջատվում է երրորդ երևույթը որոտին ու կայծակին հաջորդող անձրև շնորհողի կերպարը: Արդյոք տեղին չէ՞ առաջ քաշել (առայծմ միայն առաջ քաշել) հետևյալ հարցը: Հնարավոր չէ՞ ենթադրել, որ երկնային ջրերն առաքողի կերպարն արտացոլված է հայկական էպոսի երրորդ եղբոր՝ Ցռան Վերգոյի մականվան մեջ: Չէ՞ որ «ցռան» չի նշանակում միայն «կեղտոտող»: Եյուրական կուլտուրայի մեջ դա ամենից առաջ նշանակում է ջրադացի փողրակ և վերջինիս այն մասը, որը ջուր է մղում

ջրադացի անվացրանքի վրա: «Ցոան» բառի երկրորդ, ոչ թե առաջին, նշանակությունը առնչվելով Աանասարի երրորդ որդուն վերաբերող պատկերացումներին, Ցոան Վերգոյի երկրային կերպարը նկարագրելիս թերևս կարող էր հիմք տալ նրան վերագրելու վախկոտին հատուկ այդ թերությունը ևս, որի անվան մեջ կարող էր թաքնված լինել նաև ջրի ժայթքման հասկացությունը (օրինակ ջրվեժում):

Երկնային երեք երևույթ արտացոլող եռյակին պետք է ուղեկցի երկրային հաստատությունը, որն այս կամ այն կերպ կապված է երկնային ուժերի հետ: Հիշենք գերմանացիների երգային, որը վաղեմի կապով կապված է Օդինի հետ. հիշենք Դեմետրեին մայր հողը, որը Ջևաից ծնում է Պերսեֆոնին. հիշենք Սեծ Սիերի վաղեմի սիրուհուն այն պառավին, որը միակն է ամբողջ էպոսում, միակը Աասնա բոլոր բնակիչներից, որին մտահոգում է վարուցանքը, ինչպես դա մտահոգում է բերք շնորհող Դեմետրեին: Այդ պառավն իմաստուն է ինչպես երգան ու Դեմետրը. հոգատար մայր է հերոսի համար, ինչպես երգան, որը ողբում է իր դստեր կորուստը. ինչպես Դեմետրեն, որին հրձվանք է պատճառում դստեր վերադարձը, որը բերկրում է տեսնելով իրեն Պերսեֆոնեի հետ կապող հասկերի ծլարձակումը: Իր զարգացման ավելի ուշ շրջանում ժողովրդի հիշողության մեջ արմատ բռնած և մարդկայնացված մայր-հողի կերպարը հայկական էպոսում տրված է իբրև մի աղքատ պառավ, որը հայտնի չէ, թե ումից է ծնել իր դստերը, որը սնվում է իր աննշան արտի կորեկով: Եվ եթե կարելի է պատահականություն համարել այն, որ հերոսը նրան «նանե» է անվանում, կամ գերմանական երգային երկրորդ անունը հնչում է իբրև «Նոննա», կամ իրանական առասպելաբանության մեջ պտղաբերություն շնորհող Անահիտի անունը հնչում է իբրև «Նանայյա», ապա չի կարող պատահական լինել Դեմետրեի, երգային և սասունցի պառավի գործողությունների ու ֆունկցիաների նմանությունը:

Իսկ Դեմետրեի, Էրդայի և սասունցի պառաձի կերպարների նշանակության տարբերությունը, հասկի ու սրա մեջ արտացոլված տարեկան շրջապտույտի նշանակության տարբերությունը, այդ նշանակության ընդգծվածության առասպելաբանական երեք սիստեմում, չի կարող չբխել տնտեսական կառուցվածքի տարբեր էտապներից, որոնց վրա խարսխվել են մայր-հողի այս երեք կերպարները:

Երկրագործական Յունաստանը և անասնապահական Սասունը, որն աննշան չափով էր կերակրվում պրիմիտիվ հացաբույսով կորեկով, պետք է, որ իրենց պանթեոններում էապես տարբեր տեղ տային բերքի հովանավոր աստվածուհուն:

Էպոսում հիանալի է կորեկի արտի տեր պառաձի կերպարը: Չնայած չքավոր այրու արտաքուստ միանգամայն երկրային տեսքին, պառաձ, որի ամբողջ գոյությունը կախված է մի թիզ արտում ցանած կորեկի բերքից, և որի միակ մխիթարությունը էպոսում հանդես չեկած դուստրն է, նա այս արտաքինի տակ թաքցնում է բազմաթիվ ժողովուրդների կասմիկական առասպելներին հատուկ կերպարներից մեկի գծերը: Նրա կոսմիկական այս կապերը բնորոշվում են, իհարկե, ոչ միայն նրանով, որ նա մի ժամանակ Մեծ Միերի սիրածն է եղել: Այդ գծերն առավել ցայտուն են դրսևորվում հատկապես նրանով, որ այդ պառաձը շարունակ խրատներ ու ցուցումներ է տալիս Դավթին, ինչպես պետք է գործել, կանխագուշակում է երիտասարդ հսկայի ապագան, թաքցրած գաղտնիքներ է բաց անում և հարևանցիորեն մայրական խրատներ տալիս, թե, օրինակ, ինչպես խուսափել հորեղբոր կնոջ Սարիեի երկար ու համառ հետապնդումներից:

Սակայն, ինչպես նշվեց, այս պառաձ կնոջ կերպարի հիմքում ընկած է ոչ թե պատկերացումը մայր-հողի մասին, այլ այն տարերքի պատկերացումը, որը բազմաթիվ ժողովուրդների մոտ ընդունել է մայր-կնոջ կերպարանքը, դարձել է իմաստուն խրատներ շնորհող և ծնել լիովին մարդկայնաց-

ված մարգարեուհիներ: Հունական Դեմետրեի, այսինքն մայր-հողի գծերը, հնադարյան գերմանացիների էրդայի Վոթանի սիրած բնավորության գծերը նշմարվում են սասունցի պառավի մոտ, և գուցե պատահական չէ, որ հատկապես նրա մոտ է առանձնապես ընդգծված հոգատարությունը վարուցանքի նկատմամբ: Չէ՞ որ միայն նրա կապակցությամբ է ընդհանրապես հիշատակվում վարուցանքը:

Պառավ կնոջ հուսահատությունը, որի պատճառն իր աղջկա առևանգումն է, շատ նման է առևանգված Պերսեֆոնեի մոր Դեմետրեի վշտին:

Հաց շնորհող մայր-հողի երկրպագությունը առնչվում է երկրագործի հերոսականացված անձնավորության պաշտամունքի հետ, որն առկա է, թե ռուսական բիլինաներում, թե իրանական էպոսում: Նման երկրագործ մի ծերունու Սանասարն ու Բաղդասարը հրավիրում են իբրև պատվավոր հյուրի, և սա կնքում է սրանց կառուցած ամրոցի անունը, ավելի ճիշտ, ասում է, թե անուն կնքելու հարկ չկա, քանի որ ամրոցը տեղով-տեղ սարսափ է, սասանում («Սասուն» բառի ժողովրդական մեկնաբանությունը):

Հին աշխարհի պայմաններում, երբ ժողովրդի հույսերի, ձգտումների ու երազների մեծ մասը իբրև կանոն չէր իրականանում, հերոսի հգորությունն ու անխորտակելի ուժը թուլանում էր որևէ ձևով և նա զոհ էր գնում չարին:

Եթե ժողովրդի սիրով ստեղծված պայծառ հերոսները խոցելի տեղ չունենային, ապա նրանք իրենց երկրային կյանքում պետք է մնային անմահ, վայելեին հաղթողների լիակատար փառքը: Սակայն ժողովուրդը, ինչ անուն էլ նա կրեր, գիտակցում էր, որ լիակատար հաղթանակի օրը տակավին չի հասել, և մարտնչող հերոսները պետք է ընկնեն չար ուժերից, պետք է խոցելի տեղ ունենան, որտեղից և նրան կհարվածի թշնամին:

Փառապանծ Աքիլլեսը, որն իր մոր ծովի աստվածուհի

Աֆրոդիտեի շնորհիվ գերծ էր մահկանացու հորից ժառանգած երկրային թուլություններից, ինչպես գիտենք, ուներ մի խոցելի տեղ. դա նրա գարշապարն էր, որից մայրը նրան բռնել էր կրակի վրա նրա հողեղեն էությունը հրկիզելիս (հիշենք, որ Սանասարին ու Բաղդասարին կնքել են թոնրի կրակի վրա):

Չնադարյան գերմանացիների Ձիգֆրիդը, որն օժտված էր մարմնի անխոցելիությամբ, համենայն դեպս ուսի վրա խոցելի տեղ ուներ, այնտեղ, ուր ծառից դավադրաբար ընկած տեղևի պատճառով չէր դիպել վիշապի արյունը, որի մեջ լողացրել էին Ձիգֆրիդին: Ձիգֆրիդը գիտեր այդ խոցելի տեղի մասին և գաղտնիքը հայտնեց մի կնոջ, որին վստահեց և սիրեց, երբ մինչև մրուրը դատարկեց մոռացության գավաթը և դավաճանեց Բրունհիլդին:

Կաթնադրյուրուն լողանալով Դավիթն իր ուժն ու անպարտելիությունը ստանում է ջրից, և ոչ մի ճակատամարտում թշնամական ոչ մի հարված, նույնիսկ Մըսրա Մելիքի իննսուն փթանոց մկունդը, ոչ կի ուժ ի վիճակի չէ նրան վնաս պատճառելու: Սակայն կապուտաչյա մի աղջկա իր իսկ դասեր թույլ ձեռքով Դավթի մեջքին արծակած նետը նրան մահ է պատճառում: Դյուցազնի մեջքը հավանաբար ջրղեղված չէր կենարար հեղուկով և թիակների արանքը մնացել էր խոցելի:

Չնարավոր է, որ վարիանտների հետագա ուսումնասիրության ընթացքում հայտնաբերվի մի դրվագ այն մասին, թե ինչն է խոչընդոտ եղել, որ կենարար հեղուկն ամրացնի և անխոցելի դարձնի հերոսի թիակների արանքը:

Չետաքրքրական է այն, որ հերոսին վիճակված է ընկնել իր իսկ ծնած փոքրիկ երեխայի ձեռքով: Ժողովրդական առակներում այդպես է մեկնաբանվում արծվի կործանումը նրա փետուրից շինած նետից, հզոր կաղնու տապալումը կացնից, որի կոթը պատրաստված է նույն կաղնու ճյուղից:

Սա վերափոխված և մանրացված մոտիվն է բազմաթիվ

ժողովուրդների այն պատկերացման, ըստ որի հին աստվածները կործանվում և փոխարինվում են նրանցից ծնված նոր աստվածներով:

Այդպիսին է Ջեսի և Կրոնոսի, Աիուրամազդի և Ջրվանի պայքարը, այդպիսին է Ռուստամի և Ջոհրաբի կռիվը (այլ հետևանքով), այդպիսին է անակնկալ լուծում ստացած Դավթի և Միերի պայքարը:

Սա հայրերի և որդիների, որդիների ու հայրերի միջև գոյություն ունեցող հին պայքարն է, մի պայքար, որտեղ նախկին բարի աստվածները մշտապես վեր են ածվում չար աստվածների: Արա մեջ է հելլենական գիգանտոմանյայի իմաստը, սրա մեջ է Վիշապաքաղ Վահագնի սխրագործությունների ներքին իմաստը:

Որդու ծեռքով հոր կործանվելու մոտիվը, ինչպես տեսանք, առկա է նաև հայկական էպոսում. Դավիթը մեռնում է իր հարազատ աղջկա նետից: Սակայն այդ պայքարն այստեղ ստացել է յուրատեսակ լուծում, բարդանալով նոր հերոսի հայտնությամբ, որն օժտված է անմահությամբ, և պետք է տարագրության մեջ սպասի սպիմանված օրվան, լույս աշխարհի դուրս գա ժողովրդի հաղթանակի և իղծերի իրականացման օրը:

Միերի ադ տարագրությունը անվիճելիորեն արձագանքում է միջնադարի եվրոպական ասքերին, որտեղ պատմվում է, թե ինչպես Ֆրիդրիխ Բարբարոսսան, քարանձավում կամ ստորերկրյա դղյակում այնքան է բանտարկված մնում, այնքան է նստում ննջելով, որ նրա հրաշեկ մորուքն իր անվերջանալի մազերով միծուլվում է ժայռին:

Այն, որ Միերը փակված է ժայռի խորքում, անկասկած, կապ ունի ռուսական բիլինաների հետ, որտեղ պատմվում է, թե Ռուսաստանում ինչպես են հսկաները քար դառնալով մեռել: Բայց արդյո՞ք լիովին է պարզված այդ հարցը. հսկաները մեռել են քար դառնալով, թե՞ հնարավորություն կա

ուսական հին ասքերը հասկանալու այսպես, որ դյուցազունները մեռել են երկրի երեսին և ինչ-որ ժամկետով իջել նրա ընդերքը:

Հետաքրքրական է հետևյալ հանգամանքը: Ժողովուրդներից շատերի մոտ հերոսների ժայռում փակվելու մոտիվը, որը միշտ կապված է ժայռի խորքից դուրս գալու կամ ժայռից ամրացված շղթայից ազատվելու հետ, միշտ առնչություն ունի արևի կերպարն այս կամ այն կերպ արտացոլող հերոսների հետ:

Սակայն վերադառնալով տարագրված կամ շղթայված հայկական կերպարներին, արդյոք կարո՞ղ ենք, որպես նշանակալից փաստ, չնշել այն խոր տարրերայնությունը, որ գոյություն ունի Մհերի և Արտավազդի այեզարդ Մասիվի հերոսում, սանդարանետում շղթայված արքայորդու միջև:

Նույն ժողովուրդը, որը հուսավառ սպասում է Մհերի դուրս գալուն և որը նրան հնարավորություն է տվել տարագրվելու ժամանակ առ ժամանակ դուրս գալու, Արտավազդ արքայորդու համար այլ ճակատագիր է սահմանել: Նա ամեն ուրբաթ օր իր բոլոր դարբին որդիների ձեռքերով, երեք սրբազան հարվածով ամրացնում է այն ծանր շղթան, որով Արտավազդը գանձված է ժայռին:

Մհերի, Բարբարոսսայի և ժողովրդին օգնելու, մարդկության բարօրության համար մարտնչած այլ հերոսների գալիք ազատագրումն ու այդ ազատագրման ակնկալությունը կարող է հիշեցնել Մեսիայի հայտնության հետ կապված հույսը, ինչպես էլ որ լինի Մեսիայի անունը՝ Մեսիա, Մշիխա, թե՛ Քրիստոս: Սակայն կա մի անդունդ ավելի խոր, քան այն վիրապը, ուր իր մժույգի հետ ընկնում է արքայորդի Արտավազդը: Այդ անդունդը Մեսիայից բաժանում է տարագրված և շղթայված արևային հերոսներին: Մեսիան աստծո օժյալն է, որը պետք է հայտնվի աստծո անունով և գերագույն աստվածության ողորմածությամբ (ինչ անուն էլ որ ունենա այդ

աստվածությունը): Նա բնդհանուր ոչինչ չունի այն հերոսների հետ, որոնք հանուն մարդկային բարօրության իրենց ծայնն են բարձրացրել ընդդեմ աստվածների և նրանց երկրային ներկայացուցիչների, հերոսներ, որոնք աստվածային կամքին հակառակ կրակ են փախցնում ի սեր մարդկային բարօրության: Միերը աստծո օժյալ չէ, այլ աստծո դեմ ծառացող մարտիկ, այն աստծո, որը հանդուրժում է անարդարությունը, հանգիստ նայում է մարդկության տառապանքներին:

Ինչքան էլ չընդունենք, որ ժողովուրդների փոխադարձ «ազդեցություններ» կամ փոխառումներ են կոսմիկական առասպելների նմանությունն ու զուգահիսությունը, այն ամենը, ինչ վերաբերում է առասպելի զարգացմանը կամ էպիկական թեմային, համենայն դեպս, ժողովուրդների կուլտուրական հաղորդակցության առկայության պայմաններում, առասպելական ասքերը կամ պատմական փաստերի վրա խարսխված վիպերգությունները միմյանց հետ բաղադատելով, չի կարելի ժխտել այս կամ այն մանրամասնության ներմուծումը, որը և հարմարեցված է տվյալ ժողովրդի հերոսին: Սակայն այս հարցը լուծելիս էլ պետք է համոզված լինել, թե փոխառում թվացող մանրամասնությունը արդյո՞ք չէր կարող անկախ և ինքնուրույն ձևով ստեղծվել, հատկապես այն դեպքում, երբ որևէ մեկուսացված փաստ ենք վերցնում:

Մոտիվի փոխառման ցայտուն օրինակ կարող է ծառայել եվրոպական միջնադարյան «Տրիստան և Իզուլդա» վեպի այն մասը, որտեղ հերոսը, ցանկանալով աղջկան տեղեկացնել իր գալստյան մասին, այգով անցնող առվի մեջ տաշեղներ է զցում: Առումն հոսում է այն սրահի միջով, որտեղ աղջիկն է բնակվում, և այսպիսով ջուրն աղջկան բերկրալի լուր է բերում, որ հերոսը մոտերքում է: Ջուրը բնակարան տանելու այսպիսի սիստեմը հայտնի չէ Արևմուտքին, մինչդեռ շատ ընդունված է Արևելքում և Իրանում, և Կովկասում,

և լեռնային քրդաստանում: Եվրոպական վեպի մեջ ներթափանցած այս մանրամասնի առկայությունը հիմք է տալիս մտածելու, որ պատահական չեն նաև այլ մանրամասների զուգադիպությունը «Տրիստան և Իզոլդա» վեպում, 11-րդ դարի պարսկական գրող բանաստեղծ Ֆահրեդդին Գուրգանի «Վիս և Ռամին» վեպում, քրդական «Մամե և Ջինե» վիպերգում և այլն: Սակայն երբ տարբեր ժողովուրդների մտածանդիպում ենք նույն պատմությանը, որտեղ միևնույն մահնում պառկած աղջիկն ու տղան իրար տրվելու հնարավորությունը բացառելու նպատակով մերկ սուր կամ դաշույն են լինում իրենց միջև, մենք պետք է հաշվի առնենք այդ դրվագի ընթացակարգությունը և այն ենթադրության անհեթեթությունը, թե որևէ ժողովրդի մեջ կարող է կամ կարող էր գերազանցորեն գոյություն ունենալ մահճի վրա պառկած սիրահարների միջև սուր դնելու սովորույթը, և չպետք է իրարից կախման մեջ դնենք Ջիզֆրիդի և Բրունհիլդի, Մամեի ու Ջինեի, Տրիստանի ու Իզոլդայի, Մեերի ու Գոհար-խաթունի և մահճի վրա սրով րաժանված ուրիշ հերոսների ու հերոսուհիների պատմությունները:

Սակայն լինում են այնպիսի մանրամասներ, որոնք լուրջ երկմտանքի մեջ կարող են գցել ուսումնասիրողին և միայն առավել խոր հետազոտությունը կարող է ցրել այդ երկմտանքը:

Այդպիսին է մկունդի քաշին վերաբերող դրվագը «Սասունցի Դավիթ» էպոսում և Մուրոմցի Իլյայի շուրջը հյուսված բիլինաներում: Թե՛ էպոսում և թե՛ բիլինաներում մկունդի քաշը կայուն չէ. կան տարբեր վարիանտներ, սակայն հայկական էպոսում րնդունված քաշը երեք հարյուր լիտրն է, իսկ լիտրը տասներկու ֆունտի է հավասար, հետևաբար մկունդն էպոսում կշռում է 3.000 ֆունտ կամ 90 փուօ: Մուրոմցի Իլյայի կաղնե մկունդը նույնպես 90 փուօ է կշռում: Եթե փորձենք այստեղ հայ և ռուս բանասացների միջև տեսնել

ուղղակի փոխառում, կամ ենթադրենք, որ երկու կողմն էլ օգտվել են մի երրորդ աղբյուրից, ապա հարկ կլիներ եզրակացնելու, որ հիշյալ քաշն ընդունված է տեղական չափերով: Սա անհավատալի է: Սակայն նույնքան հավանական է, որ երկու կողմն էլ մկունդի նորմալ, միջին քաշը սահմանել են հավասարաչափ, որոշակի, իբրև պայմանական թիվ ընդունված բազմապատկումով (այդ թվերից են, օրինակ, 7-ը, 12-ը, 40-ը և այլն): Իսկ մկունդի այս նորմալ, միջին քաշը, բնավ էլ չհանդիսանալով փոխառման առկայության ապացույց, կարող է լինել երկու ժողովուրդների փոխադարձ, կամ երրորդ ժողովրդի հետ ունեցած փոխառնչության արտացոլում, որը վերաբերում է նյութական կուլտուրայի հաղորդակցության, այսինքն՝ նյութական կուլտուրային պատկանող առարկաների ներմուծման և արտահանման (տնտեսական իրեր, կահույք, առավել ևս զենք, որը միշտ էլ առանձնապես դյուրին է թափանցում նույնիսկ ամենահեռավոր միջավայրը):

Երբ դնում ենք այն հարցը, որ անհրաժեշտ է լուսաբանել տասներորդ դարում ստեղծված հայկական էպոսի և նույն տասներորդ դարում Կիևի շրջակայքում արդեն ստեղծվող ռուսական բիլինաների միջև եղած առավել հետաքրքրական զուգադիպությունները, էպոսում և բիլինաներում հանդես եկող երկրագործի կերպարների նմանությունը, Ավյատագորի և երկու Սիերների որոշ առանձնահատկությունները, այդ դյուցազունների և կին դյուցազնուհիների մենամարտը, արդեն տասնհինգ տարի հողի տակ թաղված դյուցազնական զենքի և տասնհինգ տարի զետնի տակ պահված նժույզի թեմաները, Մուրոմցի Իլյայի և Դավթի մենամարտը իրենց որդիների հետ և տասնյակ այլ անվիճելի զուգահեռներ, ապա մտածում ենք, որ առանձին ուշադրության են արժանի աննշան թվցող այնպիսի մանրամասնություններ, ինչպիսին դյուցազնական մկունդի քաշն է:

Հանրագումարի բերելով վերևում մեր ամբողջ ասածը,

պետք է նշենք, որ աշխարհի ժողովուրդների հնագույն վիպերգությունների շարքում պատվավոր տեղերից մեկը անվիճելիորեն պատկանում է «Սասունցի Դավիթ» էպոսին, և դա որոշվում է թե վերջինիս առասպելական կողմով, թե էպոսի այն մասերով, որտեղ գովերգվում են հերոսների երկրային սխրագործությունները:

Էպոսի առասպելական կողմը իր մի քանի առանձնահատկություններով հնարավորություն է ընձեռում առաջ քաշելու տարբեր ժողովուրդների հնագույն կուլտուրական կապերի հարցը և առաջին հերթին Սովետական Միության մեջ միավորված ժողովուրդների կուլտուրական կապերի հարցը:

Այս տեսակետից յուրահատուկ արժեք է ներկայացնում էպոսի պատմական մասը, որը հնարավորություն է տալիս նոր, ցայտուն օրինակներով բացահայտելու այն հետաքրքրական պրոցեսը, թե ժողովրդի հիշողության մեջ ինչպես է ստեղծվել հիմնականում երկրային, սակայն ժողովրդական բանահյուսության մեջ տիտանական հատկանիշներով օժտված հերոսի կերպարը: Բազմաթիվ ժողովուրդների վիպերգություններում ընդհանուր է այն երևույթը, երբ ժողովրդի սիրած հերոսը վեր է ածվում տիտանի, սակայն այդ կերպարը (նայած թե որ դասակարգն է այն ստեղծում) իր մեջ կենտրոնացնում է դասակարգային իդեոլոգիայի այս կամ այն ընդհանրացնող գծերը:

Հայ ժողովրդի տարբեր խավերի իդեոլոգիայի զարգացման պատմության համար էպոսն առանձնապես բարձր արժեք է ներկայացնում, քանի որ այդ էպոսն ամբողջ ծայնով խոսում է այն խավերի ձգտումների և երազանքների մասին, որոնք հայրենիքի պաշտպանության ու աշխատավոր մարդկանց վիճակի բարելավման համար դարեր շարունակ սխրագործություններ էին կատարում աշխատանքի ասպարեզում թե ռազմի դաշտում, առանց այդ մասին ազդարարելու արտաքին աշխարհին, և նրանց այդ լռությունը նույնքան

խորն էր, որքան տիրապետող դասակարգի ներկայացուցիչների լռությունը ժողովրդական ներքնախավի կատարած արիության ու սխրագործությունների հանդեպ:

Աեզ, սովետական ընթերցողներիս համար «Սասունցի Դավիթը առանձնապես թանկ է նրանով, որ այնտեղ, բացի էպոսի գեղարվեստական արժեքներից, հայրենիքի և ժողովրդի համար մարտնչող հերոսների կերպարների մեջ արտակարգ ցայտունությամբ դրսևորված են այն գաղափարներն ու զգացմունքները, որ դարեր շարունակ փայփայել է մարդկությունը: Այդ գաղափարներն ու զգացմունքներն առանձնապես վառ են դրսևորված Դավթի և նրա որդի Սիեի կերպարներում, որոնց հետ նրանց ստեղծող ժողովուրդը կապել է իր ամենանվիրական երազանքը՝ հին աշխարհի կործանելու և նոր աշխարհի ստեղծելու երազանքը:

## ԳԻՎԱԿԱՆ ԶԱՅՑ ԳԻՄԱԳՐՈՒԹՅԱՆ



**ՀԱՅԿԱԿԱՆ  
ՎԻՄԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԳԻՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

«Շիրակի վիճարձանագրությունները» դասընթացի ներածական դասախոսությունը՝ կարդացված Ս. Պետերբուրգի համալսարանում 1914 թ. սեպտեմբերի 6-ին\*

**Պ**արզ պատկերացնելու համար այն առանձնահատուկ կարեորությունը, որ ներկայացնում է հնագիտական հուշարձանների ուսումնասիրությունը հին հայկական և վրացական պատմիչների երկերի հետ միասին, անհրաժեշտ է նկատի ունենալ մի քանի հանգամանքներ: Հայկական և վրացական հին պատմագրությունը բավականին հարուստ է, սակայն մեզ հասած հայ և վրացի բոլոր պատմիչները բացառությամբ մեկ հայ հեղինակի, որի գործերից մի քանի պատառիկներ են պահպանվել, և երկու վրացի հեղինակների կրոնավորներ են: Այս հանգամանքը բավականաչափ բնորոշում է նրանց նախապատվությունների շրջանակը. շատ մեծ ուշադրություն դարձնելով եկեղեցական հարցերին, երբեմն ամբողջ գլուխներ նվիրելով դավանաբա-

\* Գ. Օրբելին մտադիր էր սույն դասախոսությունը վերանշակել և դարձնել «Պիվանի» ընդհանուր ներածություն, հիվանդությունն ու մահը խանգարեցին: Այս գրքում տպագրված է նախնական վիճակում և անփոփոխ:

նական վեճերի շարադրմանը և եկեղեցական ժողովների որոշումներին, մեծ սիրով նշելով այն ամենը, ինչ վերաբերում է եկեղեցական շինարարությանը այդ հեղինակները, չնչին բացառությամբ, խուսափում են աշխարհիկ ամեն ինչից և, հասկանալի է, չեն տալիս իրական կյանքի և կենցաղային իրադրության ոչ մի պատկերացում: Ռազմական պատմության համար նրանց ընձեռած առատ նյութն անգամ շատ կողմերով սխեմատիկ բնույթ է կրում, դարձյալ կտրված կենդանի իրադրությունից: Երիտ է, տեքստերի մանրակրկիտ ու բժախնդիր հետազոտությունը, այնուամենայնիվ, կարող է տալ և արդեն սկսում է տալ որոշ նյութ, սակայն այդ ճանապարհով հայտնաբերած տվյալները նույնպես կարող են հասկանալի դառնալ միայն նյութական հուշարձանների հետ առնչվելով: Որոշ իմաստով նույնը կարելի է ասել և վրացական պատմիչների մասին:

Այդ բոլորի հետևանքով Հայաստանի կյանքի առավել հետաքրքրական կողմը ժողովրդի կյանքը, ոչ միայն ընտանեկան կենցաղը, կահկարասին, քաղաքային բարեկարգությունը, այլև, նույնիսկ միջնադարյան հայ քաղաքի հասարակական կառուցվածքը մնում էին միանգամայն անհայտ, քանի դեռ չէին ուսումնասիրվել վիճարձանագրությունները, հնագիտական հուշարձանների այն առաջին տեսակը, որը պատմագիտական աղբյուրների շարքը մտավ շնորհիվ Մ. Բրոսսեի և Ղ. Ալիշանի:

Բանն այն է, որ գրական հուշարձաններից բացի, Հայաստանում մեր տրամադրության տակ ունենք շատ աղքատ ձեռագրական նյութեր գրառումների ձևով և ավելի փոքրաթիվ արխիվային փաստաթղթեր, այն էլ ուշ շրջանի 17- 18-րդ դարերի: Առանձնահատուկ տեղ են գրավում Կիլիկյան Հայաստանի և այսպես կոչված Փոքր Հայքի մի քանի տասնյակ հրովարտակները: Մնացած ամբողջ նյութը թագավորական հրովարտակները, կաթողիկոսական կոնդակները, գանա-

զան հրամանագրերն ու որոշումները, նվիրատվական փաստագրերը, կալվածագրերը և այլն, կամ չեն հասել մեզ, կամ հասել են ոչ թե ձեռագրերի ձևով, այլ իբրև քարերի վրա փորագրված արձանագրություններ:

Այդ արձանագրությունները փորագրվում էին ժայռաբեկորների վրա, տաճարների և այլ հասարակական ու անհատական կառույցների պատերին, սահմանաքաժան կոթողների վրա և այլն:

Առավել հարուստ ու բազմազան արձանագրություններ են պահպանվել տաճարների պատերին, այստեղ կարելի է գտնել և ընդարձակ վավերագրեր, և մի տասնյակ քառերից կազմված, կարճառոտ հիշատակագրություններ:

Եկեղեցական շենքերի պատերին փորագրված արձանագրությունները մեծ մասամբ պաշտոնական վավերագրեր են հուշարձանի կառուցման, հավատացյալների նվիրատվությունների, վանքին շնորհված արտոնությունների, զանազան տեսակի օրինականացումների, պայմանագրերի մասին և այլն: Համարյա միշտ նրանք կազմված են պահպանելով հայտնի բանաձևը և համեմատաբար հազվադեպ են շարունից շեղվում: Հենց այդ իմաստով մեծ հետաքրքրություն են ներկայացնում միանգամայն անձնական բնույթի այն փոքրաթիվ արձանագրությունները, որոնք կազմվել են յուր և յուրայինների համար ու այդ պատճառով ազատ են շարունից, այդպիսին է իշխան Սահմադինի արժեքավոր արձանագրությունը Արենում:

1. թվ: Չժ ի տիեզերակալուքի Հուլաուու դանին ես Սահմադին որդի (Աւետեաց գ) նեցի գթագաւորանիստ (տ)եղի(ս) գԱրեն ի յԱրտաշրէ որդո Շահնշահի հալալ ընչ(ից իմ)ոց ի վայելումն ինձ և որդ
2. ոց իմոց, աժ շնահաւոր ար(ա)սցէ յաւիտեանս ժամանակաց: (ի թիվ) Չիէ յաշխարհակալուքի Ապադա դանին

ես Սամտին, որ պարոնի նստոց ու դարպաս չկար զաս այգիս և զդրա:

3. խոս, որ կոչի առքաւորքի, զնեցի զամէն մեկ յիւր տիրոջէն, և յիմ մտաց դուս առանց վառոաւետի ձևեցի ու հիմն ձգեցի դարպասիս ու դրախ(տ(իս ի (ժ) տարին կատարեցի. ած շնորհավոր արասցէ պարոն Սահմադինին որդից ի յորդիք. ու խարճ որ եղաւ դարապասիս: Խ: Ռ: Դուկատ դահեկան:\*

Հայաստանի և Վրաստանի արտաքին պատմության, մասնավորապես ռազմական պատմության համար վիճաբարական պատմություններն այնքան էլ հարուստ չեն: Ես դժվարությամբ կարող եմ վերհիշել որևէ արձանագրություն, որը հատկապես մեկնաբաներ այս կամ այն ռազմական իրադարձությունը, սակայն շատ արձանագրություններում կարելի է գտնել չափազանց կարևոր տեղեկություններ, ակնարկված կամ կողմնակի ասված, որոնք կարող են հետաքրքրություն ներկայացնել նաև ռազմական պատմաբանի համար: Չխոսելով արդեն այն տեղեկությունների մասին, որոնք հայտնում են Հին Հայաստանի գանազան գործիչների այսինչ թվականին, այսինչ պատերազմում զոհվելու մասին, այլև այն տեղեկությունների, որոնցով նրանց հարազատները պարզաբանում են տվյալ տաճարի կառուցման հանգամանքները, մենք հանդիպում ենք նաև ընդհանուր կարգի տեղեկությունների: Օրինակ, երմիտաժում պահպանվող XIII դարի Կիլիկյան տապանակի վրայի արձանագրության մեջ համառոտ հիշատակվում է մանյուկների Կիլիկիա կատարած արշավի մասին, նշելով այդ արշավանքի տարեթիվը: XII դարի նշանավոր գորավար Ամիրսպասալար Զա-

\* Н Я Марр, Зап. вост Росс. Арх. Общества, том VIII, вып. I, стр. 82-83  
նույնի: Аны., էջ 42.

քարիայի Բագարանի (Բայազետի մոտ) արձանագրության մեջ հայտնվում է, որ Ջաքարիան Բագավան է եկել Խլաթից, և քանի որ այդ արձանագրությունը վերաբերվում է վրացիների հայտնի արշավանքին դեպի Խլաթ, ուստի հիմք ենք ունենում պարզելու, եթե ոչ բացարձակ, գոնե մասամբ ինչ ուղիներով է ընթացել գորքերի վերադարձը արշավանքից:

Հետաքրքիր է և այն, թե վիմական արձանագրությունների, նրանց թվի և կազմության վրա ինչպես ուժգին են անդրադարձել Հայաստան կատարված բազմաթիվ արշավանքները, մասնավորապես դեպի Անիի երկրամասը XI-XII դարերում, ինչպես նաև տիրակալների բազմիցս փոփոխությունները, բավական է ասել, որ XI դարի կեսերից մինչև 1151 թվականը մենք Անիում ոչ մի վիմական արձանագրություն չունենք ոչ կառուցման և ոչ էլ վերանորոգման մասին, բացի մեկից, որը պատմում է բերդի աշտարակի կառուցման մասին: Ռազմական պատմաբանի համար բացառիկ նշանակություն են ներկայացնում այնպիսի վիմարձանագրությունները, ինչպիսիք են Հաղարծնի վանքի և Այրիվանքի երկու արձանագրությունները, որոնք գրավվել են Իվանե և Ջաքարե երկայնաբազուկ եղբայր գորավարների կողմից XIII դարի սկզբին:

Սակայն, իհարկե, այդ բոլոր նյութերն ու տեղեկությունները մեզ համար չեն ներկայացնում մի աննշան մասն անգամ այն հետաքրքրության, որոնք վերաբերում են երկրի ներքին կյանքին, հասարակական կառուցվածքին, վարչությանը և, վերջապես մասնավոր կյանքին: Նույնիսկ մի այնպիսի նշանավոր կենտրոնի, ինչպիսին Անին է, քաղաքային վարչության ներքին կառուցվածքի մասին մենք պատկերացում չէինք ունենա, եթե նկատի ունենայինք լոկ այդ հարցի նկատմամբ անտարբեր պատմիչների տեղեկությունները, և եթե չլինեին վիմական արձանագրություններն իրենց տվյալներով քաղաքային խորհուրդների, ավագների խորհրդի, աչքի ընկնող ավագների և այլնի մասին:

Առանց վիճարձանագրությունների, առանց բազմաթիվ հարկային և պարհակային տերմինների, ճանապարհային, մաքսային և այլ տուրքերի անվանումների վերլուծության, անհնարին կլիներ գաղափար կազմել քաղաքի ֆինանսական կարգի մասին, պատմիչների երկերում հանդիպող հատուկե՛նտ տերմիններն իրական նշանակություն կարող էին ստանալ հիմնված վիճագրական նյութի վրա, որոնք երբեմն հնարավորություն են տալիս որոշելու նույնիսկ հարկային և մաքսային վճարումների չափը և այլն: Քացառիկ հարուստ նյութ են պարունակում վիճարձանագրությունները նաև մասնավոր-իրավական հարաբերությունների գնահատման համար. դրանք պայմանագրեր են հողատարածությունների համատեղ օգտագործման, ունեցվածքի բաժանման, կալվածագրերի մասին բոլորը փորագրված վանքերի պատերին, որով և սրբագործվում և հաստատվում են այդ վավերագրերը:

Եթե անդրադառնանք Հայաստանի կյանքի նույնիսկ այն կողմին, որն ամենից ավելի է գրավել պատմիչներին՝ եկեղեցական կյանքին, ապա այստեղ էլ վիճական արձանագրությունների մեջ հետաքրքրական շատ բան կգտնենք. ինչպիսի բնորոշ պատկեր է ներկայացնում, օրինակ, Անիի արձանագրություններից մեկը, որը կրկնվում է նաև Մրենում, ուր սահմանվում է հոգևորականի օժման նվազագույն տարիքը (թե ոք եպիսկոպոսաց կամ յառաջնորդաց կաշառաւք կամ անմիրու երեց առնէ), արգելում օժման համար անընտրելի, անարժան ու մարմնական պակասություն ունեցող, կամ անհամապատասխան տարիքի մարդկանց կաշառքի ու ճնշման սիջոցով ձեռնադրելը: Նույնթան բնորոշ է Անիի մի այլ արձանագրություն, որով սահմանվում է, որ պսակի թույլտվություն ստանալու պարտականությունը դրվում է փեսայի, և ոչ թե հարսի հարազատների վրա, բռնի ամուսնության դեպքերից, կամ որ ավելի հավանական է, հարսի առևանգումից խուսափելու համար: Վերջապես հոգևորակա-

նության և հոտի փոխադարձ հարաբերությունների ինչպիսի վառ պատկեր է տալիս նույնպես Անիի, բայց այս անգամ Վրաստանի կաթողիկոս Եպիփանի (1216) վրացերեն արձանագրությունը, որը հրահանգում է քահանաներին չվաճառել եկեղեցու շնորհները, իսկ ծխականներին միջոցներ չխնայել եկեղեցու սպասավորների ապրուստի համար\*:

Եթե նույնիսկ մի կողմ թողնենք արձանագրությունների բովանդակությունը և զբաղվենք միայն նրանց ձևի ուսումնասիրությամբ կամ նրանց մեջ հիշատակվող անուններով, ապա այստեղ էլ աղքատիկ թվացող նյութը պայծառ լույս կսփռի հին հայերի տարբեր դասակարգերի տրամադրությունների, նրանց փոխադարձ հարաբերությունների վրա: Չէ՞ որ միայն վիճագրական տվյալների շնորհիվ հաջողվեց պարզել այն հետաքրքրական փաստը, որ տասնմեկերորդ դարում հայ ազնվականության ներկայացուցիչները, ունենալով սեփական մկրտության տոմարական անունները, սիրում էին կենցաղում կրել մուսուլմանական, մեծ մասամբ արաբական անուններ: Մինչդեռ ցածր խավի ներկայացուցիչներին վերաբերող արձանագրությունների մեջ երևան են գալիս, սովորաբար, միայն տոմարական քրիստոնեական անուններ, իսկ վերջին շրջանում՝ միայն սիրված ժողովրդական անուններ: Անունների համակարգի այս ցայտուն տարբերությունը հասկանալի կլինի, եթե նկատի ունենանք ազնվականության ծգտումը դեպի ամեն ինչի օտարը, իսկ ստորին խավերինը՝ դեպի հայրենին (լինի դա լեզուն, տների արտաքին հարդարանքը կամ կահկադասին): Այդ մասին են պատմում Անիի հնագիտական հուշարձանները: Այժմ արդեն պարզ է, որ Մխիթար Գոշի, Ամբատի և ուրիշների դատաստանագրքերի և այլ իրավաբանական ժողովածուների ու տրակտատների վրա կառուցված հայ իրավունքի պատմու-

\* „Известия.. Академии наук. 1910

թյունը, առանց հայկական վիճագրական նյութերի սպառիչ օգտագործման, պիտի տառապի նույնպիսի պակասությանը, թերասածությանը, ինչպես արդեն հնացած ու դեմ նետված Շիրակի պատմությունը, որը կազմված էր միայն մատենագրական տվյալների հման վրա, առանց հնագիտական ու վիճագրական հուշարձանների իրական լուսաբանության:

Եվ վերջապես հայկական վիճարձանագրությունները մեծ հետաքրքրություն են ներկայացնում նաև լեզվի պատմաբանի համար: Գրական ստեղծագործությունների մեջ համեմատաբար դժվար է գտնել այնպիսի ձևեր, որոնք հատուկ են ոչ թե գրական, այլ կենդանի, ժողովրդական լեզվին. ժողովրդական, բարբառային կազմություններով հարուստ ստեղծագործությունները, ինչպես Մաղաթիայի երկը, հազվագյուտ են. դա բացատրվում է, իհարկե, նրանով, որ այդպիսի ստեղծագործության հեղինակները իբրև կենդանի լեզվի կրողներ, աղավաղվել են գրագիտությամբ, իսկ ժողովրդական լեզվի այն փոքրաթիվ երևույթները, որոնք անդրադարձվել են նրանց երկերում, մտցրել են ավելի պակաս գրագետ արտագրողները:

Այլ բան ենք տեսնում արձանագրություններում. եթե պաշտոնական արձանագրությունները, որոնք գրված են մեծ մասամբ ըստ բանաձևի և կենդանի խոսակցական ձևերի տեսակետից մեծ հետաքրքրություն չեն ներկայացնում, ապա մեծ քանակությամբ գերեզմանային հուշագրությունները (տապանագրեր), ինչպես նաև իրերի վայրի արձանագրությունները հարուստ նյութ են տալիս բարբառագետին: Այդ նյութերը հատկապես արժեքավոր են նրանով, որ նրանց մեջ որոշ է վայրը և գրեթե միշտ ժամանակը:

Հենց այդ տեսակետից էլ արձանագրությունների լեզուն հետաքրքիր է նաև պատմաբանի համար, հայերի գաղթը մի նահանգից մյուսը և բուն Հայաստանից գաղթավայրերը, որը

ըստ երևույթին բացառիկ հետաքրքրություն է ներկայացնում, չեն կարող անհրաժեշտ չափով ուսումնասիրվել և ճշտվել առանց բարբառագիտական հետազոտությունների:

Անիի և առհասարակ Շիրակի վիմարձանագրությունների ավելի ուշադիր և խորազնին ուսումնասիրությունը կապված ժամանակակից հայկական կենդանի խոսվածքների հետ, կարող էր պարզել, թե իրականում ուր են գաղթել անեցիները և որտեղ պետք է փնտրել նրանց հետնորդներին: Հայերի գաղութային պատմության այս հիմնական հարցի կարևորությունը հատկապես հասկանալի կլինի, եթե, Եվրոպայի հայկական գաղութների շրջանակներում մնալով, հիշենք Լեհաստանի կիրառական արվեստի ստեղծագործություններում նկատվող հայկական ազդեցությունների և առայժմ ենթադրական այն տեսությունների մասին, որոնք պնդում են ռուսական արվեստի վրա որոշ արևելյան, հատկապես հայկական ազդեցությունների առկայությունը:

Եթե նույնիսկ անտեսենք այնպիսի կարևոր հարց, ինչպիսին է գաղութային հարցը, ապա արձանագրությունների լեզվում կարող ենք արժեքավոր նյութ գտնել ավելի մանր, բայց էական հարցերի լուծման համար: Այսպես, օրինակ, վերցնենք զուտ հայկական միջավայրի ծնունդ Հաղարծնի վանքը, որն հավանաբար հետևելիս է եղել քաղկեդոնական ուսմունքին. որքան բնորոշ է, որ հենց այստեղ մի քանի հայկական արձանագրությունների մեջ հանդիպում ենք այնպիսի տերմինների, ինչպիսիք են քոբ, դեկան, տրապեզ, իսկ վրացերենում լիովին քաղաքացիություն ստացած տերմինների:

Այն ինքնուրույն նշանակությունից բացի, որ ունեն հայկական վիմարձանագրությունները, նրանք մեզ համար կարևոր են նաև որպես հայկական արվեստի ու արդյունագործության հուշարձանների ուսումնասիրության օժանդակ աղբյուրներ:

Չկա համարյա ոչ մի հայկական մոնումենտալ հուշարձան, տաճար, մատենադարանային շենք, գավիթ ու այլ եկեղեցական կառուցվածք. պալատ, բերդաշտարակ, վերջապես գերեզմանային կոթող, սահմանաքաժան քար, որ իր վրա չունենա արձանագրություն, որը համարյա միշտ թվագրված է և շատ հաճախ պատմում է այդ հուշարձանի կառուցման կամ կանգնեցման մասին: Ենչտ այդպես էլ արձանագրված է կիրառական արվեստի և գեղարվեստական արդյունագործության ստեղծագործությունների մի զգալի մասը, հատկապես եկեղեցականը, ինչպես մատյանների կազմերը, խաչերը, գավազանները, սկիհները, նշխարատուփերն ու տապանակները և այլն: Այսպիսով, հայկական հուշարձանների ճնշող մեծամասնությունը անվիճելիորեն թվագրվում է այդ արձանագրություններով, եթե ոչ ստույգ նշելով տարին, գոնե այն որոշելով մոտավորապես. դրա շնորհիվ վերանում է լոկ հնագիտական տվյալների հիման վրա հուշարձանի երբեմնի անստույգ և կասկածելի թվագրությունը: Իսկ այն հուշարձանները, որոնք իրենց վրա թվական չունեն, թվագրվում են շրջապատում եղած այլ բազմաթիվ թվագրվածների օգնությամբ, որով և որոշվում են նրանց ժամանակագրական սահմանները: Թվագրող արձանագրությունների հանգամայնությունը բնորոշելիս բավական է ասել, որ բազմաթիվ հուշարձանների համար, այդ թվում նույնիսկ VII դարի, մենք ունենք ոչ միայն նրանց կառուցման սկզբի և ավարտման տարեթվերը, այլև կարող ենք հետևել տվյալ շենքի ողջ պատմությանը, ինչպես օրինակ, Փրկչի եկեղեցին Անիում, որտեղ հայտնի է նրա կառուցման, երկու վերականգնումների և գմբեթի վերականգնման ժամանակները, այսինքն երեք և կես դար իարատևող չորս փուլեր, ընդ որում վերջին թվականը նշանակված է գմբեթը պսակող խաչի նշանավոր հիմքի վրա: Իբրև նույնաման երևույթի օրինակ կարելի է նշել Էջմիածնի հայտնի տապանակը: Շնորհիվ այսպի-

սի թվագրության, այժմ արդեն հնարավոր է դառնում ուրվագծել որոշ հուշարձանների, օրինակ, խաչքարերի ծների զարգացման ընթացքը:

Համապատասխան արձանագրությունների հետագա ուսումնասիրությունը հայկական արվեստի պատմության մի էջը չի որ բացելու է: Սակայն այստեղ պետք է նկատի ունենալ հետևյալ հանգամանքը, պատմաբանի ու հնագետի կողմից հայկական արձանագրությունների նշանակությունը չընթերցելու և նույնիսկ անտեսելու հետ միաժամանակ, երբեմն նկատում ենք մի այլ ծայրահեղություն նրանց գերագնահատությունն իբրև վավերագրերի, նրանցում անվիճելի, հավաստի, անխախտ տվյալների արժեքներ տեսնելը: Հասկանալի է, որ իրականում արձանագրությունները նույնպիսի ուշադիր և զգուշավոր վերաբերմունք են պահանջում, ինչպես և նյութ փաստաթղթերը: Եթե ոչ մեկի մտքով չի անցնի վիճարկել թղթերի վրա գրված հրովարտակաների, վավերագրերի և նույնիսկ ձեռագիր հիշատակագրությունների պատճենահանման հնարավորությունը, արտադրության ընթացքում նրանց աղավաղման և, վերջապես, կեղծման հնարավորությունը, ապա, երբ խոսքը վերաբերում է վիճական արձանագրություններին, մեզ հասած և քարի վրա փորագրված բոլոր ակտերը, չգիտես ինչու, բացարձակ հավաստի են համարվում և այդպիսի վավերագրերի հավաստիության նկատմամբ ամեն մի երկբայություն առաջ է բերում տարակուսանք և թերահավատություն: Մինչդեռ վիճական արձանագրությունների հետ էլ անհրաժեշտ է առանձնապես զգույշ լինել, քանի որ այդ վավերագրերը ձեռագիր արձանագրություններից տարբերվելով միայն այն նյութով, որի վրա նրանք գրվել են, ձեռագրի նման նույնպես արտագրվել են և ընդհանր երբեմն ենթարկվել զանազան փոփոխությունների: Մարմաշենի կառուցման մասին արձանագրության մեջ այդպիսի մի հանդիչ օրինակ ունենք. տաճարի վրա համաչա-

փորեն տեղավորված են երկու երկարաշունչ արծանագրություններ, հարավային պատին տաճարի կառուցման մասին XI դարի սկզբին, իսկ հյուսիսային պատին արմատական վերակառուցման մասին XIII դարի սկզբում: Երկու արծանագրություններն էլ փորագրված են միևնույն տառաձևերով, միայն լիգատուրային վերաբերող աննշան շեղումներով, որոնք լիովին կարող են բացատրվել նրանով, որ դրանք փորագրել են միաժամանակ ապրած ու աշխատած երկու տարբեր անհատներ: Եկեղեցին ամբողջությամբ երեսպատված է միատեսակ տաշված, նույնանման քարերով, անհնար է մատնանշել, թե որ մասերն են XIII դարում վերանորոգվածները և որոնք են պահպանվել նախնական տեսքով դա հատկապես պարզ երևում է, երբ նայում ենք գմբեթին, որը ոչ շարվածքով և ոչ էլ տաշվածքով չի տարբերվում բուն եկեղեցուց, մինչդեռ այդ գմբեթն իր հովանոցաձև ծածկով չէր կարող պատկանել XI դարին: Այսպիսով պարզ է, որ ամբողջ եկեղեցին հիմքից մինչև գմբեթը վերանորոգվել է, իսկ արծանագրություններն արտագրվել են, ուստի և միևնույն տառաձևերով փորագրված ենք տեսնում և կառուցման (XI դարի սկիզբը), և նվիրատվական (XI դարի վերջը), և վերանորոգման (XIII դարի սկիզբը) արծանագրությունները: Այդ արծանագրություններն արտագրողներին չէին կարող խանգարել ընդօրինակման աշխատանքների հետ կապված դժվարություններն ու ծախսերը, քանի որ ինչպես կառուցման, այնպես էլ XI դարի մի այլ արծանագրության մեջ թվարկվում են վանքին արված բազմաթիվ նվիրատվությունները, որոնց վիթխարի արժեքը լիովին արդարացնում է թանկագին վավերագիրը հավիտյան պահպանելու ծախսերը: Այդպիսի մի քանի օրինակ էլ կարելի է բերել: Նույն կարգի, բայց փոքր-ինչ տարբեր երևույթ է նկատվում հավանաբար մեզ հասած հնագույն կտիտորական արծանագրություններում: Մի շարք նկատառումներով, որոնց շարադրանքն ինձ հեռու

կտաներ, կարելի է ենթադրել, որ նշված արձանագրություններն իրենց այժմյան տեսքով միշտ չէ, որ ժամանակակից են այն փաստերին, որոնց մասին պատմվում է նրանցում. տվյալ դեպքում ավելի հավանական է, որ նրանք տաճարների պատերի վրա արտագրվել են ոչ թե պատերի կամ քարերի վրայից, այլ ձեռագրից (թղթի կամ մագաղաթի), իսկ այդ արտագրության պատճառներն ու նպատակները նույնն են եղել, ինչ Սարմաշենի արձանագրությունների դեպքում:

Նման պարագաներում արձանագրությունների արժեքը մասամբ նվազում է այն բանով, որ նրանք մեզ են հասել ոչ թե բնագրով, այլ ընդօրինակված, այնուամենայնիվ նրանք չեն կորցնում իրենց նշանակությունը, քանի որ նրանց բովանդակության իսկությունը չի կարելի կասկածել, այդ առթիվ որևէ հիմք չունենալու պատճառով: Սակայն կան դեպքեր, որ արձանագրության, անգամ բովանդակության իսկությունը կարելի է և պետք է վիճարկել, եթե այդպիսի պնդումը փոքր-ինչ համարձակ է Տեկոթի արձանագրությունների նկատմամբ, որոնք շատ կարևոր են վանքի պատմության համար և որոնք խնրագրված են փոքր-ինչ անսովոր և անձնանունների ժամանակաշփոթ կուտակումներով, ապա այն միանգամայն անհայտ է Աշոտ Ողորմածի տապանագրի վերաբերյալ Հոռոմոսում և, թերևս, Սենեքերիմ թագավորի և Պետրոս կաթողիկոսի տապանագրերի վերաբերյալ, որոնք գտնվում են Վարագա վանքում:

Սակայն մենք չենք կարող հնագրության տվյալների միջոցով ստուգել կասկածելի արձանագրությունների տարեթիվն այն պատճառով, որ հայկական վիմարձանագրության այդ կողմը հազիվ է շոշափվել, ըստ որում շոշափվել է սխալ հիմունքներով: Արձանագրային գրության, փորագրումների փակագրերի և միացումների անսահման բազմազանությունը, որը բացատրվում է ինչպես փորագրման ժամանակների տարբերությամբ, այնպես էլ հուշարձանի գտնված վայրով,

բարդացնում են հայկական հնագրության խնդիրները: Վիճազրության բնագավառում հնագրության տվյալների մասին համարյա բոլոր պնդումները, որոնց մինչև օրս հանդիպել ենք հայկական ոչ հարուստ հնագրական գրականության մեջ, հիմնված են չստուգված, անհիմն, երբեմն էլ կանխակալ դատողությունների վրա: Բավական է ասել, որ էջմիածնում հիանալի աղյուսակներով հրատարակված հատուկ հնագրական ատլասում չի գիտակցված, նույնիսկ չի ենթարկված գրի գարգացման մեջ տեղական գործոնի նշանակությունը, որը երբեմն ավելի իրական է, քան ժամանակի գործոնինը\*:

Հայաստանի պատմաբանը, հնագետը, ընդհանրապես հայկական վիճազրական արձանագրություններով հետաքրքրվողը չի գտնվում այն նպաստավոր պայմանների մեջ, որոնցում է լատինական կամ հունական արձանագրություններով զբաղվողը, որի տրամադրության տակ են դրված արձանագրությունների սպառիչ, համակարգված ժողովածուներ ստույգ որոշված տեսքով, ընդ որում արձանագրությունների մեծ մասն արդեն հետազոտված է և այս կամ այն չափով գիտականորեն մշակված:

Զխոսելով արդեն այն մասին, որ որևէ կերպ, լավ կամ վատ բացատրված հայկական արձանագրությունների թիվը երկու-երեք տասնյակից չի անցնում, մեր ձեռքի տակ չունենք նույնիսկ այնպիսի բնագրեր, որոնք հրատարակված լինեին ընդօրինակության ճշգրտությունն ապահովող բավարար երաշխիքներով:

Հայկական վիճակյալ արձանագրությունների, իբրև պատմական հուշարձանների նկատմամբ հետաքրքրությունը առաջացել է շատ վաղուց: Ըստ էության հայկական ար-

\* Այստեղ Հ. Օրբելիի նկատի ունի Թ. Բովսիլյանի հրատարակած «Բարսեղիայի հնագրութեան» աշխատությունը, որը լույս տեսավ «Երդակաթ» հայագիտական ժողովածուի մեջ 1913 թ. (ծան. Ս Գ. Բարխուդարյան)

ծանագրությունների առաջին հավաքողը եղել է Հայաստանի պատմիչ եպիսկոպոս Ստեփանոս Օրբելյանը (XIII դար): Եւ իր աշխատության մեջ այլ վավերագրերի հետ միասին մտցրել է նաև մի շարք արձանագրություններ, ընդ որում արտագրված շատ մեծ ճշտությամբ: Հայկական արձանագրությունների եավաքման հաջորդ փուլը հանդիսանում է 18-րդ դարի վերջը, երբ արքեպիսկոպոս Հովսեփը (աշխարհական իշխան Արղության) հավաքեց Սանահինի մի շարք արձանագրությունները և դրանք օգտագործեց Արղության իշխանների տոհմագրությունը կազմելու համար:

Նույն արձանագրություններին է նվիրված նաև Հովհաննես վարդապետ Ղրիմեցու աշխատանքը:

XIX դարի առաջին կեսին երևան են գալիս Հայաստանի մի շարք նահանգների արձանագրությունների ժողովածուները, կազմված արքեպիսկոպոսներ Աարգիս Ջալալյանցի և Հովհաննես Շահխաթունյանցի կողմից, իսկ 60-ական թվականներին՝ Ներսես Սարգիսյանի ձեռքով: Այս կապակցությամբ երևան են գալիս նաև առանձին վանքերի արձանագրությունների մի շարք մանր ժողովածուներ՝ կազմված Ա. Մխիթարյանցի, Սեդրակյանի և ուրիշների ջանքերով:

Շահխաթունյանցի, Ջալալյանցի, Սարգիսյանի դասական դարձած աշխատությունները, ապա նաև Ալիշանի երկերը, որոնցում հսկայական և մեծարժեք նյութ է հավաքված դեռ երկար ժամանակ չեն կորցնի իրենց նշանակությունը իբրև անփոխարինելի հավաքածուներ, որոնցում առավել կան պակաս լրիվությամբ տրված են Հայաստանի տարբեր վանքերի արձանագրությունները: Չեն կորցնի իրենց նշանակությունը ոչ թե նրա համար, որ ոժտված են ինչ-որ բացառիկ արժանիքներով, օրինակ, բնագրերի բացարձակ ճշգրիտ ընդօրինակմամբ, այլ պարզապես այն բանի համար, որ հետագա հավաքողների աշխատությունները, սկսած Բաբխուղարյանից ու վերջացրած Լալայանով, Հարությունյանով և ուրիշ-

ներով, պահպանելով Շահխաթունյանցի և նյուսների բոլոր թերությունները, ոչ մի քայլ առաջ չանցան նրանցից: Ընդամին հաճախ որպես նոր վերձանում է ներկայացվում հնի պարզ արտատպությունը: Թվարկված բոլոր աշխատությունների ընդհանուր թերությունը արձանագրությունների ոչ լիակատար ստույգ ընդօրինակությունն ու վերարտադրությունն է, ուր անպայման բացված են ոչ միայն փակագրերը, այլև պատվի նշանները, երբեմն բնագրերը լրացվում են առանց նշելու լրացված մասը (ըստ որում հաճախ լրացված գրերի քանակը չի համապատասխանում ջարդված մասի բռնած տարածությանը), արձանագրությունների տեղը ոչ միայն անճիշտ ու անորոշ է նշված, այլև սխալ և, վերջապես, արձանագրությունները լրիվ չեն հավաքված:

Հայկական արձանագրությունների ուսումնասիրության մեջ խիստ գիտական մեթոդների կիրառման առաջին դեպքը Լ.Յ. Սառի «Նոր նյութեր հայկական վիճագրության» հոդվածն է: Դժբախտաբար դրանով էլ գործն ավարտվեց: Հոդվածի հեղինակի փորձերը կազմակերպել հայկական և վրացական արձանագրությունների հավաքումն ու հրատարակումը, ոչ մի արդյունքի չհասան, եթե չհաշվենք Կոստանյանցի աշխատությունը: Վերջին ժամանակների միակ աչքի ընկնող երևույթը Գարեգին վարդապետ Հովսեփյանի «Հնագրական քարտեզի» հրատարակությունն է, որը պահպանելով գիտական հրատարակությունների բոլոր արտաքին կողմերը, երբեմն մեղանչում է հրատարակվող տեքստի և բնագրի անհամապատասխանությամբ:

Ներկայումս հայկական արձանագրությունների հրատարակությունը նոր ձև է ընդունել: Այդ արձանագրությունների ստույգ վերարտադրության համար անհրաժեշտ են հատուկ փակագրային տառանիշեր: Դեռևս 1909 թվականին, երբ Խաչենից բերված արձանագրություններում գտնվեցին 300-ից ավելի փակագրային տառանիշեր, անհրաժեշտություն

զգացվեց հետագայում հայկական արձանագրությունները հրատարակել պահպանելով փակագրերը, որը երբեմն, հատկապես անձնանուններում, բացման չի ենթարկվում: Այդպիսի տառանիշերի պատրաստման հետ կապված դժվարությունները ստիպեցին հետաձգել հրատարակման գործը: Այժմ երկամյա աշխատանքից հետո մեր տրամադրության տակ ունենք Կայսերական գիտությունների ակադեմիայի ծուլարանում պատրաստված փակագրերի հիմնական կոմպլեկտը (500-ից ավելի տառանիշեր): Այդ տառածներն առաջին անգամ կիրառվեցին «...Христосъ некииъ Востокъ...» համընդեսում մի քանի արձանագրությունների հրատարակման ժամանակ: Այնուհետև երևան եկավ փակագիր տառածներով տպագրված, Անիի հնագիտական թանգարանի հրատարակած, իմ կողմից արտագրված և ստուգված Մարմաշենի արձանագրությունների ժողովածուն: Ներկայումս տպագրվում են Սրենի, Անիի արձանագրությունները, ինչպես նաև մեր ֆակուլտետի սան Ամբատ Տեր-Ավետիսյանի գործի ամբողջ պատասխանատվությամբ կազմված աշխատությունը Անահիճի արձանագրությունները, որը հրատարակում է Կայսերական գիտությունների ակադեմիան: Արձանագրությունները հրատարակվում են պահպանելով նրանց քոլոր առանձնահատկությունները, ինչպես նաև փակագրային ձևերը, որոնք ուղեկցվում են նրանց վերծանությամբ և լիակատար ընթերցմամբ\*։ Ավելորդ է նշել, որ այդ ժողովածուների մեջ սպառնիչ կերպով հավաքված են այն վանքերի արձանագրությունները, որոնց նվիրված են և տրվում են անհրաժեշտ լուսանկարները:

Այդ ժողովածուներով հայկական արձանագրությունների ապագա corpus-ի համար նյութերի հավաքման և նախապատրաստման սկիզբն են դրվում: Դժվար է ասել, որքան

\* Գրչյալ արձանագրությունների հրատարակությունը չիրականացավ (ծանոթ. է՝ Գ. Բարխուդարյանի)

մեծ ու ընդարձակ կլիմի այդ corpus-ը! Մենք պատկերացում չունենք մեզ հասած հայկական արձանագրությունների ընդհանուր թվի մասին: Մինչև այժմ հրատարակված արձանագրությունների թիվն այնքան էլ մեծ չէ: VII դարից 13, VIII-IX դարերից մոտ 20, X-XII դարերից մոտ 250, XIII դարից մոտ 600, XIV-XVI դարերից մոտ 200, XVII-XIII դարերից մոտ 200, անթվակիր մոտ 200, ընդամենը 1500: Սակայն արձանագրությունները հաշվելիս չի կարելի վստահել հրատարակություններին, ինչտ այցելվող փառաբանված վայրերում, որտեղ աշխատանքի հարմարություններ կան, արձանագրությունները հավաքված են ավելի լրիվությամբ, քան խուլ, դժվար մատչելի վայրերում: Օրինակ, Սանահինում Ս. Տերևկետիսյանին հաջողվեց արդեն հրատարակված 77 արձանագրություններին ավելացնել 19-ը, մինչդեռ դժվարամուտ Ղարաբաղի Կոշիկ անապատում, որտեղ Բարխուդարյանցը արտագրել է 3 արձանագրություն, ինձ բախտ վիճակվեց հավաքել 29-ը, հենց այնտեղ, իսաթրա մենաստանում Բարխուդարյանցի 13 արձանագրությունների փոխարեն հավաքեցի 35:

Զխոսելով արդեն այն գանձերի մասին, որոնք ծածկված են հին շենքերի ավերակների կամ բերածո ավազների տակ, կարելի է պատկերացնել, թե որքան նյութ ենք հայտնաբերելու դեռևս, եթե նույնիսկ պեղումներով չզբաղվենք, այլ միայն հավաքենք այն, ինչ գտնվում է հողի մակերեսին, և այդ գործում պետք է շտապել:

Նրանց, ովքեր ծանոթ են Կովկասում հնության հուշարձանների պահպանության վիճակին, իհարկե, զարմանք չի պատճառի, որ էջմիածնի մոտ գտնվող Օշականի վանքի պատերի չափազանց հետաքրքրական արձանագրությունները ոչնչացվեցին, ջնջվեցին կամ ծեփով ծածկվեցին, սոսկ այն նպատակով, որպեսզի բարեկարգ տեսք տրվի այն վայրին, որտեղ անփոփված է հայկական այբուբենը հնարողի

աճյունը, այն մարդու, որի 1500-ամյա հորելյանը այնպիսի հանդիսությամբ նախանցյալ տարի տոնվեց Օչախանում:

Կովկասում ամենուրեք հնության հուշարձանների ոչնչացման մասին բողոքներ են լսվում, դրանք դարձել են Կովկասի հնագիտության մասին բոլոր հաղորդումների, հոդվածների, զեկուցումների ու դասախոսությունների մշտական ու ծանծրալի կրկներգը: Սակայն տվյալ դեպքում մեզ վշտացնում է ոչ թե հուշարձանների պատահական, դիտավորյալ կամ տգիտությամբ կատարված փչացումը, այլ ավելի տխուր և վտանգավոր երևույթը արձանագրությունների չարանենգ ոչնչացումը: Բավական էր անհեթեթ լուր տարածվեր, թե դատարանը Խաչենի բեկերի և հայկական հոգևոր իշխանության միջև ծագած հողային վեճերը վճռելիս ղեկավարվելու է ոչ միայն ռուսական կազմատիրական իրավունքի նորմաներով, այլև հայկական հնագույն արձանագրություններով, որպեսզի բեկերի ամբոխը Գանձասարի շրջակայքում քերեր XII-XIII դարերի՝ մեկ ու կես տասնյակ արձանագրություն, նպատակ ունենալով ոչնչացնել այդ հողերի վանքապետական լինելն ապացուցող վավերագրերը: Նույն երևույթը նկատվում է նաև մյուս վանքերում: Պարզ է, թե որքան ժամանակին է ներկայումս պեղումների հետ զուգահեռ, չժամկված և այդ պատճառով պատուհականություններին ավելի ենթակա վիճագրական բնագրերի հավաքման ուղղությամբ լայն աշխատանքների կազմակերպումը: Այդ գործն արդեն հաստատուն և հաջող կազմակերպված է Շիրակում, անհրաժեշտ է, քանի դեռ ուշ չէ այն տարածել նաև Հայաստանի մյուս նահանգներում:

Այսպիսով, դեռևս ոչինչ չի արված, ավելի ճիշտ շատ քիչ քան է արված, որպեսզի հետազոտողի տրամադրության տակ դնենք ստույգ բնօրինակված վիճագրական նյութը, որը միայն ուսումնասիրության և մշակման կարիք ունենար: Այդ պատճառով էլ յուրաքանչյուր ոք, որը թեկուզ զուգընթա-

ցաքար հետաքրքրվում է հայկական արձանագրություններով, ստիպված է անմիջականորեն դիմել բնագրին: Հայկական արձանագրություններն ուսումնասիրել, առանց ազատ կարդալու նրանց բնագիրը, առայժմ անհնար է: Պարզ է, որ մենք էլ, թեև հետաքրքրվում ենք արձանագրությունների միայն բովանդակությամբ, մեր դասընթացի հիմքում դնելու ենք ոչ միայն նրանց բովանդակության ուսումնասիրությունը, այլև բնագրի հետ ծանոթանալը, կամ, որովհետև այդ հնարավոր չէ անել այստեղ, գոնե լուսանկարների ու էստամպաժների օգնությամբ կատարել նման աշխատանք:

Մեր դասընթացը նվիրված է Հայաստանի վիճագրական հարուստ ժառանգության մի աննշան մասի Շիրակի արձանագրություններին: Առաջիկա դասընթացի համար Շիրակի արձանագրությունների ընտրությունը պայմանավորվում է գլխավորապես արտաքին պատճառներով: Շիրակն իր երբեմնի մայրաքաղաք, հետագայում վարչական, առևտրական ու արդյունաբերական կենտրոն Անի քաղաքով Հին Հայաստանի համարյա միակ մահանգն է, որտեղ աշխատանքներ են տարվում հնության հուշարձանների, մասնավորապես արձանագրությունների հավաքման և ուսումնասիրության ուղղությամբ: Այստեղ մենք ունենք առավել վստահելի նյութեր գիտականորեն ստուգված, զգալի մասով լուսանկարված, իսկ երբեմն նաև էստամպաժի ենթարկված արձանագրություններ: Արձանագրությունների բնագրերի հետ ծանոթանալ ցանկացողների համար հենց այստեղ կան բոլոր հարմարությունները պատմական վայրերն այցելելու համար, չկան այն դժվարությունները, որոնց հետ կապված են Խաչենի կամ Լոռու ձորերի դժվարամուտ ճանապարհները: Մեր ընտրությունը կարելի է արդարացնել նաև նրանով, որ ըստ գրական աշխատությունների Շիրակն ավելի է ծանոթ, քան մյուս մահանգները:

Մենք կանգ կառնենք հիմնականում Շիրակի շինարարա-

կան արձանագրությունների վրա: Համարյա յուրաքանչյուր այդպիսի արձանագրություն, հուշարձանի կառուցման կամ վերանորոգման մասին տեղեկություններից բացի, ցուցումներ ունի նաև հովանավորի կողմից այդ եկեղեցուն տրված նվերների և դրանց դիմաց եկեղեցու կողմից հովանավորողին տրված պարտադիր պարագաների վերաբերյալ. հաճախ էլ որոշումներ կան վանքին ու եկեղեցուն տրված այլ արտոնությունների մասին (օրինակ՝ ջրի օգտագործման և հարկերի վերաբերյալ):

Այսպիսով, զբաղվելով շինարարական արձանագրություններով, կարելի է գաղափար կազմել հայկական վիճակական արձանագրությունների գերազանցապես տարածված բոլոր չորս ձևերի մասին: Միաժամանակ հնարավորություն է ընձեռվում հուշարձանների ամենահետաքրքիր և գլխավոր մասը՝ արձանագրությունները ցուցադրել նյութական փաստերով՝ լուսանկարներով:

### 3. ՕՐԲԵԼԻ

## ԱՆԻ ԱՎԵՐԱԿՆԵՐԸ

Պատմություն, Այժմյան վիճակ, Պեղումներ

Թարգմանեց աստերենից

Միարան Ս. Էջմիածնի

ՀՈՒՍԻԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

(Արտատպւած՝ «Արտրատ» ամսագրից,  
Վաղարշապատ, տպարան՝ Մայր Թատ  
Ս. Էջմիածնի, 1911 թ.)



## ԱՆԻԻ ԱՎԵՐԱԿՆԵՐԸ\*

**Ա**նին Կովկասում, Կարսի նահանգի Կարս գավառում մի ավերակ է Արփաչայ գետի աջ ափին, որը հոսում է Արաքս գետը: Արփաչայը հնում Միսուրյան էր կոչվում: Անին գտնվում է Երևանյան երկաթուղու Անի կայարանից 6-8 վերստ և Ալեքսանդրապոլից 35-40 վերստ հեռավորության վրա:

Սույն տեսության նպատակն է տալ ընդհանուր գաղափար Անիի արտաքին պատմության, այժմյան վիճակի և պեղումների հետևանքի մասին:

### I

Անին Հայաստանի մայրաքաղաքն է: Երբեմն, ծաղկած քաղաքի անապատ ավերակները սովորաբար այդպես են հայտնի: Այդ հորջորջումը թեև հանրացած և ամենից ընդունվածն է, սակայն ամենևին չի արտահայտում այն աչքի ընկնող դերը, որը մեր քաղաքը խաղացել է Հայաստանի և բոլոր Կովկասի պատմական կյանքում:

Անին երբեք ամբողջ Հայաստանի մայրաքաղաքը չի եղել: Բացի դրանից, այնպիսի կենտրոններ, որպիսին Անին է, ցա-

\* Սույն գրքույկին մենք ավելագույնը վրաց եպիսկոպոսի վրացերեն և Արուսեյիդի պարսկերեն արձանագրությունները, կցելով մի քանի կարևոր ծանոթություններ Հայ. Ձեռագր.:

նագան ժամանակաշրջաններում մի քանի հատ են եղել: Նրանց շարքում Անին ամենանորն է և, իբրև մայրաքաղաք ամենակարճօրյան: Իր գոյության ամենաերկարատև շրջանում Անին ոչ թե մայրաքաղաք էր, այլ միայն մեծ վաճառաչահ, արդյունաբերական և կուլտուրական քաղաք՝ բնակավայր ոչ թե թագավորների, որ բուն Հայաստանում այդ ժամանակ չկային, այլ միայն տեղական կառավարիչների, և այն էլ մեծ մասամբ օտարերկրացիների:

Անիի պատմությունը ձևականապես կարելի է երկու շրջանի բաժանել – տեղական հայ իշխողների տիրապետության շրջան, և օտարերկրյա իշխողների շրջան:

Բայց այդ բաժանումը միայն արտաքին է: Իսկապես Անին օտարերկրացիների ձեռքն անցնելով իր ներքին կյանքում քիչ փոխվեց: Պետք է մի կողմ թողնել հնացած և սխալ վարկը, թե Անիի բարգավաճումը Բագրատունյաց շրջանում է եղել, թե քաղաքի հետագա կյանքը եղել է նրա մահացումը: Անիի հայ հարստության անկումը ամենևին Անիում առաջ չի բերել տեղական կուլտուրայի անկում: Այն եղել է փոխանցման, և այն էլ ոչ խիստ փոխանցման, մի վայրկյան, որովհետև Անիի շարունակվող կյանքը եղել է նրա նախանցյալ շրջանի կենսագրության զարգացումը: Չնայած օտարերկրյա տիրապետությանը, ամենևին չի փոխվել քաղաքի տեղական իսկական պատկերը, որն ամբողջովին յուրացրել էր հարևան ժողովուրդների քաղաքակրթող ստեղծագործության հարուստ հետևանքները: Անիի բարգավաճումն այն ժամանակին է վերաբերում, երբ Ռուբինյան հարստությունից առաջ եկած հայ թագավորները նստում էին հեռավոր Կիլիկիայում:

Հին Հայաստանի մյուս մեծ քաղաքների համեմատությամբ Անին ունի առանձին արժեք և առանձին նշանակություն: Նա լավ պահպանված լինելով, լավ էլ հայտնի է մեզ պատմությամբ: Խորը ուսումնասիրելով Անին, նրա հիշատա-

կարանները և նրա պատմությունը շատ հեշտ է անցնել հին Հայաստանի կյանքին, շատ հեշտ է նրա պատմությունը հասկանալ: Ել չխոսելով քաղաքիվ արձանագրությունների մասին, իրական քաղաքան գյուտերը և անեցիների բնակարանների, տնային սարք ու կարգի հետ ծանոթությունը մեծ լույս են սփռում կյանքի այն կողմի վրա, որի մասին տեղական հին պատմիչները խորին լռություն են պահում: Հայաստանի կյանքը բնորոշելու համար այսպիսի մեծ նշանակություն ունենալով Անին մերձավոր արևելքի պատմության համար էլ ներկայացնում է մեծ հետաքրքրություն, մանավանդ վճռական փոփոխություններով լի ԺԱ-ԺԴ դարերի շրջանում: Եվ ի դեպ, այդ կարևոր շրջանը համենատեղիվ ուրիշ վայրկյանների հետ Անիում ավելի կատարյալ է հանդիսանում: Անին իր ավերակներում շատ լավ է պահպանել միջնադարյան մեծ քաղաքի կերպարանքը. այժմ նա հանդիսանում է Առաջավոր-Ամիայի քաղաքներից միակը, որ այնպես վաղ մեռնելով՝ ամենևին չի աղավաղվել նոր կյանքի պայմանների ազդեցության տակ: Վերջապես, Անիի հիշատակարանները բնորոշելով մի կարգ ժամանակաշրջանների հայկական գեղարվեստի զարգացումը՝ պարզ և բարդ գեղարվեստների բոլոր տեսակների պատմության համար շատ զնահատելի են. չէին եղել դրանք, ոչ միայն Հայաստանի, այլ և Առաջավոր-Ասիայի և Բյուզանդիայի գեղարվեստի շատ գծեր գիտության համար աննկատելի մնացած կլինեին:

## II

Հայտնի չէ թե երբ է հիմնվել Անին: Միայն անկասկած է, որ նրա սկզբնավորությունը խորին հնության է վերաբերում:

Այս մասին վկայում է ամենից առաջ նրա ԱՆԻ անունը: Պետք է մի կողմ թողնել այն բացատրությունը, որ ԱՆԻ կոչելը կապվում է ԱՆահիտ աստվածուհու անունի հետ, որի բազմը գտնվում էր այդտեղ: ԱՆԻ բառն իր ձևով վերաբերում է Հայաստանի, Վրաստանի և մերձավոր երկրների կյանքի շատ ավելի հնագույն կյանքի դարաշրջանին: Հնդեվրոպական ծագումից չէ այն և պետք է մեկնել որևէ մի ժողովրդի անվան կապելով:

Այն ժամանակի միակ իրական վկան է մի բավական ընդարձակ գերեզմանոց, որ իր մեջ բովանդակում է քաղաքի հնագույն բնակիչների խանձված կամ փշրված ու կոտրված ոսկորները: Քաղաքը այդ ժամանակ, իհարկե, կարող էր մի ավան լինել: Այդ գերեզմանոցը քաղաքից մի վերստ հեռու թուրք ԱՆԻ գյուղի կալերումն է գտնվում: Այդտեղ գտնված առարկաները պատկանում են Կովկասի նախապատմական հնությունների տիպին, հնությունների, որոնց կարելի է համարել Քրիստոսից առաջ Ը-է դարերի գործ: Այդ ժամանակը ԱՆԻ կյանքի մասին մեզ հայտնի հնագույն թվականն է: Այդ շրջանից ուրիշ հիշատակարաններ առ այժմ չեն գտնվել ոչ ԱՆԻում, ոչ նրա մերձակա շրջակայքում:

ԱՆԻ կյանքի մեզ հայտնի հետևյալ ժամանակաշրջանն է Ե դարը Քրիստոսի ծննդից հետո, երբ ԱՆԻն պատմության մեջ հիշատակվում է մի քանի անգամ որպես ամրոց: Այն այդ ժամանակ գտնվում էր հայ Կամսարական հզոր իշխանների տիրապետության մեջ, Կամսարականների, որոնք ամուր նստել էին այդ տեղերում:

Կամսարականները շատ հաջող տեղ էին ընտրել ամրոց շինելու: Եռանկյունիի բարձրությունը, որի վրա շինված է ԱՆԻն, պաշտպանված է Ախուրյան գետի և ԱՆԻ գետակի անդնդախոր անմատչելի ձորերով, երրորդ կողմից մի բավական նեղ տարածություն է, և հեշտ էր նրան յավ ամրացնել: Կամսարականները թողել են մեզ ամրոցի մի հաստա-

տուն պարիսպ, որը ի հայտ է եկել պեղումներով. պարիսպը շարված է կոշտ, վայրի ահագին սալաքարերով, որոնք իրար միացած են երկաթյա կապերով: Այդ միևնույն ժամանակ Աճին, գտնվելով առևտրական կարևոր ճանապարհներից մեկի վրա, ռազմական մի գերազանց վայր էր հանդիսանում: Կամսարականների օրով Աճին միայն բերդ էր. հայտնի էլ չէ, թե եղել է այն, նույնիսկ կարճ ժամանակով, Կամսարական գորավոր ցեղի մի քանի անդամների բնակավայր (րեզիդենցիա):

Աճին այն ժամանակ քաղաքի նշանակություն ստացավ, երբ անցավ եկվոր (հավանորեն Լազերի երկրից\*), բայց շինարարական ձիրքով առատորեն օժտված Բագրատունիների ձեռքը:

Ջարմանալի է, որ այս բազմանդամ, եռանդոտ, անձանձրույթ, ընդարձակ ցեղի անդամները, ամենուրեք, ուր երևում էին, կարողանում էին բաժան-բաժան եղած տեղական ուժերը միացնել և ստեղծում էին մեծ կամ փոքր ամբողջություն: Շիրակի հայ թագավորությունը, որը որպես թագավորություն երևան է գալիս ին դարում, ամբողջովին Բագրատունիների ջանքի պտուղն է. որոնք զենքի ուժով է, որ գնմամբ այստեղ մեծացրին իրենց տիրապետությունը: Գնված գավառների շարքում Կամսարականներից նրանց անցավ այն վայրն էլ, ուր գտնվում էր Աճին:

Սկզբում Գայոց Բագրատունյան թագավորությունը մեկն էր հավասարազոր իշխանություններից որոնցից մի քանիսը նրանց հետ մաքառելու բավականին ուժ ունեին: Այդ իշխանություններից մի քանիսին թեև վիճակվեց մինչև անգամ Շիրակի թագավորությունից էլ երկար գոյություն ունենալ, բայց

\*) Գայ պատմության տվյալները Բագրատունիների ժազուր երեական են հավատում, և նրանց գաղթը Գայաստան շատ հին, նրանք իայ Պարթև և Արշակունի թագավորների թագադիր ասպետի տիրոջն էին կրում, և այս տիրոջնով նրանք երևան են գալիս իայ պատմության մեջ. Զ ձ ավելի քան մի դար առաջ:

\*այ թարգմ.

միայն Շիրակին հաջողվեց իր շուրջը խմբել մնացած բոլոր իշխանությունները. միայն Շիրակի մայրաքաղաքին հաջողվեց Հայաստանի մեծ մասի գաղափարական կենտրոնը դառնալ:

Անին միանգամից չդարձավ Բագրատունիների բնակավայր. Բագարանից (որի գոյությունը Անիի պես վերաբերում է խորին հնության), ուր առաջին անգամ հաստատվել էին, փոխադրվեցին Բագրատունիները երազգավոր կամ Շիրակական, այժմ Շորագյալ գյուղ: Բայց ոչ Բագարանը և ոչ Շիրակականը իրենց նշանակությամբ չէին կարող հավասարվել Անիին, որը նրանց ժաղկման ժամանակ միայն բերդ էր. - ամուր կռվան և վստահելի ապաստանարան վտանգի դեպքում:

Առաջին Բագրատունին, որ Շիրակի թագավոր հռչակվեց էր իշխանաց իշխան Աշոտը, որ հայ գործերի հրամանատարն էր: Այս եղավ 887 թվին: Տեղական բոլոր իշխաններից նրան «հայոց թագավոր» հատկացրած տիտղոսը ճանաչվեց բյուզանդական կայսրից էլ, իսկ խալիֆը իր փոխանորդի ձեռքով ուղարկեց արքայական թագ: Կարիք չկա կանգ առնել նրա կառավարության և նույնպես նրա որդու ու հաջորդի (891թ.) Սմբատ աշխարհակալի թագավորության վրա, որի օրով երկիրը սկզբում կարծես հանգիստ և բարօրություն գտավ: Հետո, երբ Շիրակի գահը հակուն ցույց տվեց դեպի Բյուզանդիա, այս բանը մուսուլման ենիրների հետ բարդություններ առաջ բերեց և Սմբատի կորստյան առիթ դարձավ, մի քանի պատերազմներից հետո, որ մղեց փոփոխական բախտով 914 թվին նա գերի ընկավ Դվինի ենիրի ձեռքը և փայտի վրա խաչվեց:

Սմբատի եղբոր որդի Աշոտը, իրեն թագավոր հռչակեց շահանշահ\*, այսինքն թագավորների թագավոր տիտղոսով, 921 թվին արտաքսվեց Բյուզանդիայի հովանավորած օրինական ժառանգ Աշոտ Գ Երկաթից, որը յուրացրեց իր նա-

խորդի շահանշահ տիտղոսը: Սասանյան թագավորներից ընդօրինակված այս տիտղոսը այդ ժամանակից սկսած պահպանեցին հայ Բագրատունի թագավորները:

930 թվին Աշոտ Երկաթին փոխարինեց Աբասը, որի թագավորությունը նշանավոր դարձավ ոչ միայն հյուսիսային «սարմատացի» հրոսակներին դիմադրելով, այլև շինարարական խաղաղ բարգավաճմամբ և ուսումնական աստվածաբանների ու պատմաբան գիտնականների զբաղմունքների զարգացմամբ: Աբասի օրոք երկու վայրեր հռչակ ստացան – Կարսը (ուր նստած էր Աբասը) և Անին, որոնք նրա մահից հետո թագավորություններ դարձան:

Աշոտ Դ-ը 954 թվին Անիի թագավոր դառնալով անդամալուծներին և աղքատներին սփոփելու, հիվանդանոցներ, օտարներին ապաստանելու տներ շինելու համար «Ողորմած» կոչվեց: Սրա վարչության ժամանակ Անին առաջին անգամ քաղաքի արտաքին տեսք ստացավ: 964 թվին կառուցվեց քաղաքային պարիսպը բազմաթիվ աշտարակներով: Աշոտի ժամանակներին է վերաբերում մի քանի աչքի ընկնող շինությունների կառուցումը: Աշոտ Դ-ի օրով հայ հետևակազորքը մտավ բյուզանդական Յովհաննես Չմշկիկ կայսրի զորքերի կազմի մեջ, երբ վերջինս պատերազմում էր Բուլղարների և Ռուսաց Ավյատոսլավ իշխանի դեմ:

Իր հորը 977 թվին հաջորդող Սմբատ Բ-ի կառավարությունը Անիում ավելի նշանավոր հետքեր թողեց: Նա շինեց քաղաքային պարիսպները, որ ավելի ընդարձակ օղակով են շրջապատում Անին, քան Աշոտի պարիսպները: Այդ ակներև ցույց է տալիս քաղաքի արագ և անշեղ աճելիությունը: Կար-

\*) Կարծում ենք, որ Բագրատունիների աշխարհակալ և շահանշահ տիտղոսները պետք չէ բառի իսկական իմաստով հասկանալ, այլ տեղական: Այդ ժամանակ Գայաստանում մանր իշխաններից մի քանիսը թագավոր էին կոչվում: Բագրատունիները, իբրև նրանցից ավելի հզորը, շահանշահ – թագավորների թագավոր էին անվանվում:

սը գրավելու անհաջող փորձը և վրաց Բագրատ թագավորի Տայոց կյուրապաղատ Դավթի հետ Աբխազների թագավորի դեմ պատերազմներին մասնակցությունը ազդեցություն չունեցան Անիի արտաքին բարօրության համար: Սմբատի հանկարծական մահը (990 թ.), որ համարվում է երկնային պատիժ նրա ծանր չարագործությունների, մայրաքաղաքի դռները բաց արեց Սմբատի եղբայր Գագիկի առաջ, որը մինչև այդ իրավունք չունեի Անի մտնելու:

Գագիկ Ա-ի ժամանակ (990-1022թթ.) Անիի թագավորությունը հասավ ամենածաղկյալ դրության: Իր ուժին վստահ Գագիկը, որին պատմիչները նկարագրում են որպես կարող, քաջ, պատերազմասեր և հաջողակ ոք, թույլ տվեց իրեն արհամարհել մինչև անգամ Բյուզանդիայի հզոր կայսր Վասիլ Բ-ի բարյացակամությունը: Գագիկը կայսրին ընդառաջ չգնաց, երբ նա ճանապարհորդում էր արևելքում, երբ արևելյան մյուս տիրողները աճապարում էին նրան երկրպագելու և պատիվ էին համարում ընդունել նրա շնորհած պալատական տիտղոսները:

Գագիկը իրեն շահանշահ էր համարում և գիտեր, որ ինքն է հայ երկրի համախմբողն ու միացնողը, նրա համար պարզ էր իր ժամանակով կատարված Տաշիրքի ընդարձակ նահանգի և Կարթալինիայի մի մասի Անիի թագավորության հետ միացման մեծ նշանակությունը, նա իրեն համարում էր հայերի և վրացիների թագավոր այնքան որքան վրացական երկրներ էին մտնում նրա պետության սահմանի մեջ:

Վասիլին ողջունելու դուրս չգալով Գագիկը միևնույն ժամանակ արագորեն և վճռաբար սանձահարեց իր եղբորորդի Աբուսահլի բանսարկությունները, նրա տիրապետության մեծ մասը գրավելով, նա արագությամբ և նույնպիսի միջոցներով հնազանդեցրեց իր մյուս եղբոր, Գուրգենի որդի Դավթին, որը պատրաստվում էր իրեն անկախ հռչակելու:

Չնայելով այն բոլոր պատերազմներին, և թերևս հենց այդ

պատերազմների գորությամբ, Գագիկը զգալի կերպով թեթևացրեց իր հպատակների դրությունը մի շարք հարկեր և տուրքեր անպահանջ թողնելով:

Գագիկի թագավորության ժամանակ առաջ եկան մի կարգ գիտնականներ, որոնց մեջ էր հայ նշանավոր պատմաբաններից մեկը՝ Ստեփան Տարոնացին: Գագիկի շինարարության ամենալավ հիշատակարանն է Անիի բոլորակ եկեղեցին (1001 թ.) . Գագիկի կին Կատրամիդեն ավարտեց Անիի կաթողիկեն, որը սկսել էր դեռ Սմբատ Բ-ը:

Գագիկը միակ հայ թագավորն է, (եթե չհամարենք և Կիլիկիայի թագավորները), որից մեզ հասել է քանդակված պատկերով արձան, որը գտնվեց բոլորակ տաճարի պեդումների մեջ:

Գագիկ Ա-ի օրով որքան Անիի թագավորությունը բարձրացավ ու զորացավ, այնքան էլ նրա որդի ու հաջորդ պակասամիտ Հովհաննես Սմբատի օրով նվաստացավ ու թուլացավ: Հովհաննես Սմբատի վարչության հենց սկզբնավորությունը նշանավոր եղավ ներքին պատերազմով իր Աշոտ եղբոր հետ, որը դադարեց միայն վրաց Գեորգ Ա թագավորի օգնությամբ: Շուտով, նույն ինքը Գեորգը գրպարտիչների ազդեցությամբ հանկարծակի բերեց Սմբատին, գրավեց նրա երեք բերդերը: Իսկ Աշոտը, որ այդ ժամանակ էլ իր տիրապետության մեջ շրջապատված էր հզոր թշնամիներով, ապավինեց միայն բյուզանդական զորքերին և այդպես կարողացավ պահպանել իր փոքրիկ ժառանգությունը:

Անիի շփոթ վիճակի մասին բավական վկայում է Պետրոս պատրիարք-կաթողիկոսի պատմությունը, որը Սմբատի հետ տարածայնության պատճառով թողեց իր աթոռը և փախավ Անիից, բայց կայանավորվեց և թագավորի հրամանով բանտարկվեց:

1942 թվին համարյա միաժամանակ վախճանվեցին Սմբատ ու Աշոտ երկու եղբայրները: Պատմիչների ասելով ան-

գավակ Յովհաննես Սմբատը, որ վայելում էր Բյուզանդիայի շնորհները, իր թագավորությունը կտակեց Բյուզանդիային: Այդ ժամանակին թե Կ.Պոլսում և թե Հայաստանի ներսում կազմված էր բյուզանդասեր մի հզոր կուսակցություն, որը բավական ուժ ուներ Անին գրավելու համար վճռական քայլ անելու: Համենայն դեպս, նա ավելի ուժեղ էր երևում մյուս կուսակցություններից, որոնցից մեկը հայրենի հարստությունը (դինաստիա) պաշտպանելու կողմն էր, իսկ մյուսը քաղաքը Վրաստանի թագավորին հանձնելու: Հենց այդ թվականին բյուզանդական մի հզոր բանակ երևաց Բագրատունիների մայրաքաղաքի պարիսպների տակ: Անիի աջ կողմի ձորի (Օադկաձոր) մոտ տեղի ունեցած ճակատամարտում հույները հաղթեցին շնորհիվ ծերունի գորավար իշխան Վահրամ Պահլավունու և նրա կուսակցության, որը կարողացել էր իր ժամանակին սերտ համախմբվել: Այդ կուսակցությանն էր պարտական ընդունակ, բայց չափազանց երիտասարդ Գագիկը՝ Աշոտի որդին, որ Անիի կաթողիկեի հրապարակում թագավոր հռչակվեց և այդտեղ էլ օժվեց: Բայց մինչև այդ ժամանակ Անիի Միջնաբերդը գրավված էր Բյուզանդական կուսակցության կողմից, որի գլուխ կանգնած էր իշխան Վեստ-Սարգիսը: Գագիկը նրան այնտեղից դուրս հրապուրեց և կալանավորեց, բայց ոչ ընդերկար. շուտով նա ինքն ընկավ որոգայթի մեջ: Հավատալով բյուզանդացիների երդմնական խոստմանը, Գագիկ Բ-ը ուղևորվեց Կ.Պոլիս, բայց այնտեղ բռնի հարկադրվեց հրաժարվել Անիի թագավորությունից, մի աննշան փոխարինություն ստանալով: Հետո 1079 թվին սպանվեց հույների կողմից:

1044 թվին հույն զորքերը պատերազմով առան Անին, որն ընդմիշտ դադարեց հայ թագավորության մայրաքաղաք լինելուց: Անին դարձավ բյուզանդական փոխարքաների բնակավայր (ռեզիդենցիա): Հարկ չկա թվել բոլոր փոխարքաներին որոնք կատեսպան էին կոչվում:

1053 թվին կատեպան գտնում ենք Ահարոնին, որ առաջ Վասպուրականի կառավարիչն էր: Ահարոնի անունը կապված է Անիի ջրմուղի նորոգման և բարեկարգման հետ: Այդ ջրմուղը 12 վերստ է ձգվում:

Պետք է ասել, որ բյուզանդական կառավարիչները մեծ ջանք էին գործի դնում, որ Անին պահպանեն իր նախկին ծաղկյալ դրության մեջ, հովանավորելով վաճառականական հարաբերությունը և թեթևացնելով մի քանի հարկերն ու տուրքերը: Նրանք առանց ուշադրության չթողին Անիի արտաքին տեսքը: 1059 թվին շինարարական աշխատանքներ կատարեցին միջնաբերդում: Դատելով հունական այն հոյակապ հիշատակարանի արձանագրություններից, որը քանդակված է այդ առիթով, աշխատանքները բավական նշանավոր են եղել: Քաղաքը ամրացնելու համար միջոցներ են ձեռք առնվել: Պատնեշներ են դրված և շատ տեղերում Ամբատի պարսպի երեսը փոփոխված է: Այդ բանով կարելի է բացատրել արևմտյան անկյունի աշտարակի վրայի հունական խաչի գոյությունը:

Այդ իսկ ժամանակ հույները Անիում էլ, Բյուզանդիայում էլ բոլոր ժամանակ զգույշ էին մնում, երևի ամեն վայրկյան Անիում խռովություն սկսասելով: Հունական համեմատաբար սակավաթիվ բերդապահ զորքը չէր կարողանում քաղաքը ենազանդության մեջ պահել: Սակայն բյուզանդացիք չէին վախենում Անիում օտարազգի փոխարքա նշանակելուց: Կատեպան մագիստրոս Ահարոնը բուլղար էր: Վերջին երկու հակառակորդները՝ Բագրատ Վիսկիացին և Գրիգորը, որ բյուզանդական քաղաքական հայտնի գործիչ էր և մեծ դեր էր խաղացել Կոմնենոսյան հեղափոխության ժամանակ, իսկապես վրացիացած քաղկեդոնական հայ էր:

Հույներին վիճակված էր շուտով ընդմիջտ կորցնել Անին: 1065 թվին Սելջուկյան Ալփ-Արսլանը մտավ այստեղ իր հաղթական արշավանքի ժամանակ, որպես շարունակող իր հո-

րեղբայր Տողրուլի նվաճողական գործունեության: Մի քանի օր ԱՄԻՆ եամառությամբ դիմադրում էր Ախուրյան գետի և ամուր պարիսպների շնորհիվ: Միայն մի կողմն էր մի քիչ թույլ, քայց այդ էլ չէր ընկճվում թշնամու հարձակման առաջ, ոգի իբրին դիմադրության շնորհիվ: Արփ-Արսլանը կարծես թե հուսահատվեց քաղաքը առնելուց և պատրաստվեց հեռանալ, երբ Բագրատի և Գրիգորի դատապարտելի չափազանց զգուշավորությունը ամեն բան կորստի մատնեց: Հոգալով իրենց փրկության և միջնաբերդը պահպանելու մասին, երկու կառավարիչները ամրացան միջնաբերդում կտրելով հարաբերությունը քաղաքի հետ: Այս բանը սարսափեցրեց բնակիչներին: Արփ-Արսլանը օգտվեց շփոթությունից և Աստվածամոր տոնին խուժելով ԱՄԻԻ մեջ, սարսափելի ավերածության և ավարառության մատնեց: Ի միջի այլոց, ջարդ ու փշուր եղավ շքեղ ջահը, որ կաթողիկեի գարդն էր և գնել էր Սմբատը առասպելական գնով: Կաթողիկեի գմբեթից դուրս կորզվեց և տարվեց Նախիջևան արծաթյա մարդաչափ խաչը: Չեմ կրկնի պատմիչների նկարագրությունը Արփ-Արսլանի արյունահեղության մասին, որը որպես թե լողացավ, հատկապես այդ նպատակով խողխողված հազար մարդկանց արյունի մեջ:

1072 թվին Դվինի ենիր Աբու-լ-Սուարը գնեց ԱՄԻՆ Ալփ-Արսլանից: Այդ ժամանակից արդեն սկսվում է մեր քաղաքի համար նոր դարաշրջան: Մինչև անգամ հին պատմիչները այդ ժամանակամիջոցը եամարում են ԱՄԻԻ վերածնության սկիզբը: Հիրավի, Շեղդադյանների հարստությունը, որին պատկանում էր Աբու-լ-Սուարը շատ մեծ դեր է խաղացել ԱՄԻԻ պատմության մեջ, և ԱՄԻՆ սկսած այդ ժամանակներից քաղաքի նշանակությունն ստացավ և որպես քաղաք անկախ միություն էր կազմում. ծագմամբ քուրդ Շեղդադյանների հարստությունը կանանց կողմից ազգակից էր Բագրատունիներին, որով անեցիների աչքում նրա կառավարությունը

պետք է երևար որպես Բագրատունյաց թագավորության վերածնունդ: Շեղդադյանները և ամենից առաջ Մանուչեն Արու-լ-Սուարի որդին, անվանապես էի միայն պարսկական իշխանության ներկայացուցիչ, նրանք իսկապես իրենց հպատակ չէին ճանաչում և իրենց պահում էին Անիում որպես անկախ թագավորներ: Շեղդադյանների օրով Անիի բարգավա- ծելը անկասկած կապ ուներ Առաջավոր - Արևել- քի մուսուլմանական երկրների քաղաքային կյանքի զարգացման հետ: Այժմ առանձին թափով պետք է երևար, առաջուց էլ նկատված, Անիի բնակչության բազմացելու- թյունը, որը շատ նպաստել է ժԲ-ժԳ դարերի գեղարվեստա- կան հիշատակարանների առաջ գալուն: Այդ հիշատակա- րանները կրում են իրանական-մուսուլմանական գեղարվես- տի գորեղ ազդեցության հայտնի երևույթները: Բոլոր այս բազմացել բնակչությունը ապրում էր մի ընդհանուր կյան- քով, Անիի մզկիթի երեքլեզվյան արձանագրությունը հանդի- սանում է իրական ապացույցը այս խաղաղ կենակցության: Հարկ չկա Անիի կյանքի այս շրջանի որոշ պահերը մանրա- մասնաբար հիշատակելու: Որքան էլ այս տարօրինակ թվա, հատկապես քաղաքակրթական ամենամեծ ստեղծագործու- թյան հենց այս ժամանակին Անին շատ անկայուն կյանք էր վարում:

Չնայելով բնակիչների և Շեղդադյանների միջև եղած ներ- քին կապին, նրանք միշտ էլ չկարողացան իրենց ձեռքում պահել քաղաքը: Արտաքին վտանգի գիտակցությունը բա- վական գորեղ էի: Թե Շեղդադյանները հոգս էին անում Անին իրենց ձեռքում պահելու երևում է այն իրական վերանորո- գություններով, որոնց ենթարկվեցին այդ քաղաքի պարիսպ- ները: Մանուչեի կատարած շինությունները ամրոցներում հաստատվում են ոչ միայն այդ լրացուցիչ պարիսպների հատկությամբ ու շարելու ձևով, այլև համապատասխան ար- ձանագրություններով: Մինչև անգամ այս գորավոր պա-

րիսպների մեջ Շեղդադյանները չէին պարտաւորու լիւթաց բու-  
լորովին անվտանգ զգալ: Զօգնեցին Մանուչեի պետական  
իմաստուն միջոցներն էլ, որը աշխատում էր Ալփ-Արսլանի  
կոտորածների պատճառով փախած բնակիչներին վերա-  
դարձնելու: Այս ժամանակ ուժեղացաւ Վրաստանը հայտնեց  
իր իրավունքները և 1123 թվին բնակիչների նշանավոր մա-  
սի առ քրիստոնյա հարևանների տրամադրության շնորհիվ,  
վրաց թագավոր Դավիթ Շինարարը կալանավորեց Մանուչե-  
ի որդի Աբու-լ-Սոււարին, Անին ազատեց մուսուլմանների տի-  
րապետութիւնից և իր որդուն այնտեղ իբրև կառավարիչ  
թողեց: Անեցիները մեծ ուրախությամբ ընդունեցին վրացի-  
ներին և շատ օգնեցին նրանց քաղաքը նվաճելիս: Նրանք  
շատ գրգռված էին Աբու-լ-Սոււարի դեմ, որը չէր գնահատում  
իր քաղաքը և, մինչև անգամ, մտադրվել էր վաճառել Կարս  
քաղաքի էմիրին 60000 դինարով: Սակայն շատ շուտով, ար-  
դեն 1126 թվին, երբ Դմիտրը հաջորդեց Դավթին, Աբու-լ-Սու-  
արի եղբայր Փաղլունը պաշարեց Անին գործել բանակով: Նա  
չկարողացաւ քաղաքը կռվով առնել\*, բայց երբ հանդիսա-  
վոր կերպով խոստացաւ թե կպահպանի Անին և իր հոր  
շավդին կիետևի, Անին անձնատուր եղաւ նրան: Փաղլունը  
շուտով փորձեց խախտել իր խոստումը, բայց չկարողացաւ:

ԺԲ դարի ընթացքում Անին մի քանի անգամ մուսուլման  
տիրողներից անցաւ վրացիների ձեռքը, բայց և այն ժամա-  
նակ, երբ Անին մուսուլմանների ձեռքում էր գտնվում կառա-  
վարիչներին փոխելու դեպք լինում էր: 1155 թվին Անին  
ապստամբեց Շեղդադի դեմ և անձնատուր եղաւ նրա եղբայր  
Փաղլունին:

1161 թվին հայոց Նասիր-ադ-դին Սուլկման Բ շահը մեծ  
գորքով պաշարեց Անին ազատելու համար եկաւ վրաց Գե-  
որգ Գ թագավորը և սակավաթիվ գորքով հաղթեց շահարմե-

\*) Քաղաքը հուսակոտոր պաշտպանելու գործում մասնակցում էին կանայք էլ  
հեքուսբայք փառաբանվա ձ վրեժմեղիկ աղջևա առաջնորդութ ամբ

նին: Գեորգը մնաց Անիում մի քանի օր և այնտեղ բերդապահ զորք թողեց էմիրի իշխանության տակ:

1163 թվին Անին 30-օրյա պաշարման ենթարկվեց Սելջուկների սուլթան Արսլան-շահի և Իլդիգիզ Աթաբեկի զորքերից: Նրանք կարողացան հաղթել Գեորգին. թեև Անին չառնվեց, բայց այնուամենայնիվ անցավ Արսլան շահի իշխանությանը:

1174 թվին Անին նորից վրացիների ձեռքին էի, որոնց իշխանությունը բավական ամուր կերպով հաստատվեց այնտեղ: Նույն Գեորգ Գ-ի օրով քաղաքապահների գլխավոր Շանշե Դադիանը փորձ արեց ապստամբելու, բայց այդ փորձը շուտով էլ ճնշվեց թագավորի կողմից կառավարիչ կարգված Իվանե Օրբեյանի և իշխան Սարգիս Երկայնաբազուկի ձեռքով: Գեորգ թագավորի հաջորդ թամարա թագուհու օրով Անիի կառավարիչ դարձան Սարգսի որդի Իվանե և Ջաքարե եղբայրները, որոնք վրաց թագավորության մեջ բարձր պաշտոններ ունեին:

Երկայնաբազուկ եղբայրները պատկանում էին հայոց, նոր առաջ եկած, իշխանական ցեղի և հավանորեն քուրդ ծագումից էին: Երկայնաբազուկ եղբայրների զինվորական հաջողությունները բավական նպաստեցին իրենց դիրքը Անիում ամրացնելու: Արդաբիլի սուլթանի հետ պատահած դեպքը շատ բնորոշ է: 1209 թվին Արդաբիլի սուլթանը, օգտվելով Երկայնաբազուկների բացակայությունից, եկավ Անիի վրա և Ջատկի օրը, երբ բաց էին քաղաքի դռները, ներս խուժեց ու սարսափելի ավերվածության ենթարկեց: Չազատվեցին այն բնակիչներն էլ, որոնք այրերում էին թաք կացել: Միմիայն եկեղեցիներում որպես թե սպանվել էին 12000 մարդ: Իմանալով այս Երկայնաբազուկները շուտով զորք գումարեցին, հույսը դրած թագուհու օգնության վրա՝ ավարի առան Արդաբիլը, 12000 մարդ կոտորեցին այնտեղ և գերելով սուլթանին ու նրա ընտանիքը մեծ ավարով վերադարձան Անի:

Բայց բացի այդ արտաքին հանգամանքներից կային ներքին պատճառներ էլ, որոնց համար Երկայնաբազուկ իշխաններն ու նրանց հաջորդները Անիում ստացան անկախ վարիչների և համարյա թագավորների ուժ ու նշանակություն: Անիում հայ թագավորական հարստության և նրա ազգակից Լոռիի թագավորների անկումից հետո առաջ եկան առանձին նոր տոհմեր և մանր իշխանություններ, ինչպես օրինակ Խաչենը ու նույնիսկ վերածնված Լոռին: Այս նոր տոհմերի մեջ ավելի զորավորը Երկայնաբազուկներն էին, որ ի դեպ խնամհացել էին Խաչենի տան հետ: Երկայնաբազուկների առաջին քայլը եղավ գրավել Լոռին, որի վրա նրանք կարող էին իրավունք հայտնել և այն պատճառով, որ առաջ ծառայել էին Լոռիի թագավորին: Երկայնաբազուկների Լոռիի վերաբերությամբ իրավունքը վրաց թամարա թագուհին էլ ճանաչեց: Երկայնաբազուկների ազդեցությունը վաղուց արդեն հաստատված էր այս կողմերում: Թագուհու վավերացումն առավել ևս կարևոր փաստ դարձավ Երկայնաբազուկների բախտի համար ապագայում: Այսպես, հայ նահանգները ոչ միայն լիակատար հանգիստ գտան հյուսիսային, այն ժամանակ հզոր հարևանուհու կողմից, այլև գտնվեցին նրա անմիջական հովանավորության տակ: Ինչպես էլ լինեք վրաց արքունիկում Երկայնաբազուկների դրությունը, հայերը, որ ապրում էին նրանց երկրների մեջ, որ բուն Բայաստանի մասն էին կազմում, զգում էին իրենց լիակատար տերեր, ազատության այս զգացումը ավելի զարգացած էր Անիում: Եթե հայ և վրացի պատմիչները չլինեին, չէինք էլ կարող մտածել թե Անին որևէ կախում է ունեցել վրացիներից: Բիրավի, տեղում Անիում, ոչ արձանագրությունների և ոչ էլ հիշատակարանների մեջ բոլորովին չի երևում Վրաստանի քաղաքական տիրապետություն, զոնե մինչև այսօր երևան չեն եկել այդ բանը հաստատող նշաններ, շատ հավանական է, որ այս տիրա-

պետությունը միայն հովանավորության հատկություն էր կրում\*:

Ընդհանրապես քաղաքական անկախությունը կորցրած շրջանում էլ ժԱ դարի կեսից մինչև ժԳ դարը Անին շարունակում է ծաղկել որպես հայ քաղաք: Երբեմն նույնիսկ կախումը, որը երբեք Անին հոգևոր և տնտեսական ստրկական վիճակի մեջ չի եղել դրած, անվանականից դարձել է վերացական: Այս առավել պատահում էր, երբ այս կամ այն քաղաքական առումով հաղթողները հարկավոր էին գտնում քաղաքի կառավարությունը հանձնել իշխանական տոհմերին: Անիի օտարերկրյա և օտարազգի վարիչները, երբ մի անգամ հաստատվում էին Անիում, ընդհանրապես աշխատում էին անեցիների համակրությունը վաստակել անշեղ գործադրելով օրինականությունը և լայն ազատություն տալով տեղական հաստատություններին: Իրերի այս դրությունը ապացուցվում է հայ ու օտարազգի գրական հիշատակարանի ուսումնասիրությամբ. այդ դրությունը հաստատվում է այն ժամանակի իրական հիշատակարաններով ու շինություններով:

Անիի լիակատար ինքնավարությունը բնորոշվում է նույնպես ավագների այն խորհրդով, որը վարում էր քաղաքի բոլոր գործերը, և նրանց կարծիքը շատ անգամ ավելի նշանակություն էր ունենում քան կառավարչի ցանկությունն ու հայացքը: Ավագների այս խորհուրդը, որի ծագման մասին առայժմ դեռ տեղեկություն չկա, համենայն դեպս, գոյություն ուներ Շեղդադյանների, վրացի փոխարքաների և Երկայնաբազուկների տիրապետության ժամանակ:

Անիում Երկայնաբազուկների գործունեության հետ կապ ունի որպես առանձին աչքի ընկնող շենքերի, նույնպես և ընդհանուր քաղաքաին, և ի մասնավորի ամրոցների կառու-

14 \*) Այս մտքով շատ հետաքրքիր է վրացիքեն արձանագրությունը, որ գտնված է 1910թ. և որի մասին հետո խոսք կլինի: Ողս. հեղ.:

ցումը: Արձանագրությունների հավաստիացումն են, որ այս ժամանակամիջոցում քաղաքի պարիսպները նորոգվել են, շատ նոր աշտարակներ են կառուցվել: Գուցեն այդ ժամանակ շինված լինի Անիի միակամար գեղեցիկ կամուրջը հավանորեն հնագույն կամրջի տեղը: ԺԳ դարում քաղաքը ամենամեծ չափին հասավ: Նրա մեջ, պատմիչների ասելով՝ հաշվվում էր 100.000 բնակիչ, 10.000 տուն և 1001 եկեղեցիներ թիվը մանավանդ շատ ընդհանրացած էր. Զիրավի, Անիում եկեղեցիները շատ շատ են Գիտական-քաղաքակրթական հաստատություններից հիշատակության արժանի է Ռպրեվանքի ճեմարանը Անիից մի քանի վերստ հեռու:

Երկայնաբազուկների գործությանը Անիում վերջ տվեց մոնղոլների արշավանքը, որ կարճ ժամանակում ոտնակոխ արեց Կովկասի նշանավոր մասը: 1236 թվին մոնղոլների ղեսպանները, որ ուղարկված էին Անիի կառավարիչ Շահանշահ\* Երկայնաբազուկի մոտ առաջարկելու որ անձնատուր լինի, սպանվեցին: Այն ժամանակ մոնղոլները հարձակմանը առան քաղաքը և սարսափելի սպերածության ենթարկեցին: Մոնղոլները Անին առնելով իսկույն չփոխեցին կառավարիչներին, որոնք այն ժամանակ «պարոն» էին կոչվում: Միայն ժամանակ անցնելուց հետո Երկայնաբազուկները իրենց տեղը գիջեցին ուրիշ իշխանների, որոնք սովորաբար հայ էին լինում և նշանակվում էին մոնղոլ խաների կողմից, որոնց համար Անին դարձել էր առանձին մասնական տիրապետություն (խասինջա):

Հետո Անին անցնում է մոնղոլական մի հարստությունից մյուս հարստության և մինչև ժե դարը պահում է իր գոյությունը որպես քաղաք, և այդ դարի կեսին Անիում դեռ ոսկի դրամ էին կտրում:

15 \*) Ունայն Շահանշահն էր, որի հետ տեսնվեց եվրոպացի հայտնի ճանապարհորդ Ռուբրուկը, որ Մոնղոլիա ուղևորվելիս ճանապարհի վրա այցելեց Անի և հանդիպեց այնտեղ մի քանի միսսիոներին էլ:

Դժվար է ասել թե ինչն եղավ պատճառ Աճիի վերջնական կործանման, որ ժՁ դարում արդեն մի գյուղ էր: Վերջնական հարվածը քաղաքին եղավ, հավանորեն, Լանգ-թեմուրի արշավանքով, բայց, իհարկե, ավելի մեծ նշանակություն ունեւր Աճիի բնակիչների գաղթը, որոնք սարսափահար էին եղել անընդհատ արշավանքներից և Աճիում հաճախակի կրկնվող երկրաշարժներից: Ավանդությամբ, որ հաստատվում է հին պատմիչներով Աճիի բնակիչները գաղթեցին հարավային Ռուսաստան, այնտեղից անցան դեպի արևմուտք և տեղավորվեցին Գալիցիայում ու Լեհաստանում:

ԺԸ դարից սկսած Աճին, որպես ավերակ պատկանում էր թուրքական բեկ խաթուն-օղլիներին, որոնցից վերջինը դեռ կենդանի է: 1878 թվին, պատերազմից հետո Աճիի շրջակայքը Կարսի նահանգի հետ անցավ ռուսաց տիրապետությանը:

### III

Այժմ Աճին ներկայանում է անբնակ ավերակ, ձգված անկանոն մի եռանկյուն տարածության վրա, որ 150 դեսիատինից ավելի է: Եթե մոտենանք Աճիին հյուսիսային կողմից, նա մի քիչ հեռվից չի թողնում այն բոլորովին անայության տպավորությունը որպիսին համակում է քաղաք մտնողին: Բարձր, մի ժամանակ ահարկու քաղաքային պարիսպները մասամբ թաքցնում են քաղաքի ներքինը:

Այդ պարիսպները կոչվում են Սմբատյան, և նրանց կառուցումը վերագրվում է Սմբատ Բ-ին: Բայց նրանք չեն մնացել իրենց սկզբնական դրությամբ: Սմբատ թագավորի պարիսպները, ժամանակի ընթացքում, միշտ նորոգվել են, թանձրացել են, և շատացել է աշտարակների թիվը: Տեղ-տեղ, ուր

պարիսպների երեսաքարերը թափվել են, տեսանելի է ավելի հին շարվածքը, և այդպես երբեմն երևան են գալիս երեք և մինչև անգամ չորս շերտ երեսաշարք: Ամբաստյան պարիսպները, որպես և ԱՄԻԻ բոլոր մյուս հիշատակարանները, գերազանցում են նրբությամբ և ուղղանկյուն, ողորկ տաշված ու խիտ դասավորված քարերի կանոնավոր շարվածքով: Պարսպի գույնը ավելի կենդանացնելու համար շարվածքի մեջ տեղտեղ գործադրված են, բացի դեղնագույն քարերից, կարմիր և սև քարեր, որ սովորական են ԱՄԻԻ մյուս շինությունների համար: Այս գունավոր քարերը երբեմն կազմում են զոտիներ աշտարակների վրա, երբեմն էլ դասավորված են շախմատի կարգով. երբեմն գանազան ձևեր են պատկերացնում, մեծ մասամբ խաչի: Չնայելով, որ շատ տեղերում պարիսպները խիստ կոիվների հետքեր են կրում և ծակոտված են սլաքներով, բաբաներով և բախող գործիքներով, նրանց վրա պահպանվել են ուռուցիկ զարդեր, որ ներկայացնում են արծիվ, վիշապ, ցլի գլուխ և մինչև անգամ ապակյա ու հաղձապակյա կիսագնդակների մնացորդներ, որոնք հազցրած են առանձին քարերի մեջ: ԱՄԻԻ պարիսպները ամենալավ կերպով բնորոշում են անեցիների ձգտումը, ըստ հարմարության ամեն բան զարդարել որևէ կերպով: Այդ տեսակ զարդարանքներից պետք է ջոկել քաղաքի Գլխավոր դռան մոտ գտնված վազող վագրի ուռուցիկ քանդակը խաչապսակ գնդակը ճիրանին, որը թերևս ԱՄԻԻ գինադրոշմ էր (ԺԳ դարում): Բացի գլխավոր դռնից, կարելի է քաղաքի մեջ մտնել մի քանի այլ դռներով ու դռնակներով:

Քաղաքի ներքինը տխուր տեսարան է ներկայացնում: Շինությունների մեծ մասից մնացել են քիչ շատ բարձր բլրակներ կամ խոր փոսեր: Միայն տեղ-տեղ բարձրանում են դեռ կանգուն մնացած հատ-հատ հիշատակարաններ: Ղրանց մեջ առանձին տպավորություն է թողնում կաթողիկեն, որ հմնադրվել է Ամբատ Բ թագավորի օրոք և ավարտվել 1000 թ.

Կաղրամիդե թագուհու ձեռքով, որը թաղված է տաճարի արևելյան որմի տակ: Բարձր պիլոններ (սյան բուն), նուրբ, թեթև թեքված կամարները, արևելյան կողմից մտայլ խորանները, գմբեթի տեղ բաց երկինքը տաճար մտնողին հիացնում են: Տաճարի տեսքը արտաքուստ փոքր-ինչ խանգարում է գմբեթի բացակայությունը, գմբեթի, որ ըստ ավանդության, խոնարհվել է 1319 թվին, սարսափելի երկրաշարժի ժամանակ, որ կործանիչ ազդեցություն է ունեցել Կովկասի շատ հիշատակարանների վրա:

Տաճարից դեպի արևելք բարձրանում է Փրկչի աշտարակածև, բազմանկյուն եկեղեցին, որ շինված է ժԱ դարի առաջին կեսում և վերանորոգվել է ԺԳ դարի երկրորդ կեսին: Եկեղեցիների այս հետաքրքիր երևույթը, մի քանի մեծ արհիդներով, որոնցից մեկը հատկացված է լինում բեմին ու սեղանին, բավական հազվադեպ է Հայաստանում, բայց Անիում այդպիսի մի եկեղեցի էլ կա. այն գտնվում է Կաթողիկեի մյուս կողմում, գետակի ձորալանջին, և պատկանում էր Աբուղամրենց իշխաններին. այն շինված է համարյա միաժամանակ Փրկչի եկեղեցու հետ, որը կառուցված է նույն տոհմի իշխանների ներկայացուցիչներից մեկի ձեռքով: Աբուղամրենց Ա. Գրիգոր եկեղեցունն էլ, Փրկչի տաճարումն էլ կան որմնանկարների (ֆրեսկ) մնացորդներ, առաջինում համարյա բոլորովին ջնջված: Փրկչի տաճարում որմնանկարները նկարած են ժԳ դարի վերջերում, և, ի նկատի ունենալով, որ որմնանկարները Հայաստանում հազվադեպ են, շատ հետաքրքիր են: Բայց ոչ նկարչության և ոչ պահպանված լինելու կողմից նրանք չեն կարող մրցել Անիի մյուս եկեղեցու նկարների հետ: Այդ եկեղեցին գտնվում է Ախուրյան ձորի գառիվայրի վրա, Փրկչի եկեղեցուց մի քիչ ներքև, շինել է 1215 թվին, Անիի հարուստ իշխան հայ-քաղկեդոնական Տիգրան Հոնենցը, որ երկայնաբազուկ եղբայրների մերձավորն էր: Արտաքուստ եկեղեցին զարդարված է նուրբ քանդակով, որ

ծնացնում է բուսական ցանցի մեջ խճճված զանազան գա-  
 զաններ, իսկ ներքուստ անբողջովին նկարված է: Որմնան-  
 կարները ներկայացնում են ավետարանական տեսարաններ  
 և մի շարք դեպքեր Հայաստանի լուսավորիչ Ս. Գրիգորի  
 կյանքից, որի ամուսնով էլ անվանված է տաճարը: Տիգրան  
 Հոնենցի այս տաճարը Անիի ամենայնով հիշատակարաննե-  
 րից սեկն է: Նույն Տիգրան Հոնենցը կառուցել է և մի փոքրիկ  
 վանք, որ գտնվում է նույնպես ձորի գառնիվայրի վրա: Անիի  
 այս գեղեցիկ անկյունը զարդարված է փոքրիկ, ճաշակավոր  
 աշտարակ-մատուռով, որը ներկայացնում է Փրկչի տաճարը  
 փոքր դիրքով: Այդ վանքը ընդհանրապես կոչվում է Կուսա-  
 նաց վանք: Սակայն նույն կոչումը տրվում է Անիի բոլորովին  
 ծայրին, բարձր, ապառաժյա թերակղզու վրա մեկուսացած  
 եկեղեցուն էլ, մեկուսացած աշտարակը, բարձրանում է թե-  
 րակղզու բարձրավանդակի եզրին, նույնպես և բոլոր թե-  
 րակղզին, կոչվում է Կույսի-Ամրոց (Ղըզ-Ղալա): Կուսի-Ամ-  
 րոցի եկեղեցին, որ համեմատաբար ավելի և առատորեն  
 զարդարված է շատ գեղեցիկ քանդակներով և ծածկված  
 բազմաթիվ արձանագրություններով, կապ ունի Երկայնա-  
 բազուկ եղբայրների շինարարական գործունեության հետ:  
 Ինչպես հայտնում է արձանագրությունը, այս եկեղեցին կա-  
 ռուցված է այնտեղ, ուր Հայաստանի լուսավորիչ Ս. Գրիգոր-  
 րը, կործանելով Անահիտ աստվածուհու բազինը, եկեղեցի  
 շինեց:

Թերակղզու և քաղաքի գլխավոր մասի միջև, բավական  
 բարձր բլրի վրա է Անիի միջնաբերդը: Նրա կենտրոնը գրա-  
 վում է արքայական ապարանքը: Նրա եզրին գտնվում է բա-  
 վական լավ պահպանված սագաշեն (բազիլիկ) փոքրիկ  
 եկեղեցի: Անիի այս ամենահին շինությունը իր վրա ունի հա-  
 յերեն արձանագրություն 622 թվին Ք.ծ. հետո, և բազմաթիվ  
 չափազանց հետաքրքիր զարդաքանդակներ, որոնք բոլորն  
 էլ ինքնատիպ են հայ գեղարվեստի այս հեռավոր ժամանա-

կաշրջանի համար: Բացի այս եկեղեցուց, բերդում կան դարձյալ երկուսը, որոնցից մեկի դռան ճակատը (պորտալ) զարդարված է ժԱ դարին վերաբերող հին գեղարվեստի հետքերով, երկրորդը, որ մոտավորապես ժամանակակից է նրան, մանրամասնության մեջ բավական հետաքրքրական բաներ ունի:

Միջնաբերդի ու Կաթողիկեի միջև, համարյա մեջտեղում, Ախուրյանի ձորալանջին գտնվում է կրկնահարկ մզկիթ բարձր, բազմաշերտ մինարեթով: Անիի ամենագեղեցիկ զարդն է այս մզկիթը իր խոշոր սյուներով, որոնք պսակավորված են ահագին խոյակներով, և հոյակապ առաստաղով որ տրոհված է հարթ քառակուսիների և շարված է գույնզգույն քարերով: Այս շինությունը մզկիթ է դարձրել Մանուչե էմիրը, նորոգելով և փոքր-ինչ փոփոխելով, իսկ առաջ այն ծառայել է մեզ եամար անհայտ նպատակի, հավանորեն կապ ուներ մոտիկ եղած քաղաքային, Աշոտի համարված պարսպի և Ախուրյանի կամրջի հետ, որ մեկն էր այն երկու կամուրջներից, որոնց հետքերը քաղաքի սահմաններում դեռ մնում են: Այդ կամուրջը ուներ մի կամար 14 սաժեն լայն անցքով:

Կաթողիկեից դեպի հյուսիս-արևմուտք Անիի երկրորդ մզկիթի մինարեթի փլվածքի կույտերից ոչ հեռու գտնվում են Առաքելոց եկեղեցու ավերակներն ու նրա գավիթը: Գավիթը (շինված ժԲ դարում, շատ ավելի լավ է պահպանվել, քան (ժ դարում շինված) եկեղեցին, և իր գույնզգույն առաստաղով, քանդակավոր բարավորներով և ստալաքտիկական միջերով (խորշ) մեծ տպավորություն է թողնում: Նրա հոյակապ ստալաքտիկական գմբեթը փոքրիկ լուսամուտով, վերևում համարյա կախված է չորս շքեղ և վայրահակ կամարների վրա, որից երկուսը արդեն խխմել են: ժԲ դարի այս քմահաճո քանդակները քիչ են պատշաճում իսկական եկեղեցու դռների լուրջ ճակատներին, որոնք զարդարված են տերևաքանդակ խոյակներով, ինչպիսին է բերդի եկեղեցին: Ա. Առաքելոց եկե-

ղեցու ճակատի (Ֆասադ) քանդակներն իրենց նրբությամբ շատ հետ են իշխանական ապարանքի (շինված ԺԲ-ԺԳ դարերում) ճակատից: Այդ ապարանքը գտնվում է Անի գետակի (Օաղկաձոր) ձորայանջին: Ապարանքի դռան ճակատը շարված է քանդակավոր աստղներով և խաչերով, որոնք այժմ, ափսոս, շատ ջարդոտված են: Այս ահագին շինությունը երեք հարկանի է, որոնցից ներքինը մասսամբ գետնի մեջ է գտնվում, կիսախավար է և ծածկված է բարձր կամարներով:

Եթե հիշենք և վրաց փոքրիկ սագաշեն (բազիլիկ) եկեղեցին էլ, որը գտնվում է Ա. Առաքելոց եկեղեցուց դեպի հյուսիս, դրանով արդեն թված կլինենք Անիի բոլոր հիշատակարանները, որոնք գետնի երեսին են: Սակայն քաղաքի պարիսպներից դուրս կան մի երկու ավերակներ էլ, ի միջի այլոց փոքրիկ, շատ գեղեցիկ, և իր շինվածքով բացառություն կազմող երկհարկ եկեղեցին, որ սովորաբար Հովուի եկեղեցի է կոչվում: Քաղաքի մեջ կան նաև ամբողջ մի կարգ առանձին շինությունների վայրի ու անտաշ ահագին քարերի կուտակներ: Այդ շինվածքները ձիթահաններ են, որ կիկոսայան շինվածքների տպավորություն են թողնում, և դրանց այժմ այդպես էլ համարում են:

Այդպիսի առասպելական հնություն են երբեմն վերագրում արհեստական բազմաթիվ այրերին, որոնցով լի են Անիի ձորերը, մանավանդ Անի-գետակի ձորը: Բայց, իհարկե, այս քարայր բնակարանները, որոնք երբեմն մի քանի սենյակներ ունեն, Անի քաղաքի ավելի հետին ժամանակներին են վերաբերում, երբ նրանց մեջ ապրում էին քաղաքացիք, որոնք հնար չունեին վերևում, պարսպից ներսն ապրելու: Անիի բարգավաճման ժամանակ այրերում շինվել են ընդարձակ դամբարաններ:

Այս այրերը չպետք է շփոթել «Ստորերկրյա-Անիի» հետ, որ Անիի ստորերկրյա բազմաթիվ անցքերից մեկն է: Այդ բոլոր անցքերը հավանորեն շինված են ռազմական նպատա-

կով: Պրանցից ամենամեծը «Ստորերկրյա ԱՆԻՆ» է, որ մեջտեղում ընդհատվում է, թողնելով մի երկար ընդարձակ դահլիճ, ցածլիկ, մի քանի քարե սյուների վրա հանգչող առաստաղով: «Ստորերկրյա ԱՆԻ»-ի մի նշանավոր մասը փուլ է եկած և պեղումների պետք ունի:

Բայց ավելի հարկավոր է պեղումը վերերկրյա ԱՆԻում, որի ամենալավ հիշատակարանները, ինչպես պարզվում է, ծածկված է ավազակույտերով:

#### IV

Առաջին կարգավորյալ պեղումները\* ԱՆԻում ձեռնարկվեցին 1892 թվին Ս. Պետերբուրգի կայսերական համալսարանի պրոֆեսոր Ն. Սառի ձեռքով, որ իր փորձը կրկնեց 1893 թվին էլ: Այս պեղումները, որ շատ ընդարձակ տարածք էլ չեն բռնում, բաց են արել շատ հետաքրքրական բաներ, ինչպես Ս. Գրիգորի եկեղեցու մնացորդները, Տիգրան Յոնենցի շինած եկեղեցու փոքրադիր օրինակը. երկու ուրիշ եկեղեցիների մնացորդները, աղքատների տների մի ամբողջ փոքր թաղ և, վերջապես, հասարակաց բաղնիքը: Բայց Ն. Սառը ընդհատեց պեղումները, որովհետև նա չէր ցանկանում, որ գտնված մանր իրերը քաղաքի սահմանից դուրս տարվեն կամ բախտի քմահաճույքին թողնվեին ճարտարապետական մասերը, գարդաքանդակները, արձանագրությունները և այլն:

\*) ԱՆԻի պեղումները, որ սկսված են կայսերական Հնախոսական Հանձնաժողովի նախաձեռնությամբ ու միջոցներով, համարյա այդ ժամանակից սկսած շարունակվում են բացառապես հայ հասարակության օժանդակությամբ, մասնավոր աճանց, ժանազան հասարակական հաստատությունների և գլխավորապես Ս. Պետերբուրգի հայ եկեղեցիների կալվածների կառավարության հորիորդի գումարներով:

Միայն 1904 թ., երբ նյութական միջոց գտնվեց Սանուչեի ջգկիթը թանգարան դարձնելու, պեղումները վերսկսվեցին։ Այն ժամանակից սկսած շարունակվում են ամեն տարի անառները։ Այս պեղումները գիտական տեսակետով տվին արուստ գյուտերը, և այդ բոլորը պահվում են տեղում։ 1908 թվին հարկ եղավ նոր հատուկ թանգարան շինել, այժմ այդ էլ ցված է և մտադրություն կա նորը, ավելի ընդարձակը շինելու։

1904 թվի պեղումները երևան հանեցին Աշոտ թագավորի շինած պարիսպների գիծը, պարիսպներ, որոնք Սմբատի պարսպի համեմատությամբ ցած են, բայց հզոր են և ամուր, կառուցված բավական մեծ, կարմիր քարերով։ Սմբատի գլխավոր պարիսպների մոտ պեղումների փորձը եղել է 1907 թվին։ Կարսի դռան այն ժամանակ սկսած պեղումն ավարտվեց 1910 թվին։ Դուռը, որ առաջ բոլորովին ծածկված էր, այժմ ամբողջովին երևան է եկել, այստեղ շինվածական մեծ բաներ գտնելու հույսերը չարդարացան, թեև զանազան տեսակի շատ սլաքներ գտնվեցին։ Այս պեղման գլխավոր նշանակությունը այն է, որ առաջին անգամ երևան եկան քաղաքի կարևոր ամրությունների մասերը, այն է. դռների փեղկերը։ Մեծագույն բևեռների մեծ թվին նայելով կարելի է դատել, թե երկաթի հաստ շերտով պատած դռները ինչպիսի խտությամբ մեխտոված էին։ Դռների հաստ տախտակյա գոտիներից, որոնց երկու ծայրին հազցրած են եղել կրնկակ ծավածքով կռացրած ծղխիները, պարզ ցույց են տալիս, որ նրանք շատ խոշոր են եղել։ Դռները փակվում էին հաստ միգերով, ավելի ճիշտ գերաններով, որոնք ծայրերին օղակներ ունեին։ Ուշադրությամբ հետամուտ լինելով այդ մնացորդների համեմատ կարելի է վերականգնել դռների ձևը։

1910 թվին մաքրվեցին քաղաքի գլխավոր դռներն էլ, այստեղից պեղումներն ուղղվեցին քաղաքի գլխավոր փողոցով, որ ձգվում է դեպի միջնաբերդը։ Այս փողոցի մասը հին քա-

դաքում, Աշոտի պարիսպներից ներս, պեղված էր դեռ 1908 և 1909 թվերին: Փողոցում բոլոր տները հիմնահատակ են եղած, բացի մի երկու կարգ շարքերից: Մանուչեի մզկիթի առջևի թաղում պատերը համեմատաբար ավելի լավ դրության մեջ են պահպանվել, և փողոցի այդ մասը ավելի գորեղ տպավորություն է թողնում: Պեղված թաղերից ոչ մեկումն էլ մեծ շինությունների հետքեր չերևացին, բացի մի հյուրանոցից, որի մասին խոսք հետո կլինի: Արևելյան քաղաքի համար շատ հետաքրքրական և բնորոշ են դեպի փողոց դուրս եկած փոքրիկ, բաց տերրասները, որ բռնում են փողոցի կեսից ավելին, նույնպես և դրսից ձգված քարե սանդուղները: Դուրս եկան մեծ քանակությամբ վայրի խոշոր քարեր, որոնք պաշտպանելիս են եղել շինությունների անկյունները արշավասույթ սայլերի բախումներից, տների մուտքերը անձրևաջրից պաշտպանելու համար սայլեր, և նստելու համար ցածլիկ թումբեր, որ տեղ-տեղ բոլորովին նման են այժմյան մայթերին: Քարահատակի հետքեր փողոցի բավական մեծ մասում չեն երևացել, որ հայտնի չափով կարելի է մեկնել, թե պեղված մակերևույթը ամեն տեղ չի հասել հնագույն քաղաքի հաստատ խտահողին: Քաղաքի գլխավոր դռների առաջ փողոցը հատակած է վայրի բավական խոշոր քարերով, այնուհետև միջնաբերդի ուղղությամբ անցնում է գեղեցիկ խճուղի (շոսսե), քարած մանր և շատ խիտ խճով, քիչ հեռու, փողոցի առաջուց պեղված մասում պահպանվել է մի գիծ, որ շատ լավ քարված է փոքր, բավական կոկված սալերով:

1910 թվին բացվեց Անիի առաջին հրապարակը, հետաքրքրական նրանով, որ նրա տեղում, բայց ավելի խոր շերտում, կանգնած է եղել ընդարձակ շինություն, որ սակայն չհաջողվեց այս տարի բաց անել:

Փողոցի վրա, ավելի ճիշտ, փողոցի տակ դուրս եկավ հին ջրմուղ (водопроводъ), այդ շարունակությունն է այն գծի, որ

դաքում. Աշոտի պարիսպներից ներս, պեղված էր դեռ 1908 և 1909 թվերին: Փողոցում բոլոր տները հիմնահատակ են եղած, բացի մի երկու կարգ շարքերից: Մանուչեի մզկիթի առջևի թաղում պատերը համեմատաբար ավելի լավ դրության մեջ են պահպանվել, և փողոցի այդ մասը ավելի զորեղ տպավորություն է թողնում: Պեղված թաղերից ոչ մեկումն էլ մեծ շինությունների հետքեր չերևացին, բացի մի հյուրանոցից, որի մասին խոսք հետո կլինի: Արևելյան քաղաքի համար շատ հետաքրքրական և բնորոշ են դեպի փողոց դուրս եկած փոքրիկ, բաց տերրասները, որ բռնում են փողոցի կեսից ավելին, նույնպես և դրսից ձգված քարե սանդուղները: Դուրս եկան մեծ քանակությամբ վայրի խոշոր քարեր, որոնք պաշտպանելիս են եղել շինությունների անկյունները արշավասույր սայլերի բախումներից, տների մուտքերը անձրևաջրից պաշտպանելու համար սալեր, և նստելու համար ցածիկ թումբեր, որ տեղ-տեղ բոլորովին նման են այժմյան մայթերին: Քարահատակի հետքեր փողոցի բավական մեծ մասում չեն երևացել, որ հայտնի չափով կարելի է մեկնել, թե պեղված մակերևույթը ամեն տեղ չի հասել հնագույն քաղաքի հաստատ խտահողին: Քաղաքի գլխավոր դռների առաջ փողոցը հատակած է վայրի բավական խոշոր քարերով. այնուհետև միջնաբերդի ուղղությամբ անցնում է գեղեցիկ խճուղի (շոսսե), քարած մանր և շատ խիտ խճով. քիչ հեռու, փողոցի առաջուց պեղված մասում պահպանվել է մի գիծ, որ շատ լավ քարված է փոքր, բավական կոկված սալերով:

1910 թվին բացվեց Անիի առաջին հրապարակը, հետաքրքրական նրանով, որ նրա տեղում, բայց ավելի խոր շերտում, կանգնած է եղել ընդարձակ շինություն, որ սակայն չհաջողվեց այս տարի բաց անել:

Փողոցի վրա, ավելի ճիշտ, փողոցի տակ դուրս եկավ հին ջրնուղ (водопроводъ). այդ շարունակությունն է այն գծի, որ

բացվել էր դեռ 1904 թվին, քաղաքի պարսպից դուրս, և գալիս էր Սոգյուտյու գյուղի աղբյուրներից. 1908 և 1909 թվերին արդեն բացված էր փողոցի այդ ջրմուղը: 1910 թվին երեք տեղեր երեք զանազան տիպի ջրմուղներ էլ բացվեցին: Աշոտի պարսպի մոտ առաջուց հայտնի տիպի խողովակներով, որոնք ծածկված են քարաշարքով: Հյուրատան առաջ մույն ձևի, բայց ուրիշ տեսակ խողովակով. այսինքն տակառածն, պրկված պատշաճավոր կավե օղակներով:

Ամենահետաքրքրական ջրմուղային շինվածքը գտնվել է բավական խորությամբ Ա. Առաքելոց եկեղեցու առջևի փողոցում. խողովակները շատ հազվագյուտ տեսակի են. վերևից ներքև են տափակեցրած, դասավորած են շատ լավ շինված և միմյանց պինդ հագցրած քարե խողովակների մեջ. կողքովը ձգված է քարաշար առու, այնքան լայն, որ մարդ կարող է միջովը սողալ, այդ կարող էր ծառայել թե անասուններ ջրելու և թե այնտեղից ջրմուղի կանոնավորությանը ոսկելու:

Բացի դրանից, քաղաքից դուրս գտնված են խողովակներ, որ ձորի աղբյուրներից քաղաք են գալիս: Այսպիսով ջուրը քաղաքում մատակարարվում էր ոչ միայն Սոգյուտյուի աղբյուրներից, որ 12 վերստի վրա է գտնվում, այլ ջրմուղը օգտվում էր մոտակա աղբյուրներից էլ:

Հետզհետե գտնվող ջրմուղների գծերը և այն էլ զանազան տիպի, խոստանում են առհասարակ հարուստ նյութ ընձեռել և պահանջում են մասնագիտական հետազոտություն: Այն ժամանակ միայն կարելի կլինի ներկայացնել այս հոյակապ շինվածքի պատկերը, որի սիստեմի մեջ մտնում են ճյուղավորված կավե և երկաթե խողովակները, որոնք գտնված են արքունի ապարանքում: Պետք չէ մոռանալ, որ Անիի ջրմուղը շինված է մինչև ժԱ դարը, երբ այն արդեն վերանորոգվում էր:

Բացի քաղաքային այս հասարակական շինվածքներից, պեղումները բաց են արել մի քանի առանձին շինություններ

էլ, ամենից առաջ 1905 և 1906 թվերին բոլորակ ահագին տաճարի ավերակները, այս տաճարը Գագիկ Ա թագավորը կառուցել է 1001-1015 թթ.: Այս մի հոյակապ տաճար է, որի առանձնահատկություններն էին գեղեցիկ սյուների դասավորված բոլորակի մեջ գծված խաչի ձևով. ուներ երեք հարկ, թե իր չափերով (բարձրությամբ մոտ 48 մետր), թե իր բոլոր տեսքով, սյուներով ու քանդակներով ականատեսի աչքին հանդիսանում է նա հրաշալիքի պես մի բան: Հիրավի, այս շինությունը Անիում իր հավասարը չունի, և նույնիսկ հայկական ճարտարապետության մեջ այդ մի հազվադեպ տիպ է, որը առայժմ միայն երեք-չորս հատ է: Այդ ձևի տաճարներից ամենահինը Ջվարթնոց եկեղեցին է (է դար), էջմիածնի մոտ (Երևանի նահանգում), որը իբրև օրինակ է ծառայել Գագիկի շինությանը: Արտաքուստ տաճարի որմին հաստատված է եղել Գագիկ թագավորի մեծ (3,5 արշ.) քարե ներկված արձանը: Թագավորը ներկայացված է կարմիր խալաթով, կրծքին խաչ, խալիֆի ընծայած մեծ, ճոխ փակեղով (չայմա) և իր կառուցած տաճարի իսկական մանրադիրը (մողել) ձեռքին: Գագիկի մորուսավոր դեմքը ուժի և լրջության արտահայտություն ունի: Արձանը պահվում է Անիի թանգարանում:

Գագիկի տաճարի շուրջը պեղման ժամանակ դուրս եկավ աղքատ տների մի անբողջ թաղ: Արևմտյան կողմից մասամբ բացվեցին մի մեծ տան մնացորդներ և նրա հոյակապ բարավորի - դռան ճակատի (պորտալ) մասերը, բարդ մոզայիք աստղներով և ոտմբերով: որոնք հոծ են ամեն տեսակ նկարների քանդակներով:

1907 և 1908 թվերի պեղումները ավելի ընդարձակ չափերով էին: Պեղվեց միջնաբերդի ապարանքը, շինված թագավորների ժամանակ, բայց հետո (մինչև ԺԳ դարը) փոփոխված և նորոգված: Նրա որմերը, որ այժմ խղճուկ և ծեփերը պոկոտված են, մի ժամանակ հոծ էին հարուստ զարդարանքներով: Աի դահլիճում կար շատ գեղեցիկ ծեփ, որը ներ-

Ապացնում էր կենդանիների նկարներ բուսական շրջանակների մեջ: Աի ուրիշ բազիլիքական դահլիճում որմերը նկարված էին պատերազմական կամ որսորդական տեսարաններով, որմերը, բացի նկարներից, թանձր ոսկեգօծված են եղել: Այդտեղ կար փայտյա կամար նուրբ քանդակներով: Առաստաղը նույնպես ունեցել է ոչ թե բույսերի կամ կենդանիների, այլ երկրաչափական ձևերի քանդակներ: Ապարանքում գտնվեցին ներկերով նուրբ նկարված փոքր տախտակներ, Իհարկե, ապարանքի այդ բոլոր շքեղ հարդարանքի մնացորդները ամենախեղճ դրության մեջ երևան եկան, բայց դրանցով լիովին կարելի է պարզել և վերականգնել շինության ընդհանուր բնավորությունը: Ապարանքի մի անկյունումն էլ գետեղված է փոքրիկ, բայց շատ հարմար բաղնիքը, իր նախասենյակով, ավազանով, քարե տաշտերով և երկու ջեռուցիչ խցիկներով: Մեծ կաթսայից միայն բույնն է մնացել: Բաղնիքի պատերում հարմարեցրած են ջրամբարից սկսած, տաք և պաղ ջրի նուրբ խողովակներ, առանձին հաստ խողովակը մատակարարում էր հարկավոր ջրի ամբողջ պաշարը, իսկ նման մյուս խողովակը ծառայում էր անասունների համար: Ապարանքի մի դահլիճը, երկրորդ հարկում, նայելով նրա չափերին և լուրջ ճարտարապետությանը, ոչ թե բնակության, այլ ընդունելության համար է եղել: Ապարանքը առայժմ ամբողջովին չի բացված:

1907 թվին, բացի ապարանքից, Ս. Առաքելոց եկեղեցուց ոչ հեռու, բացվեց հյուրատուն, որ բաղկացած է երկու ընդարձակ դահլիճներից, քարե հատակով, դահլիճների մեջտեղում կա մի, մի ջրամբար, շուրջանաձև ձգվում էր բարձր թունձր նստելու և բեռնակիր կենդանիների բեռները վար առնելու համար: Այս թմբի վրա բացվում են փոքր սենյակների («համարների») դռները: Հյուրանոցի լավագույն զարդարանքը, որ շատ լավ շինված էր, պորտալն էր, ուր քանդակված աստղերի, ռոմբերի, խաչերի, բազմանկյունների մոզա-

յիք նկարները միանում էին ուռուցիկ սֆինկսների, վիշապների և վագրերի հետ: Այս հյուրանոցը ժԲ-ժԳ դարերի բնորոշ հիշատակարանն է:

1909 թվի պեղումներով մաքրվեց Ս.Առաքելոց եկեղեցին, մասամբ նրա գավիթը և շրջապատի ընդարձակ հրապարակը, ուր գտնվեց մի փոքրիկ եկեղեցի է-Շ դարի և Բարսեղի հետաքրքրական հիշատակարանը 1184 թվի: Այս պեղումների ամենայնով գյուտն է Ս.Առաքելոց եկեղեցու հազվադեպ խաչածև հատակագիծը և նրա հինգ գմբեթներից գլխավորի մնացորդը, որ համարյա միակն է հայկական ճարտարապետության մեջ. նա արտաքուստ ծածկված է զարդարանքներով:

Պեղումների ընթացքում բացի այս բոլոր մեծ հիշատակարաններից, բացվել են շատ մանր շինություններ էլ, որոնց մի-մի հիշելը շատ երկար կլինի:

## V

Ինչպես ասվեց, բոլոր նյութերը, որոնք ձեռք են բերված պեղումներով, պահվում են տեղում, թանգարանի մեջ: Այստեղ համեմատաբար կարճ ժամանակում հաջողվել է արդեն Անիի կյանքը բնորոշելու համար հավաքել շատ բան: Ապարանքի բոլոր քանդակների մասերը, որ առայժմ միակ մնացորդներն են աշխարհիկ բնակարանների, մեծ հետաքրքրություն են առաջ բերում: Շատ կարևոր կլինեն լրացնել այդ մասը կահավորության իրերով, բայց պեղումների հետևանքները այդ մասին շատ աղքատ են, բացի մի փոքրիկ քարե աթոռից (շատ բնորոշ ժԲ կամ ժԳ դարի համար), որը գտնված է աղքատ թաղամասում, և քանդակավոր փայտյա թախ-

տի խղճուկ մնացորդներից. մկդակված է եղել բամբակյա վերմակով և գորգով ու դուրս է եկել ապարանքում, չի գտնվել ոչինչ. մի գերեզմանում գտնվել է գորգի մի ուրիշ կտոր. նկարներով (ԺԳ դար), անհամեմատ լավ պահպանված:

Հանդերձների մասի վերաբերյալ կարևոր գյուտեր եղել են 1908 թվին. գտնված է մետաքսյա ամբողջ հագուստ ոսկե բանվածքներով ու մետաքսով, և ոսկով նուրբ հյուսված քող. մետաքսյա ժապավենից գոտի և, արդեն մի քանի անգամ հիշված, Հոնենց Տիգրանի ազգական փոքրիկ իշխանատեր մի քանի մանր բաներ: Թե այս գործվածքը և թե նույն Տիգրանի մի ուրիշ ազգականուհու շապկի մասը գարմացնում են իրենց նուրբ բանվածքով: Շատ են պղնձե և արյուրե (բրոնզ) ապարանջանները, նույնպես և օղակներն ու մատանիները. վերջիններիս մեջ մեկը արծաթյա գտնված է Անիի ուրիշ տեղերում պեղումի ժամանակ:

Պատերազմական զգեստի միակ մնացորդն է կաշվե շապիկը, որ քաշված է եղել ոսկու և արծաթի թելերով շատ լավ բանված գրահի վրա: Ձեռքերի առարկաներն էլ շատ չեն: Մի մեծ սուր (ԺԱ-ԺԲ) դարերի եռաժանի տեգ հանգույցներով (նույն ժամանակի), մի քանի նիզակների ծայրեր և 750-ից ավելի սլաքների ծայրեր (հինգ, եթե ոչ ավելի, տեսակ) և, վերջապես, երկու քորոց իրենց գլխով: Պատերազմական տեսակետից հետաքրքրական է 1910 թվին Աշոտի պարսպի մոտ գտնվածը, որը մի նիցակավորի կմախք է. նա ոտքից վիրավորված է եղել երկաթյա զենքով. նրա մահը առաջ է եկել քարե գնդակից, որը փշրել է գանգի կեսը և մնացել մեջը, և ի լրումն այս ամենի՝ զինվորը խաշվել է եռման հեղուկով. Այս երկրորդ գյուտն է Անիում, որ մարդը չի թաղված իր կյանքը կարծող զենքերի հետ: 1908 թ. Միջնաբերդում գտնվել է մի շատ երիտասարդ մարդու (զուցե և կնոջ) գանգ, որի մեջ մնացել է տեգի ծայր, և ճակատի ոսկրի վրա ունի խոր կտրվածք. Հավանական է, որ շատ զենքեր կգտնվեն Սմբատի

պարիսպների տակ, մանավանդ այն աշտարակների, որոնք վաղուց արդեն փուլ են եկած:

Անհուն ամենից շատ գտնվածք անոթների մնացորդներ են, իհարկե, մեծ մասամբ ոչ ամբողջ, այլ խեցատներ: Անիի թանգարանը կարող է պարծենալ իր կավեղենի հավաքածուով: Կան կավեղենի ամեն տեսակները, սովորական կավեղեններից մինչև շքեղ հաղձապակին: Հասարակ կավեամանների մեջ առանձին հետաքրքրական են զարդարուն մեծ կարասները, նկարեն գոտիներով, որոնք ներկայացնում են երկրաչափական գծեր կամ կենցաղային տեսարաններ: 1910 թվին գտնվել է նույնպիսի կարասի վերնամասը գոտեզարդով և գույգ խոշոր առյուծների թափովի, կոպիտ պատկերներով, որոնք միմյանց հանդեպ են գալիս. վերջին հանգամանքը սերտ կապ ունի Կովկասի պղնձյա և արյուրե (բրոնզ) կաթսաների հետ:

Ջարմանալի են հաղձապակյա ամանները իրենց թափանցիկ կողերով և ուռուցիկ ու խոր գծած նկարներով, և ճենապակուց ամանները իրենց հարուստ և բազմազան ոսկեգօծ ու բազմերանգ նկարներով, նույնպես և ուռուցիկ ու ներս ընկած զարդարանքներով (օրնամենտ). դրանք գտնված են թագավորական ապարանքի պեղումներում: Բեկորներից երևում է, որ ամանների մեծագույն մասը թափովի է, դրանք աչքի են ընկնում թափման (որ հինգ տեսակից ավելի է) բարձր կատարելությամբ, նույնպես և գեղարվեստորեն կատարված լինելովն ու ներկերի պայծառությամբ: Գտնված ամանների խեցիների թիվը արդեն մի քանի հազարների է հասնում:

Սովորական ամաններից պետք է առանձին հիշվեն սովորաբար ձվածե ամանները (ժԱ-ժԴ դարեր), որ ունեն շատ նեղ շրթունք և հաստ պատեր, ծածկված բազմազան մանր, ուռուցիկ զարդարանքներով: Շատ հավանական է, որ դրանք արդուզարդի սրվակներ են: Դրանք պատահում են Առաջա-

կոածո շարժական աշտարակներով: ամենից շատ գտնված են արյուրե և պղնձյա խաչեր (ամբողջական և կոտրտված) հասարակ և ավելի բարդ գեղարվեստական, ի միջի այլոց, մասունքի երկու-երեք պահարաններ:

Արժե հիշել դեռ մի քանի առարկաներ էլ, որոնք վերաբերում են քաղաքի առևտրական ու արդյունաբերական կյանքին: Այստեղ կան բազմաթիվ քարե ծանրաչափեր (գիռի), հյուսնության և տնկվածի զանազան գործիքներ և այլն: 1907 թվին գտնվեցին և պղնձյա մանր իրերի ու զարդերի ամբողջ արհեստանոցի մնացորդներ: Վերջին պեղումները նույնպես տվին այս մասին հետաքրքրական նյութեր: Գտնված են պղնձածուլական երկու արհեստանոցների մնացորդներ, քարե զանազան ձևի բովերով, որոնց մեջ կան պղնձի հալվածքի հետքեր: Չուլածո ամանների մի քանի արհեստանոցներ, գույնզգույն զանգվածների համար մի քանի խոշոր կադապարներով: Դայտնաբերվել է աղյուս թափելու գործարան, կիրառության պատրաստի և անպատրաստ առարկաներով ու զանգվածով: Մանավանդ արժեքավոր պետք է համարել քարե գլանակի մասերը, որով տպվում և դրոշմվում էին կապե մեծ կարասների գոտիների նկարազարդերը: Այս հետաքրքրական է մանավանդ նրանով, որ այդ գործիքը անկասկած ճշտում է հայկական ինքնուրույն ամաններ շինելու ձևն ու տեղը, ամանների, որ Անիում մեծ քանակությամբ են գտնում:

Վերջապես Անիի երկրագործ դասը թողել է մեզ մի քանի խոփեր, աղորներ, գերանդիներ և կայսելու կամեր:

Իհարկե այս չափազանց համառոտ տեսության մեջ անհնարին է մեկ առ մեկ հիշել բոլոր առարկաները, որոնցից յուրաքնչուրը ինքնին հետաքրքրական է, դրանցից շատերի մասին ստիպված ենք լռությամբ անցնել:

Բոլոր հիշատակված առարկաները պահպանվում են թանգարանի առաջին մասում, որ զետեղված է Մանուչիի մզ-

կիթում: Երկրորդ բաժանմունքը, որ գտնվում է հատուկ շինության մեջ, բովանդակում է ճարտարապետական մասեր, քանդակավոր քարեր, սրանց մեջ են խաչքարեր, նույնպես և արձանագրություններ: Սանավանդ արձանագրությունները Անիում շատ-շատ են, գլխավորապես հայերենը, կան արաբերեն ու պարսկերեն էլ: Այս ուղղությամբ պեղումները երևան են համել հարուստ նոր նյութեր: Թանգարանում պատվավոր տեղ են բռնում հունարեն արձանագրությունը (պեղ. 1907 և 1908 թվերին), որը հիշվել է և Արու-Սայիդի ընդարձակ արձանագրությունը, (ԺԴ դարի սկզբին, գտնված 1908 թ.), որը մեջ է բերում, ի միջի այլոց, անեցիմների մի քանի հարկերի վերացումը: Պետք է հատկապես հիշել 1910 թվին գտնված թանկագին գյուտը, որ վրացերեն մի մեծ արձանագրություն է: Վերաբերելով Անիի ծաղկյալ ժամանակին (1218 թ.), թեև արդեն ոչ մայրաքաղաքի, այն լուսաբանում է քաղկեդոնական մասի բնակիչների հարաբերությունը հոգևորականության հետ. Անիի քաղկեդոնականության մահին ընդհանրապես դատելու նոր նյութ է տալիս և բնորոշում է տեղական իշխանության նշանակությունը: Վրաց Եպիփան կաթողիկոսի այս հրովարտակի տակ կա տեղական հոգևոր և աշխարհիկ իշխանությունների վավերացումը: Այս արձանագրության գիտական նշանակությունը շատ մեծ է և բազմազան\*:

Թանգարանի երրորդ բաժանմունքի ամենալավ զարդը, որ իր վրա է դարձնում ներս մտնողի ուշադրությունը (ինչպես առաջին բաժնում Գագիկի արձանն է) մեծ սալն է, մի հեծյալի և երկու հետևակների ուռուցիկ քանդակապատկերով. գեղարվեստի մի գերազանց արտադրություն է այս, լի

\*; Տես գրքույկիս վերջում հավելվածը, ուր հայերեն թարգմանությամբ մեջ էն բերված Արու-Սայիդի պարսկերեն և վրաց Եպիփան կաթողիկոսի արձանագրությունները մի քանի հարկավոր ծանոթություններով

ուժով, գեղեցկությամբ, մանավանդ ծիու քանդակում, և պետք է վերագրվի Աճիի կյանքի հնագույն շրջանին Կամսարականների տիրապետության ժամանակին:

Բայց Աճիի պեղումների գլխավոր հետևանքը այս բոլոր գյուտերը, մանր իրերը և քարե հիշատակարանները չեն, այլ այն անվիճելի դրությունն է, որ չի կարելի Աճիի մասին դատել երկրի երեսին գտնված փոքրաթիվ բաներով, այլ պետք է շատ հետազոտել և փորել, որ ներկայացվի Աճին այնպես՝ ինչպես էր նա: Այդ դժվարին գործը գլուխ կհանի Աճիի հնախոսական ինստիտուտը, որը եաստատել է կամենում Գիտությունների Կայսերական ճեմարանը: Այն ժամանակ ոչմասնագետների աչքում էլ կարդարանան խոսքերը, որոնցով ակադեմիկ Ն.Սառը սկսում է իր զեկուցումը Աճիի հնախոսական ինստիտուտի մասին, թե.

«Կովկասի պարծանքը նրա այն զարդերն ու գանձերն են, որոնցով օժտել է նրան ընությունը, նրանցից լավագույններին հավասար Կովկասը կարող է պարծենալ երկնքի մի կուլտուրական պարգևով էլ- Աճիի ավերակներով, հնագիտական պսակի իր այդ խոշոր մարզարիտով»:

## ՀԱՎԵԼՎԱԾ

### ՎՐԱՅ ԵՊԻՓԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ\*

«Աստվածային ծայրն ասում է. «Ձրի առաք, ձրի տվեք» (Մատթ., Ժ.8.). այսինքն, ասում է ձեզ անմահն Աստված. «...այն շնորհի համար, ինչ որ Ինձնից ստացել եք, Ինձ մի բան տվե՛լ եք. եվ դուք դեռ վաճառում եք մեձ շնորհը, մինչդեռ այն ձեզ վաճառված չէ: Եթե ես ձրի եմ տվել, ձեզ էլ վայել չէ աղոթքը ժողովրդին վաճառել: Եվ արդ, Անիի քահանաներ, ձեզ եմ դիմում. (Աստծո) խոսքի համար զայթակողություն մի լինեք. և ունայնի ու անցավորի համար ոտնահար մի անեք առաքելական պատվերները: Օրենքի կատարյալ խախտումն է և ձեր կողմից, պսակի համար հարյուր «դրամ» 1) ստանալը... ով կարողություն ունի, թող կերակրի. այսպես և մեռյալների համար. եթե մի բան հարկավոր է... ավելի հոգու համար հոգս պետք կլինի, այնքան էլ տրվի Թիֆլիսի հարյուրից («դրամ»)... և կերակրի. իսկ բացի դրանից. նայելով կարողությանը, քահանաները կարող են վեր առնել (կերակուրից բաժին): Ամեն տուրք, որ անգոսնելի չէ, թող տրվի քահանաներին: Այս քաղաքում ապրող վրացիներ, (պետք է հիշեք) առաջ դուք ինչպես շատ հարգում էիք նրանց: Քահանաներից պահանջվում է ձեր համար

\* Известия Императорской Академии наук. П.Д. Марра, Надпись Епифания, Католикаса Грузин. (На раскопок в Ани 1910г.) С.П. Бурса, 1910.

աղոթք և ժամուսացություն, մի տրտնջացեք ըստ կարի տուրք տալու նրանց: Ամենից ավելի, ուրախությամբ, առանց ստիպման տվեք, որովհետև Տերը հոժարակամ նվերն է սիրում: Սիրեցեք նրանց, որպես հոգևոր հայրերի, և նրանք էլ թող սիրեն ձեզ, որպես հոգևոր զավակների: Եկեղեցում ժամասացությունից մի թերանաք ոչ դուք (քահանաներդ) և ոչ դուք (աշխարհականներդ), այլ ամենից ավելի պինդ պահեցեք աստվածափն սերը առ միմյանց, և այսպիսով հատուցեք Աստծո պատվերներից ամենացանկալին: Այս գրեցի ես, Եպիփան կաթողիկոսս, իմ ձեռով, երբ օրհնում էի Ամիի եկեղեցիները:

Թիֆլիսի այն հարյուր «դրամը» (օրինակատարության համար) թող մնան, բայց վճարելով մի «դանգ» երեքի տեղ, ինչ վերաբերում է կովի կաշուն, մինչև այժմ դուք (քահանաներ) ամբողջովին էիք վեր առնում, այսուհետև դուք (աշխարհականներ) տվեք նրանց մի շերտ, որ նրանք (ձեր համար) պաշտոն կատարեն: Եվ մենք ինչո՞ւ փոխենք եկեղեցական կանոնները: Ով իմ այս կարգադրությունը փոխի, ոչ... Աստծո և Նրա սրբերի հրամանը: Քրոնիկա 438».

Այս արձանագրությունը վերջանում է հայերեն հետևյալ վավերացումով.

«Թվ. ՈԿԷ, Ես տեր Գրիգոր իր(իցապես Եպի)ս(կո)պոս, Ես Վահարամ ամիրայ քաղաքիս վեպյենք, որ կաթաղիկոսին հրամանք եղ»

ՈԿԷ հայոց թվականը համապատասխանում է Փրկչի 1218 թվականին:

## ԱՔՈՒՍԱԿԻՊԻ ՊԱՐՍԿԵՐԵՆ ՀՐՈՎԱՐՏԱԿԸ

(ԵԱՌԼԻԿ\* 2)

1. «Աստված գիտե իր ծառաների (գաղտնիքը):
2. «Աբու-Աայիդ Բահատուր խան:
3. «Եառլիկ (Հրովարտակ): Ներկայումս երկրի երեսի թագավորի մայրաքաղաքից.
4. «աշխարհի սուլթանի որ փառավորված է երկրավոր աշխարհից և հավատից, և որի թագավորությունը (Աստված) հավիտենական անի,
5. «Երբ արևելքից արևմուտք աշխարհի բնակիչները գտնվում են նրա գթության և արդարադատության հովանու տակ, թող Բարձրյալ Աստված նրա կարգադրություններն ու հրամանները ավելի ևս կտրուկ անի.-
6. «կարգադրությունը այս է: Որովհետև երկրի երեսը հպատակ է նրա հրամանին և դիվանի կարգադրությունը նրա գրչի շարժումից կախում ունի. թող ոչ ոք չհամարձակվի պակասացնել կամ ավելացնել (մի բան).
7. «թող բացի թամդաից 3) և արդարացի հարկերից ուրիշ ոչինչ չառնեն. և ոչ մի մարդուց կալ անի. 4) նեմերի, 5) թարխի, 6) և ուրիշների (հարկերի) պատրվակով ոչինչ չպահանջեն.

\* Ангийская серия № 5. Սնունքների շուրջ - В. Бартольд. Переводская надпись на стене Анжеевой мечети Мангытлы. Петербург - 1911

8. «ինչպես սրանից առաջ Անի քաղաքում և Վրաստանի այլ գավառներում ապորինաբար սահմանված կալան և նեմերի (հարկերի) և թարխի բռնի հարկապահանջության պատճառով,
9. «բռնություն էին առաջ բերում և գործ դնում: (Երկիրը) անապատ դարձավ, հասարակ ժողովուրդը ցիր ու ցան եղավ, քաղաքի և գավառի ավագների կալան և դռնագիր 7, հարկերի պատճառով:
10. «անշարժ կայքերն ու իրենց ընտանիքը թողին ու հեռացան: Գրեցին կարգադրությունը (այսպիսի բովանդակությամբ): Ամենաբարձրյալն Աստված Բարձրագույն հովանին (այսինքն Բարձրագույն պաշտպանությունը) (հպատակների) գլխից (չհեռացնի)...»

Վ. Բարդուղն իր հիշյալ գրքույկի մեջ ասում է. Հրովարտակի վերջը, ուր, հավանորեն, ցույց տրված կլինեն նրա հրատարակվելու իսկական թվականը, արձանագրության մեջ բաց է թողնված: Այդ պատճառով էլ կարելի է դրա մերձավոր թիվը որոշել որպես վերջին կետ ընդունելով Աբու-Սաիդի մահվան օրը, այն է՝ 1335 թ. նոյեմբերի 30-ը: Խանրկովի կարծիքով Աբու-Սաիդը բահատուր տիտղոսը ստացավ 1319 թվին, մայիս-հունիս ամիսներում: Ուրեմն հրովարտակը հրատարակված է 1319-1335 թվերին, հավանորեն, այս ժամանակամիջոցի երկրորդ կեսին:

Այս հրովարտակներից երևում է, որ բնակիչները քայքայված լինելով չափազանց հարկերից և ապօրեն հարկահանություններից լքում էին իրենց ունեցվածքն ու հեռանում:

Ընդհանուր կարծիք է, որ Անին կործանվեց 1319 թվի երկրաշարժից. բայց վաստերը գալիս են ապացուցելու, որ

ԱՆԻՆ համկարծ չի կործանվել, այլ բարեկեցության նվազեցումով հետզհետե ավերակ է դարձել:

Հաճախ պնդում են, ասում է Վ.Բարտոլդը, որ մոնղոլական տիրապետությունը Առաջավոր-Ասիայի համար ավելի կորստաբեր է եղել, քան մեծ գաղթականությունը Եվրոպայի համար: Սակայն չենք տեսնում, որ մոնղոլական արշավանքը Առաջավոր-Ասիայում այնպիսի մեծ և տևական ավերումներ հասցրած լիներ: Կիսավայրենի մոնղոլների արշավանքը սկզբում կարող էր կորստաբեր ազդեցություն ունենալ իրենց նվաճած, բայց քաղաքակրթությանը իրենցից բարձր ազգերի կուլտուրայի վրա, բայց մոնղոլները արագ յուրացնում էին տեղական քաղաքակրթությունը: Այս բանը մենք տեսնում ենք Աբու-Սաիդի հրովարտակից: Ժողովուրդը կոչվում էր ռայեա, պետը թե գյուղում և թե քաղաքում ռայս, այժմ ռես, իսկ ավագները, որ մի քանի հոգի էին լինում քեդխուդա (եր. 42-43): Այս կոչումները այժմ էլ կիրառության մեջ են:

Մոնղոլների տիրապետության ժամանակ Մեծ Հայքի հարկը 39 թոման (292500 ռ) էր: Այդ ժամանակ Մեծ Հայքի մայրաքաղաքը Ալխաթն էր, Վանա ծովի ափին, (եր. 24): Անի-ի թամղան հավանորեն ավելի քիչ էր:

### Օանոթագրություն

*Ղանգ, եառլիկ, թամղա, կալան, կոպչուր, նեմերի, թարխ, դռնագիր, խասինջու* – հիշատակված ժամանակներում բնակչությունից վերցվող հարկերի անվանումներ:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԵՐՈՍԱԿԱՆ ԷԳՈՍԸ .....	3
Նախաբան .....	4
Էպոսի բովանդակությունն ու կերպարները .....	8
Էպոսի պատմական միջուկն ու ձևավորումը.....	39
Էպոսի ժողովրդայնությունը.....	56
«Սասունցի Դավիթը» և մյուս ժողովուրդների էպիկական պոույցներ .....	70
ԳՐՎԱՆ ՀԱՅ ՎԻՄԱԳՐՈՒԹՅԱՆ .....	93
Հայկական միմական արձանագրությունների գիտական նշանակությունը .....	94
ԱՆԻԻ ԱՎԵՐԱԿՆԵՐԸ.....	115
ՀԱՎԵԼՎԱԾ .....	153

ՀՈՎԱՏԵՓ ՕՐԲԵԼԻ

## ՊԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կազմեց  
Խմբագիր  
Էջաղրունջ

ԱՐԳԱՐ ԱՓԻՆՅԱՆ  
ՍԵԹ ԿՈՒՐԱԶՅԱՆ  
ՎԱՐԴԱՆ ՈՒՍԲՐԵՅԱՆԻ

Տպագրվել է «ՏՈՒՆԵՐ» տպագրատունը.

ձախույր 10 տպ-ձամուկ, չափեր 60x84 1/16. Տպաքառուսիք 500 օրինակ

